Ֆինանսական հաշվետվություններ և Անկախ աուդիտորի եզրակացություն

«ՀԱՅԷԿՈՆՈՄԲԱՆԿ» ԲԱՑ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ

31 դեկտեմբերի 2019թ.

Բովանդակություն

Անկախ աուդիտորի եզրակացություն	3
Շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքի մասին հաշվետվություն	8
Ֆինանսական վիճակի մասին հաշվետվություն	10
Սեփական կապիտալում փոփոխությունների մասին հաշվետվություն	12
Դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվություն	14
Ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ	16

Անկախ աուդիտորի եզրակացություն

Գրանթ Թորնթոն ՓԲԸ
ՀՀ, ք.Երևան 0012
Վաղարշյան 8/1

Հ. + 374 10 260 964
Ֆ.+ 374 10 260 961

Grant Thornton CJSC
8/1 Vagharshyan Str.
0012 Yerevan, Armenia

T + 374 10 260 964
F + 374 10 260 961

«ՀԱՅԷԿՈՆՈՄԲԱՆԿ» ԲԱՑ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ բաժնետերերին.

Կարծիք

«ՀԱՅԷԿՈՆՈՄԲԱՆԿ» ԲԱՑ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ (այսուհետ՝ Բանկ) ֆինանսական հաշվետվությունները, որոնք ներառում են 2019թ, դեկտեմբերի 31-ի դրությամբ ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունը, ինչպես նաև այդ ամսաթվին ավարտված տարվա շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքի մասին հաշվետվությունը, սեփական կապիտալում փոփոխությունների մասին հաշվետվությունը և դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվությունը, ինչպես նաև ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրությունները, ներառյալ հաշվապահական հաշվառման քաղաքականության նշանակալի մասերի վերաբերյալ համառոտագիրը:

Մեր կարծիքով՝ կից ֆինանսական հաշվետվությունները տալիս են Բանկի՝ 2019թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ֆինանսական վիճակի և նույն ամսաթվին ավարտված տարվա ֆինանսական արդյունքների ու դրամական հոսքերի ճշմարիտ և իրական պատկերը՝ համաձայն Ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների (ՖՀՄՍ-ներ):

Կարծիքի հիմքեր

Մենք աուդիտն անցկացրել ենք աուդիտի միջազգային ստանդարտներին (ԱՄՍ-ներ) համապատասխան: Այդ ստանդարտներից բխող մեր պատասխանատվությունը լրացուցիչ նկարագրված է մեր եզրակացության՝ *«Աուդիտորի պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համար»* բաժնում: Մենք անկախ ենք Բանկից՝ համաձայն Հաշվապահների էթիկայի միջազգային ստանդարտների խորհրդի կողմից հրապարակված *«Պրոֆեսիոնալ հաշվապահի էթիկայի կանոնագրքի»* (ՀԷՄՍԽ կանոնագիրք) և էթիկայի համապատասխան պահանջների, որոնք կիրառելի են ֆինանսական հաշվետվությունների մեր աուդիտի նկատմամբ Հայաստանի Հանրապետությունում, և կատարել ենք էթիկայի գծով մեր այլ պարտականությունները՝ էթիկայի նշված պահանջների համաձայն: Մենք համոզված ենք, որ մեր կողմից ձեռք բերված աուդիտորական ապացույցները բավարար և համապատասխան հիմք են հանդիսանում մեր կարծիքն արտահայտելու համար:

Աուդիտի առանցքային հարցեր

Աուդիտի առանցքային հարցերն այն հարցերն են, որոնք, մեր մասնագիտական դատողության համաձայն, առավել նշանակալի էին ընթացիկ ժամանակաշրջանի ֆինանսական հաշվետվությունների աուդիտի ընթացքում: Այդ հարցերը դիտարկվել են ֆինանսական

հաշվետվությունների՝ որպես մեկ ամբողջություն, մեր աուդիտի համատեքստում և ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ կարծիք ձևավորելու նպատակով: Մենք այդ հարցերի վերաբերյալ առանձին կարծիք չենք տրամադրում:

Ակնկալվող պարտքային կորուստների գծով պահուստ

Հաշվապահական հաշվառման քաղաքականությունների նկարագրությունը ներկայացված է ֆինանսական հաշվետվությունների ծանոթագրություն 4-ում, իսկ պարտքային ռիսկի վերլուծությունը՝ ծանոթագրություն 37.1-ում:

Ակնկալվող պարտքային կորուստների գծով պահուստի ձևավորումը համարվում է աուդիտի առանցքային հարց՝ հաճախորդներին տրված վարկերի նշանակալի լինելու, ինչպես նաև արժեզրկման գնահատման հիմքում ընկած ենթադրությունների սուբյեկտիվության պատճառով: Տարբեր դատողությունների և ենթադրությունների կիրառումը կարող է հանգեցնել ակնկալվող պարտքային կորուստների գծով պահուստի գնահատման և ձևավորման էականորեն տարբեր արդյունքների, ինչը կարող է էական ազդեցություն ունենալ Բանկի ֆինանսական արդյունքների վրա:

Դատողությունների առանցքային ոլորտները ներառում են ՖՀՄՍ 9-ի կիրառման ժամանակ արժեզրկման որոշման պահանջների մեկնաբանումը, որը արտացոլվում է Բանկի՝ ակնկալվող պարտքային կորուստների մոդելում, վարկի որակի էական վատթարացման հետ կապված բացահայտումները, նաև ակնկալվող պարտքային կորուստների մոդելում օգտագործված ենթադրությունները, ինչպիսիք են երրորդ կողմի ֆինանսական վիճակը, ակնկալվող ապագա դրամական միջոցների հոսքերն ու կանխատեսվող մակրոտնտեսական գործոնները և լրացուցիչ միջոցներ կիրառելու անհրաժեշտությունը՝ արտացոլելու ընթացիկ կամ ապագա արտաքին գործոնները, որոնք պատշաճ կերպով հաշվի չեն առնվել ակնկալվող պարտքային կորուստների մոդելում:

Արժեզրկման մեթոդոլոգիայի հետ կապված իրականացվել են հետևյալ աուդիտորական ընթացակարգերը.

- Ուսումնասիրվել է Բանկի՝ ՖՀՄՍ 9-ի հիման վրա արժեզրկման պահուստի ձևավորման քաղաքականությունը և համեմատվել է ՖՀՄՍ 9-ի պահանջների հետ:
- Գնահատվել է ակնկալվող պարտքային կորուստների գծով պահուստի որոշման ժամանակ օգտագործվող տեղեկատվության նկատմամբ վերահսկողության համապատասխան գործիքների կառուցվածքը և թեստավորվել է դրանց գործառնական արդյունավերությունը՝ ներառյալ վարկի ձևավորման պահին ստացված գործարքային տվյալները, վարկային որակի շարունակական ներքին գնահատումները, ակնկալվող պարտքային կորուստների մոդելի տվյալների և ինտերֆեյսի պահպանումը:
- Գնահատվել է ակնկալվող պարտքային կորուստների մոդելի նկատմամբ վերահսկողության համապատասխան գործիքների կառուցվածքը և թեստավորվել է դրանց գործառնական արդյունավերությունը՝ ներառյալ մոդելի կառուցումը և հաստատումը, շարունակական վերահսկումը/հավաստիացումը, մոդելի կառավարումը և թվաբանական ճշգրտությունը:
- Ստուգվել է Բանկի՝ պարտքային ռիսկի էական աճի որոշման և ռիսկերի հակվածությունը տարբեր փուլերում դասակարգելու հիմնավորվածությունը:
- Ռիսկերի որոշակի ընտրանքի համար ստուգվել է Բանկի փուլավորման ճշտությունը:
- Գնահատվել և թեստավորվել են մոդելավորման էական ենթադրությունները՝ կենտրոնանալով Բանկի կողմից ընդունված մոդելավորման առանցքային

ենթադրությունների վրա, և պահուստների զգայունությունը մոդելավորման ենթադրությունների փոփոխությունների նկատմամբ:

- Բանկի ղեկավարության կողմից ակնկալվող պարտքային կորուստների հաշվարկներում օգտագործված կանխատեսվող ենթադրությունների հետ կապված քննարկումներ են անցկացվել ղեկավարության հետ, որի ընթացքում ենթադրությունները հաստատվել են՝ օգտագործելով հանրամատչելի տեղեկատվությունը:
- Ուսումնասիրվել են ռիսկերի ընտրանքային օրինակներ և իրականացվել ընթացակարգեր՝ վարկային որակի էական վատթարացման ռիսկերի ժամանակին բացահայտելու և անհատապես գնահատված ռիսկերի գծով ակնկալվող կորուստների հաշվարկը գնահատելու նպատակով:
- Արտաքին աղբյուրներից ստացվող տվյալների մասով վերանայվել է նման տվյալների ընտրության գործընթացը, Բանկի համար դրա տեղին լինելը և նման տվյալների նկատմամբ վերահսկողության ու կառավարման մեխանիզմը:
- Մեր SS ոլորտի մասնագետները ներգրավվել են հատուկ փորձառություն պահանջող ոլորտներում (օրինակ՝ տվյալների հուսալիություն և ակնկալվող պարտքային կորուստների մոդել):
- Գնահատվել է ֆինանսական հաշվետվություններում բացահայտումների ճշգրտությունը:

Այլ հանգամանքներ

Բանկի 2018թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ և այս ամսաթվին ավարտված տարվա ֆինանսական հաշվետվությունների աուդիտն իրականացվել է այլ աուդիտորական կազմակերպության կողմից, որի 2019թ. ապրիլի 30-ի եզրակացությունում արտահայտվել է չձևափոխված կարծիք նշված ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ:

Այլ տեղեկատվություն

Ղեկավարությունը պատասխանատու է այլ տեղեկատվության համար: Այլ տեղեկատվությունը բաղկացած է Բանկի՝ 2019թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար տարեկան հաշվետվության մեջ ներկայացված տեղեկատվությունից, սակայն չի ներառում ֆինանսական հաշվետվությունները և դրանց վերաբերյալ աուդիտորական եզրակացությունը: Ակնկալվում է, որ տարեկան հաշվետվությունը մեզ հասանելի կլինի սույն աուդիտորական եզրակացության ամսաթվից հետո:

Ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ մեր կարծիքը չի տարածվում այլ տեղեկատվության վրա, և մենք դրանց վերաբերյալ որևէ ձևի հավաստիացման եզրակացություն չենք արտահայտելու:

Ֆինանսական հաշվետվությունների աուդիտի հետ կապված մեր պարտավորությունն է ծանոթանալ վերը նշված այլ տեղեկատվությանը, երբ այն հասանելի լինի մեզ՝ որոշելու համար, թե արդյոք առկա են էական անհամապատասխանություններ այլ տեղեկատվության և ֆինանսական հաշվետվությունների կամ աուդիտի ընթացքում ձեռք բերված մեր գիտելիքների միջև, կամ արդյոք այլ տեղեկատվությունը պարունակում է այլ էական խեղաթյուրումներ:

Ղեկավարության և կառավարման օղակներում գտնվող անձանց պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների համար

Ղեկավարությունը պատասխանատու է ՖՀՄՍ-ների համաձայն ֆինանսական հաշվետվությունների պատրաստման և ճշմարիտ ներկայացման և այնպիսի ներքին հսկողության համար, որն ըստ ղեկավարության, անհրաժեշտ է խարդախության կամ սխալի

հետևանքով էական խեղաթյուրումներից զերծ ֆինանսական հաշվետվությունների պատրաստումն ապահովելու համար:

Ֆինանսական հաշվետվությունները պատրաստելիս ղեկավարությունը պատասխանատու է Բանկի՝ անընդհատ գործելու կարողությունը գնահատելու համար, համապատասխան դեպքերում անընդհատության հետ կապված հարցերը բացահայտելու և Բանկի գործունեության անընդհատության ենթադրության հիման վրա հաշվետվությունները պատրաստելու համար, բացառությամբ այն դեպքերի, երբ ղեկավարությունը մտադիր է լուծարել Բանկը, ընդհատել դրա գործունեությունը կամ, երբ չունի այդպես չվարվելու որևէ իրատեսական այլընտրանք:

Կառավարման օղակներում գտնվող անձիք պատասխանատու են Բանկի ֆինանսական հաշվետվողականնության գործընթացի վերահսկման համար:

Աուդիտորի պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համար

Մեր նպատակն է ձեռք բերել ողջամիտ հավաստիացում առ այն, որ ֆինանսական հաշվետվությունները բոլոր էական առումներով զերծ են էական խեղաթյուրումներից՝ անկախ դրանց՝ խարդախության կամ սխալի հետևանքով առաջացման հանգամանքից, և ներկայացնել մեր կարծիքը ներառող աուդիտորական եզրակացություն: Ողջամիտ հավաստիացումը բարձր մակարդակի հավաստիացում է, բայց այն չի երաշխավորում, որ ԱՄՍ-ներին համապատասխան իրականացված աուդիտը միշտ կհայտնաբերի էական խեղաթյուրումը, երբ այն առկա է: Խեղաթյուրումները կարող են առաջանալ խարդախության կամ սխալի արդյունքում և համարվում են էական, երբ խելամտորեն կարող է ակնկալվել, որ դրանք առանձին կամ միասին վերցրած կազդեն օգտագործողների՝ այդ ֆինանսական հաշվետվությունների հիման վրա կայացվող տնտեսական որոշումների վրա:

Որպես ԱՄՍ-ներին համապատասխան աուդիտի մաս, աուդիտի ողջ ընթացքում մենք կիրառում ենք մասնագիտական դատողություն և պահպանում ենք մասնագիտական կասկածամտություն: Ի լրումն՝

Որոշակիացնում և գնահատում ենք խարդախության կամ սխալի հետևանքով ֆինանսական հաշվետվությունների էական խեղաթյուրման ռիսկերը, նախագծում և իրականացնում ենք աուդիտորական ընթացակարգեր՝ այդ ռիսկերին արձագանքելու նպատակով, և ձեռք ենք բերում աուդիտորական ապացույցներ, որոնք բավարար ու համապատասխան հիմք են հանդիսանում մեր կարծիքի համար: Խարդախության պատճառով առաջացած էական խեղաթյուրման չհայտնաբերման ռիսկն ավելի բարձր է, քան սխալի հետևանքով էական խեղաթյուրման չհայտնաբերման ռիսկը, քանի որ խարդախությունը կարող է ներառել հանցավոր համաձայնություն, զեղծարարություն, միտումնավոր բացթողումներ, սխալ ներկայացումներ կամ ներքին հսկողության չարաշահում:

Ձեռք ենք բերում պատկերացում աուդիտին վերաբերող ներքին հսկողության մասին՝ տվյալ հանգամանքներին համապատասխան աուդիտորական ընթացակարգեր նախագծելու, այլ ոչ թե Բանկի ներքին հսկողության արդյունավետության վերաբերյալ կարծիք արտահայտելու համար:

Գնահատում ենք հաշվապահական հաշվառման կիրառված քաղաքականության տեղին լինելը, ինչպես նաև ղեկավարության կողմից կատարած հաշվապահական հաշվառման գնահատումների և համապատասխան բացահայտումների ողջամտությունը:

Եզրահանգումներ ենք կատարում ղեկավարության կողմից հաշվապահական հաշվառման անընդհատության հիմունքի կիրառման տեղին լինելու վերաբերյալ և, հիմնվելով ձեռք բերված աուդիտորական ապացույցների վրա, գնահատում ենք՝ արդյոք առկա է դեպքերի կամ հանգամանքների հետ կապված էական անորոշություն, որը կարող է նշանակալի կասկած հարուցել Բանկի անընդհատ գործելու կարողության վերաբերյալ: Եթե մենք եզրահանգում ենք, որ առկա է էական անորոշություն, ապա մեզանից պահանջվում է աուդիտորի

եզրակացությունում ուշադրություն հրավիրել ֆինանսական հաշվետվությունների համապատասխան բացահայտումներին, կամ, եթե այդպիսի բացահայտումները բավարար չեն, ձևափոխել մեր կարծիքը: Մեր եզրահանգումները հիմնված են մինչև մեր եզրակացության ամսաթիվը ձեռք բերված աուդիտորական ապացույցների վրա: Այնուամենայնիվ, ապագա դեպքերը կամ իրավիճակները կարող են ստիպել Բանկին դադարեցնել անընդհատության հիմունքի կիրառումը:

Գնահատում ենք ֆինանսական հաշվետվությունների ընդհանուր ներկայացումը, կառուցվածքը և բովանդակությունը, ներառյալ բացահայտումները, ինչպես նաև ֆինանսական հաշվետվությունների հիմքում ընկած գործարքների ու դեպքերի ճշմարիտ ներկայացումը:

Կառավարման օղակներում գտնվող անձանց, ի թիվս այլ հարցերի, հաղորդակցում ենք աուդիտորական առաջադրանքի պլանավորված շրջանակի և ժամկետների, ինչպես նաև աուդիտի ընթացքում հայտնաբերված նշանակալի հարցերի, ներառյալ ներքին հսկողությանը վերաբերող նշանակալի թերությունների մասին:

Կառավարման օղակներում գտնվող անձանց նաև տրամադրում ենք հայտարարություն, որ մենք պահպանել ենք անկախության վերաբերյալ էթիկայի համապատասխան պահանջները, ինչպես նաև նրանց տեղեկացնում ենք բոլոր հարաբերությունների կամ այլ հարցերի մասին, որոնք, ըստ ողջամիտ ենթադրության, կարող են անդրադառնալ մեր անկախության վրա և, որտեղ կիրառելի է, անկախության պահպանմանն ուղղված միջոցառումների վերաբերյալ:

Կառավարման օղակներում գտնվող անձանց հաղորդակցած հարցերից որոշում ենք այն հարցերը, որոնք համարվել են առավել նշանակալի ընթացիկ ժամանակաշրջանի ֆինանսական հաշվետվությունների աուդիտի ընթացքում, և, հետևաբար, աուդիտի առանցքային հարցեր են: Մենք նկարագրում ենք այդ հարցերը մեր աուդիտորական եզրակացությունում, բացառությամբ այն դեպքերի, երբ օրենքով կամ այլ իրավական ակտերով արգելված է այդպիսի հարցերի հրապարակային բացահայտումը, կամ, երբ խիստ բացառիկ հանգամանքներում մենք որոշում ենք, որ տվյալ հարցը չպետք է ներկայացվի աուդիտորական եզրակացությունում, քանի որ կարող է ողջամտորեն ակնկալվել, որ դրա ներկայացման հետ կապված բացասական հետևանքներն ավելի շատ կլինեն, քան դրա ներկայացմամբ պայմանավորված հանրային օգուտը:

Աուդիտորական առաջադրանքի ղեկավարը, որի արդյունքում ներկայացվում է սույն աուդիտորական եզրակացությունը՝ Արմեն Հովհաննիսյանն է:

Արմեն Հովհաննիսյան

«Գրանթ Թորնթոն» ՓԲԸ-ի տնօրեն/
Առաջադրանքի պատասխանատու

20 մայիսի 2020թ.

Շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքի մասին հաշվետվություն

Հազար ՀՀ դրամ

	Ծանոթ.	2019	2018
Տոկոսային և նմանատիպ եկամուտներ	7	21,254,908	17,664,310
Տոկոսային և նմանատիպ ծախսեր	7	(10,946,133)	(8,922,279)
Զուտ տոկոսային եկամուտ նախկան տոկոսակիր ակտիվների գծով արժեզրկումից կորուստներ		10,308,775	8,742,031
Տոկոսակիր ֆինանսական ակտիվների գծով արժեզրկումից կորուստներ	8	(336,781)	(435,226)
Զուտ տոկոսային եկամուտ		9,971,994	8,306,805
Զուտ օգուտ շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող ֆինանսական ակտիվներից և պարտավորություններից		676,385	169,791
Կոմիսիոն և այլ վճարների տեսքով եկամուտներ	9	2,483,631	2,125,762
Կոմիսիոն և այլ վճարների տեսքով ծախսեր	9	(627,209)	(489,913)
Զուտ արտարժութային եկամուտ	10	758,011	851,058
Զուտ օգուտ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով իրական արժեքով չափվող ֆինանսական ակտիվների ապաճանանչումից		765,247	741,354
Այլ ակտիվների արժեզրկման (ծախս) / հակադարձում	11	(22,855)	18,969
Այլ եկամուտներ	12	302,155	268,002
Զուտ ոչ տոկոսային եկամուտ		4,335,365	3,685,023
Գործառնական եկամուտ		14,307,359	11,991,828
Անձնակազմի գծով ծախսեր		(4,687,563)	(4,144,498)
Հիմնական միջոցների մաշվածություն	22	(1,353,219)	(665,863)
Ոչ նյութական ակտիվների ամորտիզացիա	23	(73,734)	(50,283)
Այլ ծախսեր	13	(3,694,567)	(4,478,468)
Գործառնական ծախսեր		(9,809,083)	(9,339,112)
Շահույթը նախքան շահութահարկումով հարկումը		4,498,276	2,652,716
Շահութահարկի գծով ծախս	14	(1,172,233)	(574,690)
Տարվա շահույթ		3,326,043	2,078,026

Շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվություն (շարունակություն)

Հազար ՀՀ դրամ

		2019թ.	2018թ.
Այլ համապարփակ ֆինանսական արդյունք			
Հոդվածներ, որոնք հետագայում չեն վերադասակարգվում շահույթում կամ վնասում			
Հիմնական միջոցների վերագնահատում		485,717	-
Չվերադասակարգվող հոդվածներին վերաբերող շահութահարկ		(91,222)	4,306
Հարկային դրույքի փոփոխության արդյունքում ճշգրտում		83,620	-
Զուտ օգուտ հոդվածներից, որոնք հետագայում չեն վերադասակարգվում շահույթում կամ վնասում		478,115	4,306
Հոդվածներ, որոնք հետագայում վերադասակարգվելու են շահույթում կամ վնասում			
Իրական արժեքի պահուստի շարժ (պարտքային գործիքներ)			
Իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող պարտքային գործիքների վերագնահատումից օգուտ		1,305,635	368,625
Իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող պարտքային գործիքների վաճառքից շահույթում կամ վնասում վերադասակարգված զուտ գումար		(772,630)	(633,682)
Փոփոխություններ ակնկալվող պարտքային կորուստների պահուստում		(173,887)	18,811
Վերադասակարգվող հոդվածներին վերաբերող շահութահարկ		(28,183)	49,249
Իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող ֆինանսական գործիքների գծով օգուտ		330,935	(196,997)
Ընդամենը տարվա այլ համապարփակ ֆինանսական արդյունք հարկումից հետո		809,050	(192,691)
Ընդամենը տարվա համապարփակ ֆինանսական արդյունք		4,135,093	1,885,335
Մեկ բաժնետոմսին ընկնող շահույթ	15	1.37	1.00

Շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքի մասին հաշվետվությունը պետք է ընթերցվի այս ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը կազմող 16-ից մինչև 105-րդ էջերում ներկայացված կից ծանոթագրությունների հետ մեկտեղ:

Ֆինանսական վիճակի մասին հաշվետվություն

Հազար ՀՀ դրամ	Ծանոթ.	31 դեկտեմբերի 2019թ.	31 դեկտեմբերի 2018թ.
Ակտիվներ			
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	16	44,050,205	38,158,045
Ածանցյալ ֆինանսական ակտիվներ	17	7,522	17,468
Պահանջներ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ	18	14,189,783	13,175,950
Հակադարձ հետգնման պայմանագրեր	19	6,222,111	3,882,703
Հաճախորդներին տրված վարկեր և փոխատվություններ	20	176,106,613	133,629,775
Ներդրումային արժեթղթեր	21		
- Իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող ներդրումային արժեթղթեր		25,027,524	19,752,226
- Ամորտիզացված արժեքով չափվող ներդրումային արժեթղթեր		479,397	-
Հիմնական միջոցներ	22	12,262,246	10,330,854
Ոչ նյութական ակտիվներ	23	525,828	506,593
Այլ ակտիվներ	24	1,811,297	2,243,783
Ընդամենը՝ ակտիվներ		280,682,526	221,697,397
Պարտավորություններ և սեփական կապիտալ			
Պարտավորություններ			
Ածանցյալ ֆինանսական պարտավորություններ	17	9,313	-
Թողարկված պարտքային արժեթղթեր	25	4,452,356	2,060,960
Հետգնման պայմանագրեր	19	25,623,028	20,519,048
Այլ փոխառու միջոցներ	26	91,923,477	64,200,798
Պարտավորություններ հաճախորդների նկատմամբ	27	113,366,878	95,828,768
Ընթացիկ հարկի գծով պարտավորություն		390,244	273,836
Հետաձգված հարկային պարտավորություն	14	922,445	849,982
Ստորադաս փոխառություններ	28	719,787	3,382,149
Այլ պարտավորություններ	29	3,817,289	1,568,539
Ընդամենը՝ պարտավորություններ		241,224,817	188,684,080

Ֆինանսական վիճակի մասին հաշվետվություն (շարունակություն)

Հազար ՀՀ դրամ		31 դեկտեմբերի, 2019թ.	31 դեկտեմբերի, 2018թ.
Սեփական կապիտալ			
Բաժնետիրական կապիտալ	30	25,635,343	22,266,343
Գլխավոր պահուստ		3,105,000	3,000,000
Իրական արժեքի պահուստ		1,832,155	1,501,220
Այլ պահուստներ		3,409,549	3,055,334
Չբաշխված շահույթ		5,475,662	3,190,420
Ընդամենը՝ սեփական կապիտալ		39,457,709	33,013,317
Ընդամենը՝ պարտավորություններ և սեփական կապիտալ		280,682,526	221,697,397

Ֆինանսական հաշվետվությունները հաստատվել են 2020թ. մայիսի 20-ին՝

Արմեն Խաչատրյան
Գործադիր տնօրեն

Միքայել Պողոսյան
Գլխավոր հաշվապահ

Ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունը պետք է ընթերցվի այս ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը կազմող 16-ից մինչև 105-րդ էջերում ներկայացված կից ծանոթագրությունների հետ մեկտեղ:

Սեփական կապիտալում փոփոխությունների մասին հաշվետվություն

Հազար ՀՀ դրամ

	Բաժնե-տիրական կապիտալ	Գլխավոր պահուստ	Իրական արժեքի պահուստ	Հիմնական միջոցների վերագնա-հատման պահուստ	Չբաշխված շահույթ	Ընդամենը
Հաշվեկշիռը 2018թ. Դեկտեմբերի 31-ի դրությամբ	22,266,343	3,000,000	1,501,220	3,055,334	3,190,420	33,013,317
Տարվա շահույթ	-	-	-	-	3,326,043	3,326,043
Այլ համապարփակ ֆինանսական արդյունք						
Հիմնական միջոցների վերագնահատում	-	-	-	485,717	-	485,717
Հիմնական միջոցների մաշվածությունից կամ օտարումից պահուստի ճշգրտում	-	-	-	(123,900)	123,900	-
Իրական արժեքի զուտ փոփոխություն տարվա ընթացքում	-	-	1,305,635	-	-	1,305,635
Իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող պարտքային գործիքների վաճառքից շահույթում կամ վնասում վերադասակարգված զուտ գումար	-	-	(772,630)	-	-	(772,630)
Փոփոխություններ ակնկալվող պարտքային կորուստների պահուստում	-	-	(173,887)	-	-	(173,887)
Այլ համապարփակ ֆինանսական արդյունքին վերաբերող բաղկացուցիչ մասի շահութահարկ	-	-	(71,824)	(91,222)	-	(163,046)
Հարկային դրույքի փոփոխության արդյունքում ճշգրտում	-	-	43,641	83,620	-	127,261
Ընդամենը տարվա համապարփակ ֆինանսական արդյունք	-	-	330,935	354,215	3,449,943	4,135,093
Արտոնյալ բաժնետոմսերի թողարկում	3,369,000	-	-	-	-	3,369,000
Հատկացում պահուստին	-	105,000	-	-	(105,000)	-
Շահաբաժիններ բաժնետերերին	-	-	-	-	(1,059,701)	(1,059,701)
Ընդամենը սեփականատերերի հետ գործարքներ	3,369,000	105,000	-	-	(1,164,701)	2,309,299
Հաշվեկշիռը 2019թ. Դեկտեմբերի 31-ի դրությամբ	25,635,343	3,105,000	1,832,155	3,409,549	5,475,662	39,457,709

Սեփական կապիտալում փոփոխությունների մասին հաշվետվություն (շարունակություն)

Հազար ՀՀ դրամ

	Բաժնե-տիրական կապիտալ	Էմիսիոն եկամուտ	Գլխավոր պահուստ	Իրական արժեքի պահուստ	Հիմնական միջոցների վերագնա-հատման պահուստ	Չբաշխված շահույթ	Ընդամենը
Հաշվեկշիռը 2017թ. Դեկտեմբերի 31-ի դրությամբ	13,708,745	33,438	6,000,000	1,531,277	3,157,777	4,597,371	29,028,608
ՖՀՄՍ 9-ի ներդրման ազդեցությունը (ծանոթ. 6)	-	-	-	166,940	-	(557,248)	(390,308)
Վերահաշվարկված հաշվեկշիռը 2018թ. Հունվարի 1-ի դրությամբ	13,708,745	33,438	6,000,000	1,698,217	3,157,777	4,040,123	28,638,300
Տարվա շահույթ	-	-	-	-	-	2,078,026	2,078,026
Այլ համապարփակ ֆինանսական արդյունք							
Հիմնական միջոցների մաշվածությունից պահուստի ճշգրտում	-	-	-	-	(106,749)	106,749	-
Իրական արժեքի զուտ փոփոխություն տարվա ընթացքում	-	-	-	368,625	-	-	368,625
Իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող պարտքային գործիքների վաճառքից շահույթում կամ վնասում վերադասակարգված զուտ գումար	-	-	-	(633,682)	-	-	(633,682)
Փոփոխություններ ակնկալվող պարտքային կորուստների պահուստում	-	-	-	18,811	-	-	18,811
Այլ համապարփակ ֆինանսական արդյունքին վերաբերող բաղկացուցիչ մասի շահութահարկ	-	-	-	49,249	4,306	-	53,555
Ընդամենը տարվա համապարփակ ֆինանսական արդյունք	-	-	-	(196,997)	(102,443)	2,184,775	1,885,335
Արտոնյալ բաժնետոմսերի	3,000,000	-	-	-	-	-	3,000,000
Շահաբաժիններ բաժնետերերին	-	-	-	-	-	(510,318)	(510,318)
Բաժնետոմսերի անվանական արժեքի մեծացում	5,557,598	(33,438)	(3,000,000)	-	-	(2,524,160)	-
Ընդամենը սեփականատերերի հետ գործարքներ	8,557,598	(33,438)	(3,000,000)	-	-	(3,034,478)	2,489,682
Հաշվեկշիռը 2018թ. Դեկտեմբերի 31-ի դրությամբ	22,266,343	-	3,000,000	1,501,220	3,055,334	3,190,420	33,013,317

Սեփական կապիտալում փոփոխությունների մասին հաշվետվությունը պետք է ընթերցվի այս ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը կազմող 16-ից մինչև 105-րդ էջերում ներկայացված կից ծանոթագրությունների հետ մեկտեղ:

Դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվություն

Հազար ՀՀ դրամ

	2019	2018
Գործառնական գործունեությունից դրամական միջոցների հոսքեր		
Շահույթը նախքան հարկումը	4,498,276	2,652,716
Ճշգրտումներ		
Մաշվածության մասհանումներ	1,353,219	665,863
Ամորտիզացիոն մասհանումներ	73,734	50,283
Հիմնական միջոցների օտարումից (օգուտ) /վնաս	(5,057)	19,421
Ֆինանսական ակտիվների արժեզրկման ծախս	359,636	416,257
Նախկինում դուրս գրված վարկերի վերականգնում	(24,938)	(738,080)
Արտարժույթի փոխարկումից զուտ վնաս	347,491	38,625
Զուտ օգուտ շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող ֆինանսական ակտիվներից և պարտավորություններից	(676,385)	(169,791)
Զուտ օգուտ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով իրական արժեքով չափվող ֆինանսական ակտիվների ապաճանանչումից	(765,247)	(741,354)
Ստացվելիք տոկոսներ	(264,324)	(69,570)
Վճարվելիք տոկոսներ *(ներառել ՖՀՄՍ 16-ով տոկոսային ծախսը)*	399,442	808,808
Այլ եկամուտ	-	(8,536)
Դրամական միջոցների հոսքեր նախքան գործառնական ակտիվներում և պարտավորություններում փոփոխությունները	5,295,847	2,924,642
(Ավելացում)/նվազում գործառնական ակտիվներում		
Աճանցյալ ֆինանսական ակտիվներ	695,644	160,444
Պահանջներ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ	(1,098,335)	(343,308)
Հակադարձ հետգնման պայմանագրեր	(2,341,684)	414,226
Հաճախորդներին տրված վարկեր և փոխատվություններ	(43,469,640)	(29,768,126)
Այլ ակտիվներ	561,445	(141,364)
Ավելացում գործառնական պարտավորություններում		
Հետգնման պայմանագրեր	5,110,728	6,839
Պարտավորություններ հաճախորդների նկատմամբ	17,538,661	4,388,904
Այլ պարտավորություններ	165,112	333,498
Զուտ դրամական միջոցների հոսքեր գործառնական գործունեության համար օգտագործված մինչև շահութահարկը	(17,542,222)	(22,024,245)
Վճարված շահութահարկ	(1,019,147)	(768,985)
Գործառնական գործունեության համար օգտագործված զուտ դրամական միջոցներ	(18,561,369)	(22,793,230)

Դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվություն (շարունակություն)

Հազար ՀՀ դրամ	2019թ.	2018թ.
Ներդրումային գործունեությունից դրամական միջոցների հոսքեր		
Ներդրումային արժեթղթերի առք	(43,010,110)	(5,512,227)
Ներդրումային արժեթղթերի վաճառք	38,664,277	7,902,154
Հիմնական միջոցների առք	(1,206,878)	(2,091,328)
Հիմնական միջոցների վաճառք	357,284	379,887
Ոչ նյութական ակտիվների առք	(92,969)	(235,758)
Ներդրումային գործունեությունից զուտ դրամական միջոցների հոսքեր	(5,288,396)	442,728
Ֆինանսական գործունեությունից դրամական միջոցների հոսքեր		
Արտոնայլ բաժնետոմսերի թողարկում	3,369,000	3,000,000
Կանխավճար բաժնետոմսերի թողարկման համար	500,500	-
Այլ փոխառու միջոցներ	27,765,238	24,307,678
Թողարկած պարտքային արժեթղթերից մուտքեր	4,027,458	999,557
Թողարկած պարտքային արժեթղթերից ելքեր	(1,594,443)	-
Վարձակալության գծով պարտավորությունների մարում	(521,466)	-
Ստորադաս փոխառության ստացում	719,787	-
Ստորադաս փոխառության մարում	(3,375,206)	(3,000,701)
Վճարված շահաբաժիններ	(909,505)	(379,731)
Ֆինանսական գործունեությունից ստացված զուտ դրամական միջոցներ	29,981,363	24,926,803
Դրամական միջոցների և դրանց համարժեքների զուտ աճ	6,131,598	2,576,301
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ ժամանակաշրջանի սկզբի դրությամբ	38,158,045	35,824,831
Ակնկալվող պարտքային կորուստների ազդեցությունը	8,331	(36,362)
Արտարժույթի փոխարկման ազդեցությունը դրամական միջոցների և դրանց համարժեքների վրա	(247,769)	(206,725)
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ ժամանակաշրջանի վերջի դրությամբ (ծանոթ. 16)	44,050,205	38,158,045
Լրացուցիչ տեղեկատվություն		
Ստացված տոկոսներ	20,990,584	18,473,118
Վճարված տոկոսներ	(10,381,066)	(8,113,471)

Դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվությունը պետք է ընթերցվի այս ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը կազմող 16-ից մինչև 105-րդ էջերում ներկայացված կից ծանոթագրությունների հետ մեկտեղ:

Ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ

1 Գործունեության բնույթը և ընդհանուր տեղեկություններ

«ՀԱՅԷԿՈՆՈՄԲԱՆԿ» ԲԲԸ (այսուհետ՝ Բանկ) հիմնվել է 1991 թվականին ԽՍՀՄ Բնակսոցբանկի հայկական Հանրապետական բանկի (1991-1993թ. «Հայպետառբանկ» ՓԲԸ) հիման վրա և 1995թ. Վերակազմավորվել է որպես բաց բաժնետիրական ընկերության՝ գործելով Հայաստանի Հանրապետության (այսուհետ՝ ՀՀ) օրենսդրության շրջանակներում: Բանկը գրանցվել է ՀՀ կենտրոնական բանկի (այսուհետ՝ ՀՀ ԿԲ) կողմից N 1 արտոնագրային համարով:

Բանկի հիմնական գործունեությունը վարկավորում և ավանդների ընդունումն է, (ՀՀ-ում և արտերկրներ փոխանցումների և փոխարկման գործարքների իրականացումը), ինչպես նաև իրավաբանական և ֆիզիկական անձանց արտարժութային և այլ բանկային ծառայությունների մատուցումը:

2018թ. հունիսի 26-ին «Մուդիս Ինվեսթորս Սերվիս» միջազգային գործակալությունը հաստատել է Բանկի երկարաժամկետ գործընկերոջ ռիսկի՝ B1, երկարաժամկետ/կարճաժամկետ ավանդի վարկանիշ՝ B2/NP վարկանիշները: Բոլոր վարկանիշների գծով կանխատեսումը կայուն է:

2019թ. սեպտեմբերի 3-ին «Մուդիս Ինվեսթորս Սերվիս» միջազգային գործակալությունը հաստատել է Բանկի երկարաժամկետ գործընկերոջ ռիսկի՝ Ba3, երկարաժամկետ/կարճաժամկետ ավանդի վարկանիշ՝ B1/NP վարկանիշները: Բոլոր վարկանիշների գծով կանխատեսումը կայուն է:

Բանկն ունի 52 մասնաճյուղ, որոնց միջոցով իրականացնում է իր գործունեությունը: Բանկի իրավաբանական հասցեն է՝ ք.Երևան, Ամիրյան 23/1:

2 Գործարար միջավայր

Հայաստանում իրականացվող քաղաքական և տնտեսական փոփոխությունները, ինչպես նաև իրավական, հարկային և օրենսդրական համակարգերի զարգացումը շարունակական բնույթ են կրում: Հայաստանի տնտեսության կայունությունը և զարգացումը մեծապես կախված է այս փոփոխություններից: Կառավարությունը հաստատել է արդյունավետ կառավարման իր հանձնառությունը, որը ենթադրում է հակակոռուպցիոն ջանքեր, թափանցիկություն և հաշվետվողականություն: Շարունակելով 2018թ. Գրանցված աճի համոզիչ տեմպը՝ 2019թ. Տարեկան տնտեսական աճը մնացել է կայուն: Տնտեսության մեջ առանցքային դեր են ունեցել առևտրի, ծառայությունների և արդյունաբերության ոլորտները:

Բանկի ղեկավարությունը գտնում է, որ ընթացիկ պայմաններում իրականացվում են համապատասխան միջոցառումներ Բանկի տնտեսական կայունությունն ապահովելու նպատակով:

3 Հաշվետվությունների պատրաստման հիմունքները

3.1 Համապատասխանությունը

Սույն ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են համաձայն Ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների (ՖՀՄՍ), որոնք հաստատվել են

Հաշվապահական Հաշվառման Միջազգային Ստանդարտների Խորհրդի (ՀՀՄՍԽ) կողմից և Մեկնաբանությունների՝ հաստատված Ֆինանսական Հաշվետվությունների Մեկնաբանությունների Միջազգային Կոմիտեի կողմից (ՖՀՄՄԿ):

Բանկը պատրաստում է իր հաշվետվությունները ՀՀ գործող օրենսդրության և հաշվապահական հաշվառման միջազգային ստանդարտների պահանջներին համապատասխան: Սույն ֆինանսական հաշվետվությունները հիմնված են Բանկի հաշվառման գրանցումների վրա, որոնք ճշգրտվել և վերադասակարգվել են ՖՀՄՍ-ին համապատասխանեցնելու նպատակով:

3.2 Չափման հիմունքները

Ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են իրական արժեքի սկզբունքի հիման վրա իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող և իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող ֆինանսական գործիքների համար: Այլ ֆինանսական ակտիվներն ու պարտավորությունները հաշվառվում են ամորտիզացված արժեքով, իսկ ոչ ֆինանսական ակտիվներն ու պարտավորությունները՝ պատմական արժեքով բացառությամբ, հողի, շինությունների, որոնք ներկայացվել են վերագնահատված գումարով:

3.3 Գործառնական և ներկայացման արժույթ

Բանկի գործառնական արժույթն այն հիմնական տնտեսական միջավայրի արժույթն է, որտեղ գործում է Բանկը: Բանկի գործառնական և ներկայացման արժույթ է հանդիսանում Հայաստանի Հանրապետության դրամը (այսուհետ՝ ՀՀ դրամ), քանի որ այս արժույթն է լավագույն կերպով արտացոլում ֆինանսական հաշվետվությունների հիմքում ընկած իրադարձությունների և Բանկի գործարքների տնտեսական բովանդակությունը: Ֆինանսական հաշվետվությունները ներկայացված են ՀՀ դրամով՝ հազարների ճշտությամբ, եթե այլ բան նշված չէ: ՀՀ սահմաններից դուրս դրամը ազատ փոխարկելի չէ:

3.4 Հաշվապահական հաշվառման քաղաքականության և ներկայացման փոփոխություններ

Ընթացիկ տարում Բանկն առաջին անգամ կիրառել է որոշ ստանդարտներ և փոփոխություններ, որոնք կիրառելի են 2019թ. հունվարի 1-ից կամ դրանից հետո սկսվող ժամանակաշրջանների համար: Բանկը վաղաժամկետ չի ընդունել որևէ այլ ստանդարտ, մեկնաբանություն կամ փոփոխություն, որոնք ուժի մեջ են մտել, բայց դեռ կիրառելի չեն:

ՖՀՄՍ 16 *«Վարձակալություններ»*

ՖՀՄՍ 16-ը *«Վարձակալություններ» փոխարինում է* ՀՀՄՍ 17-ը *«Վարձակալություն»*, առկա երեք մեկնաբանությունների հետ մեկտեղ (ՖՀՄՍՄԿ Մեկնաբանություն 4 *«Համաձայնություններում վարձակալության առկայության որոշում»*, ՄՄԿ 15 *«Գործառնական վարձակալություն. Խրախուսող պայմաններ»* և ՄՄԿ 27 *«Վարձակալության իրավական ձև ներառող գործարքների բովանդակության գնահատումը»*):

Այս նոր ստանդարտի կիրառումը հանգեցրել է նրան, որ Բանկն իր բոլոր նախկին գործառնական վարձակալությունների համար ճանաչել է օգտագործման իրավունքի ձևով ակտիվ և վարձակալության գծով պարտավորություն, բացառությամբ այն վարձակալությունների, որոնք որոշակիացված են որպես փոքրարժեք ակտիվի վարձակալություն կամ ստանդարտի սկզբնական կիրառման պահին 12 ամսից կարճ վարձակալական ժամկետ ունեցող վարձակալություն:

Նոր ստանդարտը կիրառվել է՝ օգտագործելով ձևափոխված հետընթաց մոտեցումը՝ ՖՀՄՍ 16-ի կիրառման միասնական ազդեցությունը ճանաչելով սեփական կապիտալում որպես կուտակված արդյունքի սկզբնական մնացորդի ճշգրտում ընթացիկ ժամանակաշրջանում: Նախորդ

ժամանակաշրջանները չեն վերաներկայացվել: Բացի այդ, ՖՀՄՍ 16-ում բացահայտման պահանջները հիմնականում չեն կիրառվել համադրելի տեղեկատվության համար:

Ստանդարտի սկզբնական կիրառման ամսաթվի դրությամբ առկա պայմանագրերի համար Բանկն ընտրել է ՀՀՄՍ 17-ի և ՖՀՄՍՄԿ Մեկնաբանություն 4-ի համաձայն վարձակալության սահմանման օգտագործումը և չի կիրառել ՖՀՄՍ 16-ը նախկինում ՀՀՄՍ 17-ի և ՖՀՄՍՄԿ Մեկնաբանություն 4-ի համաձայն վարձակալություն չճանաչված համաձայնությունների նկատմամբ:

ՖՀՄՍ 16-ի սկզբնական կիրառման ամսաթվի՝ այն է 2019թ. հունվարի 1-ի դրությամբ առկա գործառնական վարձակալությունների համար Բանկն ընտրել է սկզբնավորման ուղղակի ծախսումները չներառել օգտագործման իրավունքի ձևով ակտիվի չափման մեջ: Այդ ամսաթվին Բանկը նաև ընտրել է օգտագործման իրավունքի ձևով ակտիվները չափել անցման օրվա դրությամբ առկա վարձակալական պարտավորությանը հավասար գումարով՝ ճշգրտված բոլոր կանխավճարների կամ հաշվեգրված վարձակալական վճարների չափով:

Ելնելով վերը նշվածից՝ 2019թ. հունվարի 1-ի դրությամբ.

- 1,875,205 հազար դրամի օգտագործման իրավունքի ձևով ակտիվները ճանաչվել և ներկայացվել են ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում՝ «Հիմնական միջոցներ» տողում:
- 1,875,205 հազար դրամի լրացուցիչ վարձակալության գծով պարտավորությունները («Այլ պարտավորություններում» ներառված) ճանաչվել են:
- ՖՀՄՍ 16-ի ընդունումը որևէ ազդեցություն չի ունեցել Ընկերության չբաշխված շահույթի վրա:

Հետևյալ աղյուսակում արտացոլված է 2018թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ գործառնական վարձակալության գծով պարտավորությունների համադրումը 2019թ. հունվարի 1-ի դրությամբ ճանաչված վարձակալության գծով պարտավորությունների հետ.

Հազար ՀՀ դրամ

2018թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ բացահայտված վարձակալության գծով պարտավորություններ	2,873,951
Ճանաչումից ազատումներ.	
• Վարձակալություն 12 ամսից կարճ ժամկետով	(13,172)
Գործառնական վարձակալության գծով պարտավորությունները մինչև զեղչումը	2,860,779
Զեղչումը՝ օգտագործելով լրացուցիչ փոխառության միջին կշռված դրույքը	(985,574)
2019թ. հունվարի 1-ի դրությամբ բացահայտված վարձակալության գծով պարտավորություններ	1,875,205

Սկզբնական կիրառման անսաթվին օգտագործման իրավունքի ձևով ակտիվների արժեզրկման ստուգում կատարելու փոխարեն, Բանկը հիմնվել է պատմական գնահատման վրա՝ արդյոք վարձակալություններն անբարենպաստ են, թե ոչ, անմիջապես նախքան ՖՀՄՍ 16-ի սկզբնական կիրառման ամսաթիվը:

Այն վարձակալությունների համար, որոնք նախկինում հաշվառվել են որպես գործառնական վարձակալություններ, և որոնց մնացորդային ժամկետը 12 ամսից պակաս է, նաև փոքրարժեք վարձակալությունների համար, անցման ժամանակ Բանկը կիրառել է օգտագործման

իրավունքի ձևով ակտիվներ չճանաչելու, այլ վարձակալական ծախսը վարձակալության մնացորդային ժամկետի ընթացքում գծային հիմունքով հաշվառելու այլընտրանքը:

ՖՀՄՍ 16-ին անցնելիս վարձակալության գծով պարտավորության նկատմամբ կիրառված լրացուցիչ փոխառության միջին կշռված դրույքը կազմում է 10.25%:

Վարձակալությունը երկարաձգելու կամ դադարեցնելու այլընտրանքները դիտարկելիս Բանկն օգտվել է հետադարձ ամսաթվով դատողություններ կիրառելու հնարավորությունից՝ վարձակալության ժամկետը որոշելու համար:

Ներքոհիշյալ այլ ստանդարտներն ու փոփոխությունները, որոնք առաջին անգամ կիրառվել են 2019թ-ին, որևէ էական ազդեցություն չեն ունեցել Բանկի տարեկան ֆինանսական հաշվետվությունների վրա:

- ՖՀՄՍ 9 (Փոփոխություններ) *«Ֆինանսական գործիքներ» կանխավճարների առանձնահատկությունները՝ բացասական փոխհատուցմամբ»*,
- ՀՀՄՍ 28 (Փոփոխություններ) «*Երկարաժամկետ ներդրումներ ասոցիացված կազմակերպություններում և համատեղ ձեռնարկումներում»*,
- ՖՀՄՍՄԿ Մեկնաբանություն 23 *«Շահութահարկով հարկման մոտեցումների վերաբերյալ անորոշություն»*,
- ՀՀՄՍ 19 (Փոփոխություններ) *«Պլանի փոփոխություն, դադարեցում կամ ներդրում»*, 2015-2017թթ. ՖՀՄՍ-ների տարեկան բարեփոխումներ-(ուժի մեջ է մտնում 2019թ. հունվարի 1-ից):

3.5 Բանկի կողմից դեռևս չկիրառվող ստանդարտներ և մեկնաբանություններ

Սույն ֆինանսական հաշվետվությունների հաստատման օրվա դրությամբ լույս են տեսել մի շարք նոր ստանդարտներ, գործող ստանդարտների վերաբերյալ փոփոխություններ և մեկնաբանություններ, որոնք դեռևս ուժի մեջ չեն մտել: Բանկը վաղաժամկետ չի ընդունել այդ ստանդարտներից և մեկնաբանություններից որևէ մեկը:

Ղեկավարությունը կանխատեսում է, որ կիրառելի նոր ստանդարտներն ու մեկնաբանությունները կընդունվեն Բանկի կողմից՝ դրանց ուժի մեջ մտնելու օրվան հաջորդող առաջիկա ժամանակաշրջանում:

Ղեկավարության կանխատեսմամբ այս փոփոխությունները էական ազդեցություն չեն ունենա Բանկի ֆինանսական հաշվետվությունների վրա և ներկայացված են ստորև:

- Ֆինանսական հաշվետվությունների հայեցակարգային հիմունքները,
- «Ձեռնարկատիրական գործունեության միավորումներ» (ՖՀՄՍ 3 փոփոխություններ),
- «Էականության սահմանումը» (ՀՀՄՍ 1 և ՀՀՄՍ 8 փոփոխություններ)

  «Ուղենշային տոկոսադրույքի բարեփոխում» (ՖՀՄՍ 9 և ՖՀՄՍ 7 փոփոխություններ):

4 Հաշվապահական հաշվառման քաղաքականություն

Ներկայացվող հաշվապահական քաղաքականությունը կիրառվել է ֆինանսական հաշվետվությունների պատրաստման ընթացքում: Հաշվապահական քաղաքականությունը կիրառվել է հետևողականորեն:

4.1 Եկամուտների և ծախսերի ճանաչում

Եկամուտը ճանաչվում է այն դեպքում, երբ հավանական է, որ տնտեսական օգուտները կհոսեն Բանկ և ստացված եկամուտը կարելի է արժանահավատորեն չափել: Ծախսը ճանաչվում է այն ժամանակ, երբ հավանական է, որ տնտեսական օգուտները կարտահոսեն Բանկից և ծախսը

կարելի է արժանահավատորեն չափել: Ստորև ներկայացվող չափանիշները նույնպես պետք է հաշվի առնվեն մինչև եկամուտի ճանաչումը:

Արդյունավետ տոկոսադրույքի մեթոդ

Տոկոսային եկամուտը և ծախսը ճանաչվում են շահույթում կամ վնասում՝ կիրառելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը: Արդյունավետ տոկոսադրույքն այն դրույքն է, որը ֆինանսական գործիքի գործողության ակնկալվող ժամկետի համար գնահատված դրամական միջոցների ապագա վճարումները կամ ստացվելիք գումարները զեղչում է ճշգրիտ մինչև՝

- ֆինանսական ակտիվի համախառն հաշվեկշռային արժեքը կամ
- ֆինանսական պարտավորության ամորտիզացված արժեքը:

Ֆինանսական գործիքների, բացառությամբ գնված կամ սկզբնավորված պարտքային առումով արժեզրկված ակտիվների, արդյունավետ տոկոսադրույքը հաշվարկելիս Բանկը գնահատում է ապագա դրամական միջոցների հոսքերը՝ հաշվի առնելով ֆինանսական գործիքի բոլոր պայմանագրային պայմանները, սակայն առանց հաշվի առնելու սպասվող պարտքային վնասը: Գնված կամ սկզբնավորված պարտքային առումով արժեզրկված ֆինանսական ակտիվների համար հաշվարկվում է պարքային ռիսկով ճշգրտված արդյունավետ տոկոսադրույք՝ կիրառելով ապագա դրամական միջոցների հոսքերը՝ ներառյալ սպասվող պարտքային վնասը:

Արդյունավետ տոկոսադրույքի հաշվարկը ներառում է գործարքի հետ կապված ծախսումները և վճարված կամ ստացված բոլոր այն գումարները, որոնք կազմում են արդյունավետ տոկոսադրույքի բաղկացուցիչ մասը: Գործարքի հետ կապված ծախսումները ներառում են այն լրացուցիչ ծախսումները, որոնք ուղղակիորեն վերագրելի են ֆինանսական ակտիվի կամ ֆինանսական պարտավորության ձեռքբերմանը կամ թողարկմանը:

Ամորտիզացված արժեք և համախառն հաշվեկշռային արժեք

Ֆինանսական ակտիվի կամ ֆինանսական պարտավորության ամորտիզացված արժեքն այն գումարն է, որով ֆինանսական ակտիվը կամ ֆինանսական պարտավորությունը չափվում է սկզբնական ճանաչման պահին՝ հանած հիմնական գումարի մարումները, գումարած կամ հանած սկզբնական գումարի և մարման գումարի տարբերության գծով կուտակված ամորտիզացիան՝ հաշվարկված արդյունավետ տոկոսադրույքի մեթոդով, և ֆինանսական ակտիվների համար՝ ճշգրտված սպասվող պարտքային վնասի գծով պահուստի մասով: Ամորտիզացված արժեքով չափվող ֆինանսական ակտիվի համախառն հաշվեկշռային արժեքն իրենից ներկայացնում է ֆինանսական ակտիվի ամորտիզացված արժեքը՝ նախքան սպասվող պարտքային վնասի գծով պահուստի մասով ճշգրտումը:

Տոկոսային եկամուտների և ծախսերի հաշվարկ

Տոկոսային եկամտի և ծախսերի հաշվարկում արդյունավետ տոկոսադրույքը կիրառվում է ակտիվի համախառն հաշվեկշռային արժեքի (եթե ակտիվը արժեզրկված չէ) կամ պարտավորության ամորտիզացված արժեքի նկատմամբ:

Այնուամենայնիվ, սկզբնական ճանաչումից հետո արժեզրկված ֆինանսական ակտիվների համար տոկոսային եկամուտը հաշվարկվում է՝ կիրառելով արդյունավետ տոկոսադրույք ֆինանսական ակտիվի զուտ ամորտիզացված արժեքի նկատմամբ: Եթե ակտիվը այլևս արժեզրկված չէ, ապա տոկոսային եկամուտը հաշվարկվում է համախառն հիմունքով:

Սկզբնական ճանաչման ժամանակ արժեզրկված ֆինանսական ակտիվների գծով տոկոսային եկամուտը հաշվարկվում է՝ ճշգրտված արդյունավետ տոկոսադրույքը կիրառելով ակտիվի ամորտիզացված արժեքի նկատմամբ: Տոկոսային եկամուտը չի հաշվարկվում համախառն հիմունքով, նույնիսկ եթե ակտիվի պարտքային ռիսկը բարելավվում է:

Ֆինանսական ակտիվների արժեզրկման վերաբերյալ տեղեկատվությունը տես 4.4.6 ծանոթագրությունում:

Կոմիսիոն և այլ եկամուտներ և ծախսեր

Վարկերի տրամադրման համար գանձվող վճարները (համապատասխան ծախսերի հետ միասին) հետաձգվում են՝ ճշգրտելով տվյալ վարկի արդյունավետ տոկոսադրույքը: Վարձավճարները, այլ եկամուտները և ծախսերը հիմնականում ճանաչվում են հաշվեգրման սկզբունքով ծառայությունների մատուցման ընթացքում: Ներդրումային պորտֆելի, այլ կառավարչական և խորհրդատվական ծառայությունների գծով վճարները ճանաչվում են պայմանագրային պայմաններին համապատասխան: Ակտիվների կառավարման գծով վճարները ճանաչվում են ծառայությունների մատուցման ժամանակաշրջանում: Նույն սկզբունքն է կիրառվում կարողությունների կառավարման, ֆինանսական պլանավորման և ակտիվների պահպանման ծառայությունների դեպքում, որոնք ենթադրում են ծառայությունների մատուցման երկար ժամկետ:

Շահաբաժիններից եկամուտ

Եկամուտը ճանաչվում է, երբ Բանկի՝ վճարը ստանալու իրավունքը հաստատված է:

Զուտ առևտրային եկամուտ

Զուտ առևտրային եկամուտը ներառում է առևտրային նպատակներով պահվող ֆինանսական ակտիվների և պարտավորությունների իրական արժեքի փոփոխությունից իրացված և չիրացված եկամուտը և ծախսը, տոկոսներից, շահաբաժիններից և արտարժութային տարբերություններից գոյացող բոլոր եկամուտները և ծախսերը: Զուտ առևտրային եկամուտը ներառում է նաև արտարժույթի առք ու վաճառքից զուտ եկամուտը կամ ծախսը և ճանաչվում է շահույթում կամ վնասում երբ համապատասխան ծառայությունն արդեն մատուցված է:

4.2 Արտարժույթ

Արտարժույթով կատարված գործարքները վերահաշվարկվում են գործառնական արժույթով՝ գործարքի օրվա փոխարժեքով: Արտարժույթով արտահայտված առևտրային նպատակներով պահվող ակտիվների և պարտավորությունների փոխարկումից առաջացած օգուտը և վնասը ճանաչվում են շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքի մասին հաշվետվության զուտ առևտրային եկամուտ հոդվածում, մինչդեռ ոչ առևտրային ակտիվների փոխարկումից գոյացող օգուտը և վնասը ճանաչվում են շահույթի կամ վնասի մասին հաշվետվության այլ եկամուտ կամ այլ ծախս հոդվածում: Արտարժույթով արտահայտված դրամային ակտիվները և պարտավորությունները փոխարկվում են գործառնական արժույթով կիրառելով հաշվապահական հաշվեկշռի ամսաթվի դրությամբ գործող փոխարժեքը:

Արտարժույթով արտահայտված դրամային արժեթղթերի (որպես իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով ներդրումային արժեթղթեր դասակարգվող իրական արժեքում փոփոխությունները վերլուծվում են փոխարժեքային տարբերություններ միջև, որոնք առաջանում են արժեթղթերի ամորտիզացված գումարների փոփոխության և արժեթղթերի հաշվեկշռային արժեքի այլ փոփոխությունների արդյունքում: Ամորտիզացված գումարում փոփոխությունների հետ կապված փոխարժեքային տարբերությունները ճանաչվում են շահույթում կամ վնասում, իսկ հաշվեկշռային արժեքում այլ փոփոխությունները ճանաչվում են սեփական կապիտալում:

Պատմական արժեքով հաշվառվող ոչ դրամային արտարժութային հոդվածները վերահաշվարկվում են գործարքի օրվա փոխարժեքով: Իրական արժեքով հաշվառվող ոչ դրամային արտարժութային հոդվածները վերահաշվարկվում են իրական արժեքի որոշման օրվա փոխարժեքով: Ոչ դրամային հոդվածների, ինչպիսին են ֆինանսական արդյունքներով ճշգրտվող՝ իրական արժեքով պահվող բաժնետոմսեր, փոխարժեքային տարբերությունները,

ներկայացվում են որպես իրական արժեքի փոփոխությունից շահույթի կամ վնասի մաս: Ոչ դրամային հոդվածների փոխարժեքային տարբերությունները, ինչպես օրինակ՝ բաժնային գործիքներ դասակարգված բաժնետոմսերինը, որոնց համար ընտրությունը կատարվել է այլ համապարփակ ֆինանսական արդյունքում իրական արժեքի հետագա փոփոխությունները ներկայացնելու տարբերակը, ընդգրկվում են կապիտալում՝ իրական արժեքի փոփոխությունների պահուստում:

Յուրաքանչյուր գործառնության պայմանագրով նախատեսված փոխարժեքի և տվյալ գործառնության օրվա գործող փոխարժեքի տարբերությունից առաջացող օգուտը կամ վնասը հաշվառվում է շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքի մասին հաշվետվության զուտ առևտրային եկամուտ հոդվածի արտարժույթի առք ու վաճառքից զուտ եկամուտ տողում:

Բանկի կողմից ֆինանսական հաշվետվությունների պատրաստման նպատակով օգտագործվել են հետևյալ փոխարժեքները.

	2019թ. Դեկտեմբերի 31	2018թ. Դեկտեմբերի 31
ՀՀ դրամ/1 ԱՄՆ դոլար	479.70	483.75
ՀՀ դրամ/1 Եվրո	537.26	553.65
ՀՀ դրամ/1 ՌՈՒԲ	7.77	6.97

4.3 Հարկում

Շահույթի գծով հաշվետու տարվա շահութահարկը բաղկացած է ընթացիկ և հետաձգված հարկերից: Շահութահարկը ճանաչվում է շահույթում կամ վնասում, բացառությամբ այն հարկերի, որոնց գծով գործառնությունների արդյունքները ճանաչվել են սեփական կապիտալում, ինչի դեպքում հարկերը նույնպես ճանաչվում են սեփական կապիտալում:

Ընթացիկ հարկը տարվա համար հարկվող եկամուտից վճարվելիք հարկն է՝ հաշվապահական հաշվեկշռի ամսաթվին գործող հարկային դրույքներով, ինչպես նաև նախորդ տարիների համար վճարված հարկերի ճշգրտումները: Այն դեպքում, երբ ֆինանսական հաշվետվություններն արտոնված են ներկայացման համար մինչ համապատասխան հարկային հաշվետվությունների ներկայացնելը, ապա հարկվող շահույթը կամ վնասը հիմնված է մոտավոր թվերի վրա: Հարկային մարմինները կարող են ունենալ ավելի խիստ մոտեցում հարկային օրենսդրությունը մեկնաբանելիս և հարկային հաշվարկները ստուգելիս: Որպես արդյունք, հարկային մարմինները կարող են պահանջել լրացուցիչ հարկերի մուծում այն գործարքների գծով, որոնց համար նախկինում պահանջ չի ներկայացվել: Հետևաբար, կարող են առաջանալ նշանակալի լրացուցիչ հարկեր, տույժեր և տուգանքներ: Հարկային ստուգումը կարող է ներառել ստուգման տարվան անմիջապես նախորդող 3 օրացուցային տարիներ: Որոշ հանգամանքներում հարկային ստուգումը կարող է ներառել ավելի երկար ժամանակաշրջաններ:

Հետաձգված հարկերը հաշվարկվում են հաշվապահական հաշվեկշռի պարտավորությունների մեթոդի համաձայն, որը հաշվի է առնում բոլոր ժամանակային տարբերությունները, որոնք առաջանում են ֆինանսական հաշվետվություններում ճանաչված ակտիվների և պարտավորությունների հաշվեկշռային գումարների և հարկային նպատակներով հաշվարկվող գումարների միջև, բացառությամբ այն դեպքերի, երբ այդ տարբերություններն առաջացել են գուդվիլի նախնական ճանաչման ժամանակ կամ կազմակերպությունների միավորում չհանդիսացող գործառնություններից առաջացող ակտիվների կամ պարտավորությունների դեպքում և ինչը առաջացման պահին չի ազդում ոչ հաշվապահական, և ոչ էլ հարկման նպատակով հաշվարկվող շահույթի վրա:

Հետաձգված հարկային ակտիվ ճանաչվում է միայն այն չափով, որքանով հավանական է, որ ապագայում առկա կլինի հարկման ենթակա շահույթ, որի հաշվին կարող են օգտագործվել ժամանակավոր տարբերությունները: Հետաձգված հարկային ակտիվները և պարտավորությունները հաշվարկվում են այն հարկային դրույքով, որը ենթադրվում է, որ կգործի ակտիվների իրացման և պարտավորությունների մարման ժամանակ՝ հիմնվելով տվյալ ժամանակաշրջանի կամ հաշվետու ժամանակաշրջանի փաստացի գործող դրույքների վրա:

Հետաձգված հարկային ակտիվներ և պարտավորություններ առաջանում են նաև այն ժամանակավոր տարբերությունների գծով, որոնք առաջանում են դուստր, ասոցիացված կամ համատեղ կազմակերպություններում ներդրումներից, բացի այն դեպքերից, երբ ժամանակավոր տարբերությունների իրացման ժամկետները կառավարվում են մայր կազմակերպության կողմից, և հավանական է, որ դրանք մոտ ապագայում չեն իրացվի:

ՀՀ-ում բանկերն իրենց գործունեության ընթացքում վճարում են նաև այլ հարկեր: Այդ հարկերը ներառված են շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքի մասին հաշվետվության «Այլ ծախսեր» հոդվածում:

4.4 Ֆինանսական գործիքներ

4.4.1 Ճանաչում և սկզբնական չափում

Բանկն սկզբնապես ճանաչում է վարկերը և փոխատվությունները, ավանդները, թողարկված պարտքային արժեթղթերը և ստորադաս պարտավորությունները դրանց ստեղծման օրվա դրությամբ: Բոլոր այլ ֆինանսական գործիքները (ներառյալ ֆինանսական ակտիվների կանոնավոր գնումները և վաճառքները) ճանաչվում են գործարքի օրվա դրությամբ, որը Բանկի՝ գործիքի պայմանագրային կողմ դառնալու ամսաթիվն է:

Ֆինանսական ակտիվի կամ պարտավորության սկզբնական չափումը տեղի է ունենում իրական արժեքով: Շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող ֆինանսական գործիքների խմբում չդասակարգված ֆինանսական ակտիվների կամ պարտավորությունների դեպքում իրական արժեքին գումարվում են գործարքի հետ կապված ծախսումները, որոնք ուղղակիորեն վերագրելի են դրանց ձեռքբերմանը կամ թողարկմանը:

4.4.2 Դասակարգում

Ֆինանսական ակտիվներ

Սկզբնական ճանաչման դեպքում ֆինանսական ակտիվը ունի երեք հիմնական դասակարգում՝ ամորտիզացված արժեքով չափվող, իրական արժեքով՝ այլ համապարփակ եկամտի միջոցով չափվող (FVOCI) և իրական արժեքով՝ շահույթի և վնասի միջոցով չափվող (FVTPL):

Ֆինանսական ակտիվը չափվում է ամորտիզացված արժեքով, եթե միաժամանակ բավարարում է ստորև ներկայացված երկու պայմաններին և չի նախանշվում որպես իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող՝

- ակտիվը պահվում է բիզնես մոդելի շրջանակում, որի նպատակը պայմանագրային դրամական միջոցների հոսքերի հավաքագրումն է, և
- ֆինանսական ակտիվի պայմանագրային դրույթները որոշակի ժամկետներում հանգեցնում են դրամական միջոցների հոսքերի, որոնք բացառապես մայր գումարի և չմարված մայր գումարի գծով տոկոսագումարների վճարումներն են:

Ֆինանսական ակտիվը չափվում է իրական արժեքով այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով, եթե այն բավարարում է ստորև ներկայացված երկու պայմաններին և չի նախանշվում որպես իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող.

- այն պահվում է այնպիսի բիզնես մոդելի շրջանակում, որի նպատակն է թե՛ պայմանագրային դրամական միջոցների հոսքերի հավաքագրումը և թե՛ ֆինանսական ակտիվի վաճառքը և
- ֆինանսական ակտիվի պայմանագրային դրույթները որոշակի ժամկետներում հանգեցնում են դրամական միջոցների հոսքերի, որոնք բացառապես մայր գումարի և չմարված մայր գումարի գծով տոկոսագումարների վճարումներն են:

Առևտրային նպատակներով չպահվող բաժնային գործիքներում կատարվող ներդրումների սկզբնական ճանաչման ժամանակ Բանկը կարող է անշրջելիորեն որոշել ներկայացնել իրական արժեքի հետագա փոփոխություններն այլ համապարփակ ֆինանսական արդյունքի կազմում: Այս ընտրությունը կատարվում է առանձին յուրաքանչյուր ներդրման համար:

Բոլոր այլ ֆինանսական ակտիվները դասակարգվում են որպես իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող:

Բացի այդ, սկզբնական ճանաչման պահին Բանկը կարող է անշրջելիորեն նախորոշել ֆինանսական ակտիվը, որը համապատասխանում է ամորտիզացված արժեքով կամ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով իրական արժեքով չափվելու պահանջներին, որպես շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող, եթե դա թույլ կտա վերացնել կամ էականորեն նվազեցնել հաշվապահական հաշվառման անհամապատասխանությունը, որը կառաջանար այլ պարագայում:

Բիզնես մոդելի գնահատում

Բանկը պորտֆելի մակարդակում գնահատում է բիզնես մոդելի նպատակը, որի շրջանակում պահվում է ակտիվը, քանզի այս գնահատումը լավագույնս արտացոլում է բիզնեսի կառավարման և ղեկավարությանը տեղեկատվության տրամադրման եղանակը: Դիտարկվող տեղեկատվությունը ներառում է.

- պորտֆելի համար սահմանված քաղաքականությունը ու նպատակները և այդ քաղաքականության գործնական կիրառությունը: Մասնավորապես, արդյոք ղեկավարության ռազմավարությունը ուղղված է պայմանագրով նախատեսված տոկոսային եկամուտ ստացմանը, տոկոսադրույքների որոշակի կառուցվածքի պահպանմանը, ֆինանսական ակտիվների գործողության ժամկետների համապատասխանեցմանն այն պարտավորությունների գործողության ժամկետներին, որոնք ֆինանսավորում են այդ ակտիվները, կամ դրամական միջոցների իրացմանն ակտիվների վաճառքի միջոցով,
- ինչպես է գնահատվում պորտֆելի եկամտաբերությունը և ինչպես է այդ տեղեկատվությունը ներկայացվում Բանկի ղեկավարությանը.
- բիզնես մոդելի և դրա շրջանակում պահվող ֆինանսական ակտիվների արդյունավետության վրա ազդող ռիսկերը և այդ ռիսկերի կառավարման եղանակը,
- ինչպես են վարձատրվում ղեկավարները, օրինակ՝ արդյոք վարձատրությունը կախված է կառավարվող ակտիվների իրական արժեքից կամ պայմանագրային հավաքագրված դրամական միջոցների հոսքերից,
- նախորդ ժամանակաշրջաններում վաճառքների հաճախականությունը, ծավալը և ժամկետները, այդ վաճառքների պատճառները և հետագա վաճառքների վերաբերյալ ակնկալիքները: Այնուամենայնիվ, վաճառքների գծով գործունեության մասին տեղեկատվությունը դիտարկվում է ոչ թե առանձին հիմունքով, այլ որպես ընդհանուր գնահատման մաս, թե ինչպես է Բանկը հասնում ֆինանսական ակտիվները կառավարելու համար սահմանված նպատակին և ինչպես են դրամական հոսքերը ձևավորվում:

Պայմանագրային դրամական հոսքերի բնութագրի գնահատում – միայն մայր գումարի և չմարված մայր գումարի վրա հաշվարկված տոկոսի վճարումներ (SPPI test)

Այս գնահատման նպատակով «մայր գումար» է սահմանվում ֆինանսական ակտիվի իրական արժեքը սկզբնական ճանաչման պահին: «Տոկոսը» կազմված է փողի ժամանակային արժեքի և պարտքային ռիսկի փոխհատուցումից, այլ ռիսկերի և ֆինանսական ակտիվի պահպանման հետ կապված ծախսերի փոխհատուցումից (օրինակ՝ իրացվելիության ռիսկ և վարչական ծախսեր), ինչպես նաև շահույթի մարժայից: Գնահատելու համար՝ արդյոք պայմանագրային դրամական միջոցների հոսքերը միայն մայր գումարի և չմարված մայր գումարի վրա հաշվարկված տոկոսի վճարումներ են, Բանկը հաշվի է առնում գործիքի պայմանագրային պայմանները: Սա ներառում է նաև այն գնահատումը՝ արդյոք ֆինանսական ակտիվը ներառում է այնպիսի պայմանագրային պայման, որը կարող է փոխել պայմանագրային դրամական միջոցների հոսքերի գումարը և ժամկետն այնպես, որ ֆինանսական ակտիվը չի բավարարի այդ պայմանը:

Գնահատման ժամանակ Բանկը դիտարկում է.

- պայմանական դեպքեր, որոնք կարող են փոխել դրամական միջոցների հոսքերի գումարը և ժամկետը,
- լծակավորման առանձնահատկությունները,
- վաղաժամկետ մարման և երկարաձգման հնարավորությունը,
- պայմանները, որոնք սահմանափակում են որոշակի ակտիվների նկատմամբ Բանկի պահանջը (օրինակ՝ առանց ռեգրեսի պահանջի իրավունքի ակտիվների պայմանավորվածություններ) և
- առանձնահատկությունները, որոնք փոխում են դրամի ժամանակային արժեքը, օրինակ, տոկոսադրույքների պարբերական վերանայումը:

Վերադասակարգումներ

Ֆինանսական ակտիվները չեն վերադասակարգվում սկզբնական ճանաչումից հետո, բացառությամբ այն ժամանակաշրջանի, երբ Բանկը փոխում է իր բիզնես մոդելը ֆինանսական ակտիվների կառավարման նպատակով: Ֆինանսական պարտավորությունները երբեք չեն վերադասակարգվում:

Ֆինանսական պարտավորություններ

Բանկը դասակարգում է իր ֆինանսական պարտավորությունները որպես ամորտիզացված արժեքով կամ իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող:

4.4.3 Ապաճանաչում

Ֆինանսական ակտիվներ

Բանկը ապաճանաչում է ֆինանսական ակտիվը, երբ այդ ֆինանսական ակտիվից առաջացող դրամական միջոցների հոսքերի նկատմամբ պայմանագրային իրավունքները կորցնում են իրենց ուժը (տես նաև ծանոթագրություն 4.4.4) կամ երբ փոխանցում է պայմանագրային դրամական միջոցների հոսքերի ստանալու իրավունքը այնպիսի գործարքով, որով ֆինանսական ակտիվի սեփականության հետ կապված բոլոր ռիսկերն ու օգուտները փոխանցվում են կամ երբ չեն փոխանցվում սեփականության բոլոր ռիսկերն ու օգուտները, և դա չի պահպանում ֆինանսական ակտիվի նկատմամբ հսկողությունը:

Ֆինանսական ակտիվի ապաճանաչման դեպքում ակտիվի հաշվեկշռային արժեքի (կամ ապաճանաչված ակտիվի մասի վրա տարածվող հաշվեկշռային արժեքի) և (i)ստացված

փոխհատուցման գումարի տարբերությունը (ներառյալ ցանկացած նոր ակտիվ հանած ցանկացած նոր պարտավորություն) և (ii) այլ համապարփակ ֆինանսական արդյունքում ճանաչված ցանկացած կուտակված օգուտը կամ վնասը ճանաչվում են շահույթում կամ վնասում:

Իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող ներդրումային բաժնային արժեթղթերի գծով այլ համապարփակ ֆինանսական արդյունքում ճանաչված ցանկացած կուտակային օգուտ/վնաս չի ճանաչվում շահույթում կամ վնասում այդ արժեթղթերի ապաճանաչման դեպքում: Մասնակցությունն ապաճանաչման պայմաններին բավարարող փոխանցված ֆինանսական ակտիվներում, որն առաջանում է կամ պահպանվում է Բանկի կողմից, ճանաչվում է որպես առանձին ակտիվ կամ պարտավորություն:

Բանկը գործարքներ է կնքում, որոնց համաձայն՝ փոխանցում է իր ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում ճանաչված ակտիվները, սակայն պահում է փոխանցված ակտիվների կա՛մ բոլոր, կա՛մ գրեթե բոլոր ռիսկերն ու օգուտները, կա՛մ դրանց մի մասը: Նման դեպքերում փոխանցված ակտիվները չեն ապաճանաչվում: Այսպիսի գործարքների օրինակներ են արժեթղթերի՝ որպես փոխառության տրամադրման և վաճառքի ու հետգնման գործարքները:

Եթե ակտիվները վաճառվում են երրորդ կողմին համանման գնով հետգնման սվոպով, գործարքը հաշվառվում է որպես գրավով ապահովված ֆինանսավորման գործարք, որը նման է վաճառքի և հետգնման գործարքներին, քանի որ Բանկը պահպանում է նմանատիպ ակտիվի սեփականության հետ կապված բոլոր ռիսկերն ու օգուտները:

Գործարքներում, որոնցում Բանկը չի պահպանում և չի փոխանցում ֆինանսական ակտիվի սեփականության հետ կապված բոլոր ռիսկերն ու օգուտները և պահպանում է ակտիվի նկատմամբ վերահսկողությունը, շարունակում է ճանաչել ֆինանսական ակտիվը այնքանով, որքանով շարունակվում է իր ներգրավվածությունը ֆինանսական ակտիվի մեջ, որն այն չափն է, որով այն ենթարկված է փոխանցված ակտիվի արժեքի փոփոխությունների ազդեցությանը:

Որոշ գործարքներում Բանկը պահպանում է փոխանցված ֆինանսական ակտիվը վճարի դիմաց սպասարկելու պարտավորությունը: Փոխանցված ակտիվը ապաճանաչվում է, եթե բավարարում է ապաճանաչման չափանիշներին: Ակտիվը կամ պարտավորությունը ճանաչվում են սպասարկման պայմանագրով, եթե սպասարկման վճարը ավելին է (ակտիվ) կամ պակաս (պարտավորություն), քան պասարկման դիմաց բավարար չափով հատուցումը:

Ֆինանսական պարտավորություններ

Բանկը ապաճանաչում է ֆինանսական պարտավորությունը երբ, նրա պայմանագրային պարտավորությունները չեն կատարվում կամ չեղյալ են համարվում, կամ ժամկետը լրանում է:

4.4.4 Ֆինանսական ակտիվների և պարտավորությունների փոփոխություն

Ֆինանսական ակտիվներ

Եթե ֆինանսական ակտիվի պայմանները փոփոխվում են, Բանկը գնահատում է՝ արդյոք փոփոխված ակտիվի դրամական միջոցների հոսքերը էականորեն են տարբերվում: Եթե դրամական միջոցների հոսքերը էականորեն են տարբերվում, ապա սկզբնական ֆինանսական ակտիվից դրամական հոսքերի պայմանագրային իրավունքները համարվում են առոչինչ: Այս դեպքում սկզբնական ֆինանսական ակտիվը ապաճանաչվում է (տես 4.4.3 ծանոթագրություն), իսկ նոր ֆինանսական ակտիվը ճանաչվում է իրական արժեքով:

Եթե փոփոխված ակտիվի ամորտիզացված արժեքով դրամական հոսքերը էականորեն չեն տարբերվում, ապա փոփոխությունը չի հանգեցնում ֆինանսական ակտիվի ապաճանաչման: Այս դեպքում Բանկը վերահաշվարկում է ֆինանսական ակտիվի համախառն հաշվեկշռային արժեքը և համախառն հաշվեկշռային արժեքի ճշգրտման արդյունքում առաջացած գումարը

ճանաչում է որպես փոփոխությունից օգուտ կամ վնաս շահույթում կամ վնասում: Եթե նմանատիպ փոփոխությունը կատարվում է վարկառուի ֆինանսական դժվարությունների պատճառով (տես 4.4.6 ծանոթագրություն), ապա օգուտը կամ վնասը ներկայացվում է արժեզրկումից կորուստների հետ միասին: Այլ դեպքերում՝ այն ներկայացվում է որպես տոկոսային եկամուտ:

Ֆինանսական պարտավորություններ

Բանկը ապաճանաչում է ֆինանսական պարտավորությունը, երբ վերջինիս պայմանները փոփոխվել են և փոփոխված պարտավորության դրամական միջոցների հոսքերը, ըստ էության, տարբեր են: Այս դեպքում փոփոխված պայմաններով հիմնավորված նոր ֆինանսական պարտավորությունը ճանաչվում է իրական արժեքով: Մարված ֆինանսական պարտավորության հաշվեկշռային արժեքի և փոփոխված պայմաններով նոր ֆինանսական պարտավորության միջև տարբերությունը ճանաչվում է շահույթում կամ վնասում:

4.4.5 Հաշվանցում

Ֆինանսական ակտիվները և պարտավորությունները, եկամուտներն ու ծախսերը ֆինանսական հաշվետվություններում հաշվանցվում են և ներկայացվում են զուտ արժեքով, եթե գոյություն ունի օրենսդրորեն հաստատված իրավունք իրականացնելու հաշվառված գումարների հաշվանցում, ինչպես նաև մտադրություն ներկայացնելու այն զտման սկզբունքով կամ միաժամանակ իրացնելու ակտիվը և մարելու պարտավորությունը:

Եկամուտները և ծախսերը ներկայացվում են զուտ արժեքի հիման վրա, միայն երբ դա թույլատրվում է համաձայն ՖՀՄՍ-ների, կամ մի խումբ համանման գործարքներից բխող օգուտի և վնասի դեպքում, օրինակ՝ Բանկի առևտրային գործունեության ընթացքում:

4.4.6 Արժեզրկում

Բանկը կանխատեսումների հիման վրա գնահատում է ակնկալվող պարտքային կորուստները («ECL») հետևյալ ֆինանսական գործիքների նկատմամբ, որոնք չեն չափվում իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով.

- ֆինանսական ակտիվներ, որոնք չափվում են ամորտիզացված արժեքով
- իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող ֆինանսական ակտիվներ
- վարձակալության գծով դեբիտորական պարտքեր
- վարկերի տրամադրման պարտավորվածություններ
- ֆինանսական երաշխավորության պայմանագրեր

Բաժնային ֆինանսական գործիքների համար արժեզրկում չի հաշվարկվում:

Բանկը չափում է կորուստների գծով պահուստները ֆինանսական գործիքի գործողության ամբողջ ժամանակահատվածի ընթացքում ակնկալվող պարտքային կորուստներին հավասար գումարի չափով, բացառությամբ ստորև նշված գործիքների, որոնց համար Բանկը պետք է հաշվարկի ֆինանսական գործիքի ակնկալվող պարտքային կորուստների պահուստը այն գումարի չափով, որը հավասար է 12-ամսյա ակնկալվող պարտքային կորուստներին.

- հաշվետու ամսաթվի դրությամբ դեֆոլտի ցածր ռիսկով պարտքային ներդրումային արժեթղթեր,
- այլ ֆինանսական գործիքներ, որոնց գծով պարտքային ռիսկը սկզբնական ճանաչումից հետո էականորեն չի աճել:

Բանկը համարում է, որ պարտքային արժեթղթերը ունեն ցածր պարտքային ռիսկ այն դեպքում, երբ վեջինիս պարտքային ռիսկի վարկանիշը համապատասխանում է համընդհանուր ընդունված «ներդրումային» վարկանիշի սահմանմանը:

12-ամսյա ակնկալվող պարտքային կորուստները ակնկալվող պարտքային կորուստների մի մասն են, որոնք պայմանավորված են հաշվետու ամսաթվից հետո 12 ամսվա ընթացքում տեղի ունեցող դեֆոլտ առաջացնող իրադարձություններով:

Գործողության ամբողջ ժամանակահատվածի ընթացքում ակնկալվող պարտքային կորուստները ակնկալվող պարտքային կորուստներ են, որոնք առաջանում են ֆինանսական գործիքի գործողության ամբողջ ժամանակահատվածի ընթացքում դեֆոլտի բոլոր հնարավոր դեպքերի հետևանքով:

Ակնկալվող պարտքային կորուստների չափում

Ե՛վ գործողության ամբողջ ժամանակահատվածի ընթացքում ակնկալվող պարտքային կորուստները, և՛ 12-ամսյա ակնկալվող պարտքային կորուստները հաշվարկվում են կա՛մ անհատական, կա՛մ խմբային հիմունքներով՝ կախված ֆինանսական գործիքների հիմքում ընկած պորտֆելի բնույթից:

Բանկը մշակել է քաղաքականություն, որը թույլ է տալիս յուրաքանչյուր հաշվետու ժամանակաշրջանի վերջի դրությամբ գնահատել՝ արդյոք ֆինանսական գործիքի պարտքային ռիսկը էականորեն է աճել սկզբնական ճանաչումից հետո՝ հաշվի առնելով ֆինանսական գործիքի մնացած գործողության ժամկետի ընթացքում առաջացած դեֆոլտի ռիսկի փոփոխությունը: Ավելի մանրամասն բացատրվում է 37.1.2 ծանոթագրությունում:

Վերոնշյալի հիման վրա՝ Բանկը դասակարգում է իր ֆինանսական գործիքները փուլ 1, փուլ 2, փուլ 3 և գնված կամ սկզբնավորված պարտքային առումով արժեզրկված խմբերում, ինչպես նկարագրված է ստորև՝

- Փուլ 1 – երբ վարկերը ճանաչվում են առաջին անգամ, Բանկը ճանաչում է պահուստը 12-ամսյա ակնկալվող պարտքային կորուստների հիման վրա: Փուլ 1-ում դասակարգված վարկերը նաև ներառում են մնացորդներ, որոնցում պարտքային ռիսկը բարելավվել է և վարկը վերադասակարգվել է փուլ 2-ից:
- Փուլ 2 – երբ վարկը ստեղծման պահից ունեցել է պարտքային ռիսկի էական աճ, Բանկը ձևավորում է գործողության ամբողջ ժամանակահատվածի ընթացքում ակնկալվող պարտքային կորուստների պահուստ: Փուլ 2-ում դասակարգված վարկերը նաև ներառում են մնացորդներ, որոնցում պարտքային ռիսկը բարելավվել է և վարկը վերադասակարգվել է փուլ 3-ից:
- Փուլ 3 – արժեզրկված վարկեր: Բանկը ձևավորում է գործողության ամբողջ ժամանակահատվածի ընթացքում ակնկալվող պարտքային կորուստների պահուստ:
- Գնված կամ սկզբնավորված պարտքային առումով արժեզրկված ակտիվների խումբ – գնված կամ սկզբնավորված պարտքային առումով արժեզրկված ակտիվներն սկզբնական ճանաչման պահին արժեզրկված ֆինանսական ակտիվներ են: Գնված կամ սկզբնավորված պարտքային առումով արժեզրկված ակտիվները հաշվարկվում են իրական արժեքով սկզբնական ճանաչման պահին, իսկ տոկոսային եկամուտը, ըստ էության, ճանաչվում է պարտքային ռիսկով ճշգրտված արդյունավետ տոկոսադրույքով: Ակնկալվող պարտքային կորուստները ճանաչվում են այն չափով, որքանով առկա է ակնկալվող պարտքային կորուստների հետագա փոփոխություն:

Ակնկալվող պարտքային կորուստները դեֆոլտի հավանականության, դեֆոլտի դեպքում ռիսկի տակ գտնվող գումարի, դեֆոլտի ժամանակ վնասի զեղչված արդյունք են, որոնք սահմանվում են հետևյալ կերպ.

Դեֆոլտի հավանականություն (PD): Այն տվյալ ժամանակահավածում դեֆոլտի հավանականության գնահատումն է: Դեֆոլտ կարող է տեղի ունենալ գնահատված ժամանակաշրջանի միայն որոշակի ժամանակահատվածում, եթե պարտականությունը նախկինում չի ապաճանաչվել և շարունակում է մնալ պորտֆելում:

Դեֆոլտի դեպքում ռիսկի տակ գտնվող գումար (EAD): Այն ներկայացնում է դեֆոլտի ապագա ամսաթվի դրությամբ ռիսկի ենթարկված գումարի չափի գնահատումը՝ հաշվի առնելով հաշվետու ամսաթվից հետո ռիսկի գումարի ակնկալվող փոփոխությունները, ներառյալ մայր գումարի և տոկոսագումարների մարումը՝ անկախ նրանից պայմանագրով նախատեսված է, թե ոչ, պարտավորության սպասվող օգտագործումը և չկատարված վճարումների հաշվեգրված տոկոսները:

Վնասը դիֆոլտի ժամանակ (LGD): Այն արտահայտում է վնասի չափը, որը առաջանում է տվյալ ժամանակահատվածում վարկի դիֆոլտային կարգավիճակում: Այն հիմնված է պայմանագրային դրամական հոսքերի և այն դրամական հոսքերի տարբերության վրա, որոնք վարկատուն հույս ունի ստանալ՝ ներառյալ գրավի իրացումից առաջացած դրամական հոսքերը: Որպես կանոն, այն արտահայտվում է որպես դեֆոլտի դեպքում ռիսկի տակ գտնվող գումարի (EAD) նկատմամբ տոկոսով:

Դեֆոլտի հավանականությունը, դեֆոլտի դեպքում ռիսկի տակ գտնվող գումարը և դեֆոլտի ժամանակ վնասը ավելի մանրամասն բացահայտվում են 37.1.2 ծանոթագրությունում:

Վերանայված ֆինանսական ակտիվներ

Եթե փոխառուի ֆինանսական դժվարությունների պատճառով ֆինանասական ակտիվի պայմանագրային պայմանները վերանայվում կամ փոփոխվում են կամ գոյություն ունեցող ֆինանսական ակտիվը փոխարինվում է նորով, ապա գնահատվում է ֆինանսական ակտիվի ապաճանաչման անհրաժեշտությունը (տես ծանոթագրություն 4.4.4), և ակնկալվող պարտքային կորուստները հաշվարկվում են հետևյալ կերպ.

- եթե ակնկալվող վերանայումը չի հանգեցնում գոյություն ունեցող ֆինանսական ակտիվի ապաճանաչմանը, ապա փոփոխված ֆինանսական ակտիվից ակնկալվող դրամական հոսքերը ներառվում են գոյություն ունեցող ակտիվից ակնկալվող դրամական միջոցների հոսքերի պակասորդի հաշվարկում,
- եթե ակնկալվող վերանայումը հանգեցնում է գոյություն ունեցող ֆինանսական ակտիվի ապաճանաչմանը, ապա նոր ակտիվի ակնկալվող իրական արժեքը դիտարկվում է որպես ապաճանաչման պահին գոյություն ունեցող ակտիվի վերջնական դրամական հոսք: Այդ գումարը ներառվում է գոյություն ունեցող ֆինանասկան ակտիվից ակնկալվող դրամական միջոցների պակասորդի հաշվարկում, որոնք ակնկալվող ապաճանաչման ամսաթվից մինչև հաշվետու ամսաթիվ զեղչվում են գոյություն ունեցող ակտիվի սկզբնական արդյունավետ տոկոսադրույքով:

Արժեզրկված ֆինանսական ակտիվներ

Յուրաքանչյուր հաշվետու ամսաթվի դրությամբ Բանկը գնահատում է, թե արդյոք ամորտիզացված արժեքով հաշվառվող ֆինանսական ակտիվները և իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող պարտքային ֆինանսական ակտիվները արժեզրկված են: Ֆինանսական ակտիվները համարվում են արժեզրկված, եթե տեղի են ունենում մեկ կամ ավելի իրադարձություններ, որոնք բացասաբար են անդրադառնում ֆինանսական ակտիվի գնահատված ապագա դրամական միջոցների հոսքերի վրա: Ֆինանսական ակտիվի արժեզրկման վկայություններ են հանդիսանում ստորև նշված իրադարձությունների վերաբերյալ տվյալների առկայությունը.

- էմիտենտի կամ փոխառուի էական ֆինանսական դժվարություններ,
- պայմանագրային պայմանների խախտում, օրինակ՝ դեֆոլտ կամ վճարման ուշացում,

- վարկերի կամ փոխատվությունների պայմանների այնպիսի վերանայում, որը Բանկն այլ պայմաններում չէր դիտարկի,
- փոխառուի հավանական սնանկացում կամ այլ ֆինանսական վերակազմավորման հավանականություն,
- ֆինանսական դժվարությունների հետևանքով արժեթղթերի ակտիվ ֆինանսական շուկայի վերացում,

Փոխառուի ֆինանսական դժվարությունների հետևանքով վերանայված վարկը սովորաբար դիտարկվում է որպես արժեզրկված, միայն եթե առկա չէ վկայություն, որ պայմանագրային դրամական միջոցների հոսքեր չստանալու ռիսկը էականորեն նվազել է և չկան արժեզրկման այլ հայտանիշներ:

Պետական պարտատոմսերում ներդրման արժեզրկված լինելը գնահատելիս՝ Բանկը հաշվի է առնում հետևյալ գործոնները.

- վարկունակության շուկայական գնահատականը՝ արտացոլված պարտատոմսերի եկամտաբերությամբ,
- եկամտաբերության գնահատումը վարկանիշային գործակալությունների կողմից,
- երկրի կարողությունը մուտք գործել կապիտալ շուկաներ նոր պարտքի թողարկման համար:

Ակնկալվող պարտքային կորուստների պահուստի ներկայացումը ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում

Ակնկալվող պարտքային կորուստների գծով պահուստը ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում ներկայացվում է հետևյալ կերպ.

- ամորտիզացված արժեքով չափվող ֆինանսական ակտիվներ՝ որպես ակտիվների ընդհանուր հաշվեկշռային արժեքից նվազում,
- իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող պարտքային գործիքների (FVOCI) արժեզրկումից կորուստները չեն ճանաչվում ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում, քանի որ այդ ակտիվների հաարժեքը հավասար է իրենց իրական արժեքին: Այնուամենայնիվ, արժեզրկումից կորուստները բացահայտվում և ճանաչվում են իրական արժեքի ճշգրտման պահուստում,
- վարկային պարտավորվածությունների և ֆինանսական երաշխավորության պայմանագրերի համար, որպես կանոն, պահուստի տեսքով,
  - Վարկային պարտավորվածության չօգտագործված մասի գծով գործողության ամբողջ ժամանակահատվածի ընթացքում ակնկալվող պարտքային կորուստների գնահատման ժամանակ, Բանկը գնահատում է վարկային պարտավորվածությունների ամբողջ ժամանակահատվածի ընթացքում պորտֆելի այն մասը, որը ակտնկալվում է օգտագործել: Ակնկալվող պարտքային կորուստները հետագայում հիմնվում են դրամական հոսքերի ակնկալվող պակասորդի ներկա արժեքի վրա, եթե վարկը օգտագործվել է: Ակնկալվող դրամական պակասորդները զեղչվում են վարկի ակնկալվող պարտքային կորուստների մոտավոր հաշվարկով:
  - եթե ֆինանսական գործիքը ունի ինչպես օգտագործված, այնպես էլ չօգտագործված բաղադրիչ և Բանկը հնարավորություն չունի վարկերի տրամադրման պարտավորվածության ակնկալվող պարտքային կորուստները առանձնացնել օգտագործված բաղադրիչի ակնկալվող պարտքային կորուստներից, ապա Բանկը ներկայացնում է ակնկալվող պարտքային կորուստների համախմբված պահուստ երկու բաղադրիչների համար: Համախմբված գումարը ներկայացվում է որպես օգտագործված բաղադրիչի ընդհանուր հաշվեկշռային արժեքից նվազում: Օգտագործված բաղադրիչի

համախառն գումարի նկատմամբ արժեզրկումից կորուստների ցանկացած գերազանցում ներկայացվում է պահուստի տեսքով:

– Յուրաքանչյուր երաշխավորության վերաբերյալ Բանկի պարտավորությունը չափվում է սկզբնապես ճանաչված գումարի առավելագույնով՝ հանած շահույթի կամ վնասի մասին հաշվետվությունում ճանաչված կուտակված ամորտիզացիան և ակնկալվող պարտքային կորուստների պահուստը: Կրճատումները զեղչվում են ռիսկով ճշգրտված տոկոսադրույքով, որը ենթակա է բացահայտման: Ֆինանսական երաշխավորության պայմանագրերի հետ կապված ակնկալվող պարտքային կորուստները ճանաչվում են պահուստների շրջանակում:

Դուրսգրում

Վարկերը և պարտքային գործիքները դուրս են գրվում (մասնակի կամ ամբողջական), եթե չկան դրանց վերադարձման իրական հեռանկարներ: Դա, որպես կանոն, այն դեպքն է, երբ Բանկը որոշում է, որ պարտապանը չունի այնպիսի ակտիվներ կամ եկամտի աղբյուրներ, որոնք կարող են առաջացնել բավարար դրամական հոսքեր՝ դուրսգրման ենթակա գումարը մարելու համար: Այդ ակտիվի ինչպես ընդհանուր հաշվեկշռային արժեքը, այնպես էլ արժեզրկման պահուստը (եթե առկա են) ուղղակիորեն դուրս են գրվում: Դուրսգրումը իրենից ներկայացնում է ճանաչման մասնակի կամ ամբողջական դադարեցում: Սակայն դուրսգրված ֆինանսական ակտիվները դեռևս կարող են ենթարկվել պահանջների կատարման՝ Բանկի պարտքերի հավաքագրման ընթացակարգերի համապատասխան:

4.5 Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ

Դրամական միջոցները և դրանց համարժեքները բաղկացած են կանխիկ դրամից, ՀՀ ԿԲ-ում պահվող միջոցներից (բացառությամբ ԱրՔա վճարային համակարգով իրականացվող փոխհաշվարկների համար դեպոնացված գումարների) և այլ բանկերում հաշիվներից, այդ թվում, բարձր իրացվելի ներդրումները, որոնց մարման ժամկետը ձեռքբերման օրից 90 օր է, որոնք կարող են փոխարկվել կանխիկի կարճ ժամանակամիջոցում հեշտությամբ և չեն ենթարկվում արժեքի փոփոխման զգալի ռիսկի:

Դրամական միջոցները և դրանց համարժեքները հաշվառվում են ամորտիզացված արժեքով:

4.6 Պահանջներ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ

Իր բնականոն գործունեության ընթացքում Բանկն օգտագործում է այլ բանկերում տարբեր ժամկետայնության բացված ընթացիկ և ավանդային հաշիվներ: Բանկերին տրամադրված ֆիքսված ժամկետով վարկերն ու կանխավճարները հաշվառվում են ամորտիզացված արժեքով՝ օգտագործելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը: Ոչ ֆիքսված ժամկետներով միջոցներն ամորտիզացվում են Բանկի ղեկավարության կողմից գնահատված ժամկետներում: Ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ պահանջների գումարները նվազեցվում են արժեզրկումից պահուստների գումարներով:

4.7 Առևտրային նպատակներով պահվող ակտիվներ և պարտավորություններ

Առևտրային նպատակներով պահվող ակտիվներ և պարտավորությունները իրենցից ներկայացնում են ֆինանսական ակտիվներ և պարտավորություններ, որոնք հիմնականում ձեռք են բերվել կամ առաջացել են մոտ ապագայում վաճառելու կամ հետ գնելու նպատակով, կազմում են միասին կառավարվող որոշված ֆինանսական գործիքների պորտֆելի մաս, որի համար առկա է վկայություն կարճ ժամկետում շահույթ ստանալու արդիական փաստացի ուղիների վերաբերյալ: Առևտրային նպատակներով պահվող ակտիվները և պարտավորությունները սկզբնապես ճանաչվում են, ապա հետագայում չափվում իրական

արժեքով ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում՝ շահույթում կամ վնասում ճանաչված գործարքային ծախսերով: Իրական արժեքի բոլոր փոփոխությունները ճանաչվում են որպես շահույթում կամ վնասում զուտ առևտրային եկամտի մի մաս:

Իր բնականոն գործունեության ընթացքում, արտարժույթի և կապիտալի շուկաներում, Բանկը հանդես է գալիս որպես ածանցյալ գործիքներով պայմանագրերի կողմ, որոնք ներառում են ֆյուչերսներ, ֆորվարդներ, սվոպեր և օպցիոններ: Բոլոր ածանցյալ գործիքները դասակարգվում են որպես առևտրական նպատակներով պահվող և դրանց հաշվառումը իրականացվում է ֆինանսական գործիքների նախնական ճանաչման քաղաքականությունների համաձայն, այնուհետև դրանք վերաչափվում են իրական արժեքով: Իրական արժեքը որոշվում է շուկաներում գնանշումներով կամ այնպիսի մոդելների կիրառմամբ, որոնց հիմքում ընկած են շուկաների ընթացիկ վիճակների գնահատումները և բազային գործիքների պայմանագրային գները և այլ գործոններ: Դրական իրական արժեք ունեցող ածանցյալ գործիքները հաշվառվում են որպես ակտիվ, իսկ բացասական իրական արժեքով ածանցյալ գործիքները՝ որպես պարտավորություն:

4.8 Վարկեր և փոխատվություններ

Վարկերը և փոխատվությունները ֆիքսված կամ որոշելի վճարումներով ֆինանսական ակտիվներն են, որոնք ստեղծվում են Բանկի կողմից ուղղակիորեն պարտապանին դրամ տրամադրելու միջոցով՝ առանց պարտքը վաճառելու մտադրության:

Ֆիքսված ժամկետներով տրամադրված վարկերը սկզբնապես ճանաչվում են իրական արժեքով՝ գումարած գործարքից ծախսումները: Երբ տրամադրված գումարների իրական արժեքը տարբերվում է վարկի իրական արժեքից, օրինակ երբ վարկը տրամադրվում է շուկայականից ցածր տոկոսադրույքով, տրամադրված գումարի և վարկի իրական արժեքների տարբերությունը վարկի սկզբնական ճանաչման ժամանակ ձևակերպվում է որպես ծախս շուկայականից ցածր դրույքներով ակտիվների տեղաբաշխումից՝ շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքի մասին հաշվետվությունում: Այնուհետև վարկերն ու փոխատվությունները չափվում են ամորտիզացված արժեքով՝ կիրառելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը: Ֆիքսված մարման ժամկետ չունեցող վարկերն ու փոխատվությունները հաշվառվում են ամորտիզացված արժեքով՝ ելնելով մարման ենթադրվող ժամկետներից: Հաճախորդներին տրված վարկերի ու փոխատվությունների գումարները նվազեցվում են դրանց գծով արժեզրկումից պահուստների գումարներով:

4.9 Ներդրումային արժեթղթեր

Ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում ներդրումային արժեթղթերը ներառում են,

- պարտքային ներդրումային արժեթղթեր, որոնք չափվում են ամորտիզացված արժեքով. Դրանք սկզբնապես չափվում են իրական արժեքով՝ գումարած ուղղակի գործարքների ծախսերը, իսկ հետագայում՝ դրանց ամորտիզացված արժեքով՝ կիրառելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը:
- պարտքային և բաժնային ներդրումային արժեթղթեր, որոնք չափվում են իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով կամ նախորոշվում են որպես իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող, իսկ իրական արժեքի փոփոխությունները անմիջապես ճանաչվում են շահույթում կամ վնասում,
- իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող պարտքային արժեթղթեր և
- իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող բաժնային ներդրումային արժեթղթեր:

Իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող պարտքային արժեթղթերի գծով օգուտը և վնասը ճանաչվում են այլ համապարփակ ֆինանսական արդյունքում, բացառությամբ ներքոհիշյալ դեպքերի, երբ ճանաչվում են շահույթում կամ վնասում, նույն ձևով, ինչպես ամորտիզացված արժեքով չափվող ֆինանսական ակտիվների դեպքում.

- տոկոսային եկամուտ՝ արդյունավետ տոկոսադրույքի մեթոդի կիրառմամբ,
- ակնկալվող պարտքային կորուստներ և վերադարձ
- արտարժույթի փոխարկումից օգուտ և վնաս

Երբ իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող պարտքային արժեթուղթը ապաճանաչվում է, նախկինում ակնկալվող պարտքային կորուստներում ճանաչված կուտակային օգուտը կամ վնասը սեփական կապիտալից վերադասակարգվում է շահույթում կամ վնասում:

Բանկը կարող է ոչ առևտրային նպատակներով պահվող բաժնային գործիքներում որոշ ներդրումների իրական արժեքի փոփոխությունները ներկայացնել այլ համապարփակ ֆինանսական արդյունքում: Այսպիսի ընտրություն կայացվում է սկզբնական ճանաչման ժամանակ անհատական սկզբունքով և անշրջելի է:

Այսպիսի բաժնային գործիքների գծով օգուտ և վնասը երբեք չեն վերադասակարգվում շահույթում կամ վնասում, իսկ արժեզրկում չի ճանաչվում: Շահաբաժինները ճանաչվում են շահույթում կամ վնասում, եթե դրանք հստակ չեն հանդիսանում ներդրումների մի մասի վերադարձ, որի դեպքում նրանք ճանաչվում են այլ համապարփակ ֆինանսական արդյունքում: այլ համապարփակ ֆինանսական արդյունքում ճանաչված կուտակային օգուտը և վնասը ներդրումների օտարման դեպքում փոխանցվում են չբաշխված շահույթ:

4.10 Հետգնման և հակադարձ հետգնման պայմանագրեր

Հետգնման պայմանով արժեթղթերի վաճառքի գործառնությունները («ռեպո») դիտարկվում են որպես ապահովված ֆինանսական գործարքներ: Հետգնման պայմանով վաճառված արժեթղթերը շարունակվում են հաշվառվել ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում, և այն դեպքում, երբ գնորդն ունի նշված արժեթղթերի վաճառքի կամ գրավադրման պայմանագրային իրավունք կամ համաձայնություն, դրանք վերադասակարգվում են որպես «Հետգնման պայմանագրերով գրավադրված արժեթղթերե և ներկայացվում են որպես առանձին հաշվեկշիռային հոդված: Համապատասխան պարտավորությունն արտացոլվում է ֆինանսական կազմակերպությունների կամ հաճախորդների նկատմամբ հաշիվներում:

Հետվաճառքի պայմանով գնված արժեթղթերը («հակադարձ ռեպո») չեն ճանաչվում ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում, իսկ տրամադրված գումարները հաշվառվում են որպես պահանջներ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ կամ հաճախորդներին տրված վարկեր և փոխատվություններ: Արժեթղթերի գնման և վաճառքից առաջացած եկամուտը կամ ծախսը իրենից ներկայացնում է տոկոսային եկամուտ կամ ծախս, որոնք հաշվեգրվում են հետգնման պայմանագրերի գործողության ժամկետների ընթացքում՝ օգտագործելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը:

Եթե հակադարձ ռեպո պայմանագրով գնված ակտիվները վաճառվեն երրորդ կողմին, արժեթղթերի վերադարձի պարտավորությունը գրանցվում է որպես առևտրային պարտավորություն և չափվում է իրական արժեքով:

4.11 Որպես գրավ տրված և ստացված արժեթղթեր

Արժեթղթերով գործարքները հիմնականում ապահովվում են արժեթղթերով կամ կանխիկ դրամով: Արժեթղթերի փոխանցումը մյուս կողմին արտացոլվում է ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում, միայն եթե փոխանցվում են նաև ռիսկերը և օգուտները կապված

սեփականության իրավունքի փոխանցման հետ: Վճարված կամ որպես գրավ ստացված կանխիկը գրանցվում է որպես ակտիվ կամ պարտավորություն:

Ձեռքբերված արժեթղթերը չեն ճանաչվում ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում մինչև դրանց օտարումը երրորդ կողմին, որի դեպքում նշված արժեթղթերի վերադարձման գծով պարտավորությունը ճանաչվում է իրական արժեքով որպես առևտրական նպատակներով պարտավորություն, իսկ գնման և վաճառքի տարբերությունը հաշվառվում է շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքի մասին հաշվետվության «Զուտ առևտրային եկամուտ» հոդվածում:

4.12 Վարձակալություն

Ինչպես նկարագրված է ծանոթագրություն 3.4-ում, Բանկը կիրառել է ՖՀՄՍ 16-ը՝ օգտագործելով վերաձևափոխված հետընթաց մոտեցումը, այդպիսով համադրելի տեղեկատվությունը չի վերաներկայացվել: Դա նշանակում է, որ համադրելի տեղեկատվությունը դեռևս ներկայացված է ՀՀՄՍ 17-ի և ՖՀՄՍՄԿ Մեկնաբանություն 4-ի համաձայն:

2019թ. Հունվարի 1-ից կիրառվող հաշվապահական հաշվառման քաղաքականություն

Բանկը որպես վարձակալ

2019թ. Հունվարի 1-ին կամ դրանից հետո կնքված ցանկացած նոր պայմանագրի դեպքում Բանկը դիտարկում է, թե արդյոք պայմանագիրը վարձակալական է, կամ պարունակում է վարձակալություն: Վարձակալությունը սահմանվում է որպես «պայմանագիր կամ պայմանագրի մի մաս, որը փոխհատուցման դիմաց փոխանցում է ակտիվի (հիմքում ընկած ակտիվ) օգտագործման իրավունքը որոշակի ժամանակահատվածի համար»: Այս սահմանումը կիրառելու համար Բանկը գնահատում է, թե արդյոք պայմանագիրը բավարարում է հետևյալ երեք հիմնական գնահատականներին.

- պայմանագիրը պարունակում է որոշակիացված ակտիվ, որը կա՛մ հստակ սահմանված է պայմանագրում, կա՛մ սահմանվում է անուղղակի վկայության հիման վրա՝ որոշակիացվելով այն պահին, երբ ակտիվը դառնում է հասանելի Բանկին,
- Բանկն իրավունք ունի ստանալու որոշակիացված ակտիվի օգտագործումից, ըստ էության, բոլոր տնտեսական օգուտները օգտագործման ողջ ժամանակահատվածում՝ հաշվի առնելով նրա՝ պայմանագրի որոշակի շրջանակում իրավունքները,
- Բանկն իրավունք ունի օգտագործման ժամանակահատվածի ընթացքում ուղղորդելու որոշակիացված ակտիվի օգտագործումը: Բանկն իրավունք ունի ուղղորդել, թե «ինչպես և ինչ նպատակով» ակտիվն օգտագործել օգտագործման ժամանակաշրջանի ընթացքում:

Վարձակալության ճանաչում և չափում

Բանկը որպես վարձակալ

Վարձակալության մեկնարկի ամսաթվի դրությամբ, Բանկը պետք է ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում ճանաչի օգտագործման իրավունքի ձևով ակտիվը և վարձակալության գծով պարտավորությունը: Օգտագործման իրավունքի ձևով ակտիվը չափվում է սկզբնական արժեքով, որը ձևավորվում է վարձակալության գծով պարտավորության սկզբնական չափումից, Բանկի կատարած ցանկացած սկզբնական ուղղակի ծախսերից, վարձակալության ժամկետի ավարտին ակտիվի ապատեղակայման և քանդման ցանկացած ծախսի գնահատումից և նախքան վարձակալության մեկնարկի ամսաթիվը կատարված ցանկացած վարձակալական վճարներից (հանած ստացված ցանկացած խրախուսումները):

Բանկը հաշվարկում է օգտագործման իրավունքի ձևով ակտիվի մաշվածությունը գծային հիմունքով վարձակալության մեկնարկի ամսաթվից մինչև օգտագործման իրավունքի ձևով ակտիվի օգտակար ծառայության ավարտի ամսաթվից կամ վարձակալության ժամկետի ավարտի ամսաթվից ամենավաղը: Բանկը նաև գնահատում է օգտագործման իրավունքի ձևով ակտիվը արժեզրկման համար, երբ այդպիսի ցուցանիշներ կան: Վարձակալված գույքի բարելավումները կապիտալիզացվում և մաշվում են գծային հիմունքով՝ որպես հիմք ընդունելով վարձակալության ժամկետից և վարձակալված գույքի օգտակար ծառայության ժամկետից նվազագույնը:

Մեկնարկի ամսաթվին Բանկը չափում է վարձակալության գծով պարտավորությունը այդ ամսաթվին դեռևս չվճարված վարձավճարների ներկա արժեքով՝ դրանք զեղչելով՝ կիրառելով վարձակալությամբ ենթադրվող տոկոսադրույքը, եթե այդ դրույքը կարելի է հեշտությամբ որոշել, կամ Բանկի լրացուցիչ փոխառության տոկոսադրույքը:

Վարձակալության գծով պարտավորության չափման մեջ ներառվող վարձավճարները պարունակում են հաստատուն վճարումներ (ներառյալ՝ ըստ էության հաստատուն վճարումներ), վարձակալության փոփոխուն վճարումներ, որոնք կախված են ինդեքսից կամ դրույքից, գումարներ, որոնք, ինչպես սպասվում է կվճարվեն մնացորդային արժեքի երաշխիքի ներքո և վճարումներից, որոնք առաջանում են օպցիոններից, որոնց իրագործման վերաբերյալ կա խելամիտ համոզմունք:

Սկզբնական չափումից հետո պարտավորությունը կնվազեցվի կատարված վճարումների և կմեծացվի տոկոսների չափով: Այն վերաչափվում է՝ արտացոլելու ցանկացած վերագնահատում կամ փոփոխություն, կամ եթե առկա են փոփոխություններ ըստ էության հաստատուն վճարումներում:

Երբ վարձակալության գծով պարտավորությունը վերաչափվում է, համապատասխան ճշգրտումը արտացոլվում է օգտագործման իրավունքի ձևով ակտիվում կամ շահույթում և վնասում, եթե օգտագործման իրավունքի ձևով ակտիվը նվազեցվել է զրոյի:

Բանկը կարճաժամկետ վարձակալությունների և փոքրարժեք ակտիվների վարձակալությունների հաշվառման համար ընտրել է գործնական մոտեցումներ: Օգտագործման իրավունքի ձևով ակտիվ և վարձակալության գծով պարտավորություն ճանաչելու փոխարեն, դրանց հետ կապված վճարումները վարձակալության ժամկետի ընթացքում ճանաչվում են շահույթում կամ վնասում որպես ծախս՝ գծային հիմունքով:

Բանկը սահմանում է իր լրացուցիչ փոխառության տոկոսադրույքը՝ վերլուծելով փոխառությունները արտաքին տարբեր աղբյուրների հիման վրա և կատարում է որոշակի ճշգրտումներ՝ արտացոլելու վարձակալության պայմանները և վարձակալված ակտիվի տեսակը:

Ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում օգտագործման իրավունքի ձևով ակտիվները ընդգրկվել են հիմնական միջոցների տողում, իսկ վարձակալության գծով պարտավորությունները՝ այլ պարտավորություններում:

Մինչև 2019թ. Հունվարի 1-ը կիրառվող հաշվապահական հաշվառման քաղաքականություն

Գործառնական վարձակալություն – Բանկը որպես վարձակալ

Ակտիվների վարձակալությունը, որի դեպքում ակտիվի սեփականության հետ կապված բոլոր ռիսկերն ու օգուտները պահպանվում են վարձատուի մոտ, դասակարգվում է որպես գործառնական վարձակալություն: Գործառնական վարձակալության շրջանակներում վարձավճարները ճանաչվում են որպես ծախս ֆինանսական արդյունքում գծային հիմունքով վարձակալության ժամկետի ընթացքում և ներառվում են գործառնական ծախսերում:

4.13 Թանկարժեք մետաղներ

Ոսկին և այլ թանկարժեք մետաղները հաշվառվում են ՀՀ ԿԲ կողմից սահմանվող գներով, ինչը մոտավորապես դրանց իրական արժեքն է և հիմնված է Լոնդոնի Թանկարժեք Մետաղների բորսայի գնանշումների վրա:

Գների տատանումներն արտացոլվում են թանկարժեք մետաղներով գործառնություններից զուտ օգուտ/վնաս հոդվածում՝ այլ եկամուտներում կամ ծախսերում:

4.14 Հիմնական միջոցներ

Հիմնական միջոցները ներկայացված են սկզբնական արժեքի և կուտակված մաշվածության տարբերությամբ: Բանկի հողն ու շենքերը ներկայացված են իրական արժեքի և կուտակված մաշվածության տարբերությամբ: Երբ ակտիվի հաշվեկշռային արժեքը ավելի մեծ է նրա գնահատված փոխհատուցվող գումարից ոչ ժամանակավոր հանգամանքների պատճառով, այն անմիջապես նվազեցվում է մինչև այդ փոխհատուցվող գումարը: Հողը հաշվառվում է իրական արժեքով և ունի անսահմանափակ օգտակար ծառայության ժամկետ և, հետևաբար, չի ամորտիզացվում:

Մաշվածությունը հաշվարկվում է գծային մեթոդով ակտիվի օգտակար ծառայության ժամկետի ընթացքում, կիրառելով հետևյալ տարեկան դրույքաչափերը՝

	Օգտակար ծառայության ժամկետ (տարիներ)	Տոկոսադրույք (%)
Շենքեր	50	2
Համակարգչային տեխնիկա	3-5	33.3-20
Տրանսպորտային միջոցներ	8	12.5
Այլ հիմնական միջոցներ	8	12.5

Վարձակալված հիմնական միջոցների վրա ուղղված կապիտալ բնույթի ծախսումները կապիտալացվում և ամորտիզացվում են գծային հիմունքով վարձակալման ժամկետի և հիմնական միջոցների և դրանց օգտակար ծառայության ժամկետներից նվազագույնով (մինչև 2019թ. Հունվարի 1-ը կիրառվող): Անավարտ շինարարությանը պատկանող ակտիվները հաշվառվում են փաստացի ծախսերի և արժեզրկումից կորուստների տարբերությամբ: Շինարարական աշխատանքների ավարտից հետո ակտիվները փոխանցվում են հիմնական միջոցներին և հաշվառվում են իրենց մնացորդային արժեքով: Անավարտ շինարարությանը պատկանող ակտիվները չեն ամորտիզացվում քանի դեռ պատրաստ չեն օգտագործման համար:

Հիմնական միջոցների վերանորոգման և պահպանման հետ կապված ծախսումները շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում ճանաչվում են որպես ծախս՝ դրանց կատարման պահին: Կապիտալ բնույթի նորոգման ծախսումները ավելացվում են ակտիվի հաշվեկշռային արժեքին, երբ այդ ծախսումները կատարվում են, և եթե բավարարում են ակտիվի ճանանչման չափանիշներին: Այս ծախսումների մաշվածությունը հաշվարկվում է համապատասխան ակտիվի օգտակար ծառայության մնացորդային ժամկետի ընթացքում:

Հիմնական միջոցի իրացումից առաջացած օգուտ կամ վնասը որոշվում է որպես ակտիվի իրացումից զուտ մուտքերի և հաշվեկշռային արժեքի տարբերություն և հաշվառվում է գործառնական շահույթում:

Վերագնահատման արդյունքում ակտիվի արժեքի աճը արտացոլվում է կապիտալում՝ հիմնական միջոցների վերագնահատման պահուստում, բացի այն դեպքերից, երբ այն

փոխհատուցում է ֆինանսական արդյունքներում տվյալ ակտիվի գծով նախկինում ճանաչված վերագնահատումից վնասը. Այս դեպքում վերագնահատումից աճը նույնպես ճանաչվում է ֆինանսական արդյունքներում: Վերագնահատման արդյունքում ակտիվի արժեքի նվազումը ճանաչվում է ֆինանսական արդյունքներում, բացի այն դեպքերից, երբ այն փոխհատուցում է նախկինում տվյալ ակտիվի գծով կապիտալում ճանաչված վերագնահատումից աճը:

Հիմնական միջոցների օգտագործմանը զուգահեռ, տվյալ ակտիվի վերագնահատված հաշվեկշռային արժեքի հիման վրա հաշվարկված մաշվածության և ակտիվի սկզբնական արժեքի հիման վրա հաշվարկված մաշվածության տարբերությունը փոխանցվում է չբաշխված շահույթին:

Վերագնահատված արժեքով հաշվառվող հիմնական միջոցների իրացման կամ դուրս գրման դեպքում այդ հիմնական միջոցներին վերաբերվող վերագնահատման պահուստի մնացորդն ամբողջությամբ փոխանցվում է չբաշխված շահույթին:

4.15 Ոչ նյութական ակտիվներ

Ոչ նյութական ակտիվները բաղկացած են համակարգչային ծրագրերից, արտոնագրերից և այլն:

Առանձին ձեռք բերված ոչ նյութական ակտիվները սկզբնապես ճանաչվում են ինքնարժեքով: Նախնական ճանաչումից հետո ոչ նյութական ակտիվները հաշվառվում են ինքնարժեքով՝ նվազեցնելով կուտակված ամորտիզացիան կամ արժեզրկումից կորուստները: Ոչ նյութական ակտիվների օգտակար ծառայությունների ժամկետները կարող են լինել որոշակի կամ անորոշ: Որոշված օգտակար ծառայությունների ժամկետներ ունեցող ոչ նյութական ակտիվներն ամորտիզացվում են գծային հիմունքով օգտակար ծառայության ընթացքում և գնահատվում են արժեզրկման առումով, երբ առկա են արժեզրկման հատկանիշներ: Ամորտիզացիայի հաշվառման մեթոդները և ժամկետները վերանայվում են յուրաքանչյուր ֆինանսական տարվա վերջում:

Համակարգչային ծրագրերի ընթացիկ սպասարկման ծախսերը հաշվառվում են որպես ծախս դրանց կատարման ժամանակ:

4.16 Բռնագանձված ակտիվներ

Բանկի քաղաքականությունն է սահմանել՝ արդյոք բռնագանձված ակտիվը կարող է լավագույնս օգտագործվել իր ներքին գործառնությունների համար, թե պետք է վաճառվի: Ներքին գործառնությունների համար օգտագործման ենթակա ակտիվները փոխանցվում են իրենց համապատասխան ակտիվների դաս սկզբնական ապահովված ակտիվի բռնագանձված կամ հաշվեկշռային արժեքի նվազագույնով: Ակտիվները, որոնց համար վաճառքն ավելի լավ տարբերակ է ճանաչվում, ըստ Բանկի քաղաքականության՝ փոխանցվում են վաճառքի համար մատչելի ակտիվների դաս՝ իրենց իրական արժեքով (ֆինանսական ակտիվների դեպքում), իսկ ոչ ֆինանսական ակտիվների դեպքում՝ իրական արժեքով՝ հանած բռնագանձման ամսաթվի դրությամբ վաճառքից ծախսերը:

Որոշ դեպքերում, ակտիվները բռնագանձվում են վարկային պարտավորությունների չկատարման արդյունքում: Բռնագանձված ակտիվները չափվում են սկզբնական արժեքից և իրացման զուտ արժեքից նվազագույնով:

4.17 Ներգրված միջոցներ

Ներգրված միջոցները, որոնք ներառում են ՀՀ կառավարության և կենտրոնական բանկի, այլ ֆինանսական կազմակերպությունների և հաճախորդների հաշիվները, թողարկված արժեթղթերը և ստորադաս փոխառությունները, սկզբնապես ճանաչվում են ստացված միջոցների իրական արժեքով՝ հանած գործառնությունների գծով ուղղակի ծախսերը: Սկզբնական ճանաչումից հետո ներգրված միջոցները հաշվառվում են ամորտիզացված

արժեքով՝ օգտագործելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը: Եկամուտները և ծախսերը գրանցվում են շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում, ինչպես պարտավորությունների ապաճանաչման ժամանակ, այնպես էլ ամորտիզացիայի ընթացքում:

4.18 Ֆինանսական երաշխավորություններ և վարկային պարտավորվածություններ

Ֆինանսական երաշխավորության պայմանագրերը այն պայմանագրերն են, որոնք պահանջում են, որ երաշխավորություն տրամադրողը փոխհատուցի երաշխավորությունը ստացողին կոնկրետ պարտապանի կողմից պարտքային գործիքի ժամկետներին համաձայն վճարումները ժամանակին չկատարելու պատճառով վերջինիս կողմից կրած վնասների դիմաց: Վարկային պարտավորվածությունները նախապես որոշված պայմաններով և ժամկետներով վարկեր տրամադրելու պարտավորվածություններն են:

Ֆինանսական երաշխավորությունները կամ շուկայականից ցածր տոկոսադրույքով վարկ տրամադրելու պարտավորվածությունները սկզբնապես չափվում են իրական արժեքով: Հետագայում, այս գործիքները չափվում են ՖՀՄՍ 9-ի համաձայն որոշված կորուստի գծով պահուստի գումարի և սկզբնապես ճանաչված գումարի և համապատասխան դեպքերում, ՖՀՄՍ 15-ի համաձայն ճանաչված կուտակված եկամտի տարբերության առավելագույն գումարով:

Ֆինանսական երաշխավորությունների և վարկային պարտավորվածությունների գծով առաջացած պարտավորությունները ներառվում են պահուստներում:

4.19 Պահուստներ

Պահուստը ճանաչվում է, երբ Բանկը ունի ներկա իրավական կամ կառուցողական պարտականություն՝ որպես անցյալ դեպքերի արդյունք, և հավանական է, որ այդ պարտականությունը մարելու նպատակով կպահանջվի տնտեսական օգուտներ մարմնավորող միջոցների արտահոսք, և պարտավորության գումարը հնարավոր է արժանահավատորեն գնահատել: Պահուստները ներառում են նաև ֆինանսական երաշխիքների և վարկային պարտավորվածությունների գծով պարտավորությունները, ինչպես ներկայացվում է 4.18 ծանոթագրությունում:

4.20 Սեփական կապիտալ

Բաժնետիրական կապիտալ

Սովորական բաժնետոմսերը և չմարվող արտոնյալ բաժնետոմսերը դասակարգվում են որպես կապիտալ: Նոր բաժնետոմսերի թողարկմանը, բացի կազմակերպությունների միավորման դեպքում թողարկվող բաժնետոմսերի, վերաբերող ուղղակի ծախսերը նվազեցվում են կապիտալի աճից: Երբ թողարկման արդյունքում ստացված գումարների իրական արժեքը գերազանցում է բաժնետոմսերի անվանական արժեքը, տարբերությունը հաշվառվում է որպես հավելավճար:

Էմիսիոն եկամուտ

Էմիսիոն եկամուտը ներառում է բաժնետոմսերի թողարկումից ստացված ցանկացած հավելավճար: Գործարքի գծով ցանկացած ծախսում, որը կապված է բաժնետոմսերի թողարկման հետ նվազեցվում է էմիսիոն եկամուտից:

Չբաշխված շահույթ

Չբաշխված շահույթը ներառում է ընթացիկ և նախորդ ժամանակաշրջանների չբաշխված շահույթը:

Շահաբաժիններ

Հաշվապահական հաշվեկշռի ամսաթվով շահաբաժինները դուրս են գրվում կապիտալից և ճանաչվում են որպես պարտավորություն, միայն երբ դրանք հաստատվում են հաշվապահական հաշվեկշռի ամսաթվով կամ մինչև այդ: Հաշվապահական հաշվեկշռի ամսաթվից հետո մինչև ֆինանսական հաշվետվությունների հրապարակման ամսաթիվը հայտարարված կամ հաստատված շահաբաժինները բացահայտվում են:

Հիմնական միջոցների վերագնահատման պահուստ

Հիմնական միջոցների վերագնահատման աճը օգտագործվում է գրանցելու համար հիմնական միջոցների իրական արժեքի աճը և նվազումը այն չափի, որ նման նվազումը վերաբերում է նույն ակտիվի աճին, որը նախկինում ճանաչվել էր սեփական կապիտալում:

Իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող ներդրումային արժեթղթերի իրական արժեքի պահուստ

Այս պահուստը արտացոլում է իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող ներդրումային արժեթղթերի իրական արժեքի փոփոխությունները:

4.21 Սեգմենտների ներկայացում

Գործառնական սեգմենտը հանդիսանում է Բանկի բիզնես գործառնությունների բաղկացուցիչ մասը, որոնցից այն կարող է վաստակել եկամուտ և կատարել ծախսեր, ներառյալ Բանկի այլ որևէ բաղկացուցիչ մասի հետ կապված գործառնություններից եկամուտներն ու ծախսերը: Գործառնական սեգմենտները որոշելիս Բանկի ղեկավարությունը տարանջատում է Բանկի այն կոմպոնենտները, որոնք ներառված են ծառայությունների մատուցման մեջ (բիզնես սեգմենտ) և որի համար առկա է ֆինանսական տեղեկատվություն: Բոլոր գործառնական սեգմենտների գործառնական արդյունքները պարբերաբար վերանայվում են Բանկի գլխավոր գործադիր տնօրենի կողմից՝ սեգմենտին միջոցներ հատկացնելու որոշում կայացնելու համար և գնահատելու դրա կատարումը: Այս ֆինանսական հաշվետվությունների շրջանակներում Բանկի աշխարհագրական սեգմենտները ներկայացված են հիմնվելով գործընկերների գտնվելու վայրի վրա՝ հիմնվելով ավելի շուտ տնտեսական ռիսկի, քան իրավաբանական ռիսկի վրա:

5 Կարևորագույն հաշվապահական գնահատումներ և դատողություններ

ՖՀՄՍ համաձայն ֆինանսական հաշվետվությունների պատրաստումը պահանջում է, որ Բանկի ղեկավարությունը կատարի կարևորագույն հաշվապահական գնահատումներ, դատողություններ և ենթադրություններ, որոնք ազդեցություն են թողնում ֆինանսական հաշվետվությունների ամսաթվի դրությամբ ակտիվների և պարտավորությունների ներկայացվող գումարների, ինչպես նաև հաշվետու ժամանակաշրջանի եկամուտների և ծախսերի վրա: Գնահատումները և դրանց հետ կապված ենթադրությունները, հիմնվելով պատմական փորձի և այլ գործոնների վրա, որոնք հիմնավորված են տվյալ պայմաններում, հիմք են հանդիսանում դատողություններ անելու այն ակտիվների և պարտավորությունների հաշվեկշռային արժեքների վերաբերյալ, որոնց արժեքը հնարավոր չէ որոշել այլ վստահելի աղբյուրներից: Ամեն դեպքում, չնայած գնահատումները հիմնվում են ղեկավարության կողմից ընթացիկ իրադարձությունների լավագույն պատկերացումների վրա, փաստացի արդյունքները վերջին հաշվով կարող են տարբերվել կատարված գնահատումներից:

Ներկայացվող ֆինանսական հաշվետվությունների առումով նշանակալից դատողությունները և գնահատումները ներկայացվում են ստորև:

Բիզնես մոդել և մայր գումարի և չմարված մայր գումարի տոկոսագումարների վճարումներ

Բանկը գնահատում է այն բիզնես մոդելը, որի ընթացքում ակտիվները պահվում են և գնահատում, թե արդյոք ֆինանսական ակտիվի պայմանագրային պայմանները բացառապես մայր գումարի և չմարված մայր գումարի տոկոսագումարների վճարումներն են (տես 4.4.2 ծանոթագրությունը):

Իրական արժեքի չափումը

Ֆինանսական գործիքների (երբ ակտիվ շուկայի գնանշումներ չկան) և ոչ ֆինանսական ակտիվների իրական արժեքը սահմանելու համար ղեկավարությունն օգտագործում է գնահատման տեխնիկան: Սա ներառում է զարգացող գնահատումները և ենթադրությունները համապատասխան նրան, թե շուկայի մասնակիցները ինչպես կգնահատեն գործիքները: Ղեկավարությունն իր ենթադրություններում որքան հնարավոր է հիմնվում է դիտարկվող տվյալների վրա, սակայն դրանք միշտ չէ, որ հասանելի են: Այդ դեպքում, ղեկավարությունն օգտագործում է իր ունեցած ամենալավ տեղեկատվությունը: Գնահատված իրական արժեքը կարող է տարբերվել փաստացի արժեքից, որը հաշվետու ժամանակաշրջանի դրությամբ կարող է հասանելի լինել անհատական գործարքների դեպքում (տես՝ ծանոթագրություն 34):

Հիմնական միջոցների օգտակար ծառայության ժամկետ

Հիմնական միջոցների օգտակար ծառայության ժամկետի գնահատումը դատողության արդյունք է՝ հիմնված նման ակտիվի հետ կապված փորձի վրա: Ապագա տնտեսական օգուտները մարմնավորվում են ակտիվներում և սպառվում հիմնականում օգտագործմանը զուգընթաց: Այնուամենայնիվ, այնպիսի գործոնները, ինչպիսիք են գործառնական, տեխնիկական կամ առևտրային մաշվածությունները, հաճախ հանգեցնում են ակտիվի տնտեսական օգուտների նվազեցմանը: Ղեկավարությունը մնացորդային օգտակար ծառայության ժամկետը գնահատում է ակտիվի ընթացիկ տեխնիկական վիճակին համապատասխան և ըստ այն գնահատված ժամանակաշրջանի, որի ընթացքում Բանկը կանխատեսում է ստանալ օգուտներ: Մնացորդային օգտակար ծառայության ժամկետի գնահատման համար հաշվի են առնվում հետևյալ հիմնական գործոններն. Ակտիվների կանխատեսվող օգտագործումը, գործառնական գործոններից և պահպանման ծրագրից կախված՝ մաշվածությունը և շուկայական պայմանների փոփոխություններից առաջացող տեխնիկական և առևտրային մաշվածությունը:

Վարձակալության երկարաձգման հնարավորություններ

Երբ Բանկն ունի վարձակալության երկարաձգման հնարավորություն, ղեկավարությունը օգտագործում է իր դատողությունը՝ որոշելու այդ հնարավորության ողջամտորեն կիրառումը: Ղեկավարությունը հաշվի է առնում բոլոր փաստերն ու հանգամանքները՝ ներառյալ իրենց նախկին փորձը և ակտիվը փոխելու դեպքում առաջացած ցանկացած ծախս, եթե երկարաձգման հնարավորությունը չի կիրառվում վարձակալության ժամկետը որոշելու համար: 13,172 հազար ՀՀ դրամի վարձակալության հնարավոր վճարները չեն ներառվել վարձակալության գծով պարտավորություններում, քանի որ ողջամտորեն հիմնավորված չէ երկարաձգման հնարավորության կիրառումը:

Կապակցված կողմերի հետ գործառնություններ

Բանկն իր գործունեության ընթացքում իրականացնում է գործառնություններ կապակցված կողմերի հետ: Նշված գործառնությունները հիմնականում իրականացվում են շուկայական

պայմաններով: Գործող շուկայի բացակայության դեպքում Բանկը կատարում է դատողություններ գործառնությունների շուկայական կամ ոչ շուկայական բնույթի վերաբերյալ: Դատողությունները հիմնվում են այլ հաճախորդների հետ նմանատիպ գործառնությունների, ինչպես նաև արդյունավետ դրույքների վերլուծությունների վրա (տես 33 ծանոթագրությունը):

Ֆինանսական ակտիվների արժեզրկում

Բանկը գնահատում է, թե արդյոք ֆինանսական ակտիվի գծով պարտքային ռիսկը էականորեն է աճել սկզբնական ճանաչումից հետո և ակնկալվող պարտքային կորուստների չափման գործընթացում ապագայամետ տեղեկատվության ներառումը (տես՝ ծանոթագրություն 37.1.2), ինչպես նաև վերականգնվող դրամական միջոցների հոսքերի գնահատման համար օգտագործվող հիմնական ենթադրությունները (տես՝ ծանոթագրություն 4.4.6):

Հարկային օրենսդրություն

ՀՀ հարկային օրենսդրությունը ենթակա է տարակարծիք մեկնաբանությունների: Տես՝ 31. Ծանոթագրությունը:

6 Անցման բացահայտում- ՖՀՄՍ 9

Ստորև նկարագրվում է ՖՀՄՍ 9-ի ներդրման ազդեցությունը ֆինանսական վիճակի մասին հաշվետվության և չբաշխված շահույթի վրա՝ ներառյալ ՀՀՄՍ 39-ի կրած պարտքային կորուստների հաշվարկների՝ ՖՀՄՍ 9-ի ակնկալվող պարտքային կորուստներով փոխարինման ազդեցությունը:

Հետևյալ աղյուսակում ներկայացվում են Բանկի ֆինանսական ակտիվների և պարտավորությունների համար ՀՀՄՍ 39-ի համաձայն չափման դասերը և ՖՀՄՍ 9-ի ներքո նոր չափման դասերը 2018թ. Հունվարի 1-ի դրությամբ:

Հազար ՀՀ դրամ	Չափում ըստ ՀՀՄՍ 39	Չափում ըստ ՖՀՄՍ 9	Հաշվեկշռային արժեք՝ ըստ ՀՀՄՍ 39	Վերադասակարգում	Վերաչափում	Հաշվեկշռային արժեք՝ ըստ ՖՀՄՍ 9
Ֆինանսական ակտիվներ						
Ներդրումային արժեթղթեր-պարտքային	Վաճառքի համար մատչելի	Իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող	21,655,188	-	-	21,655,188
Ներդրումային արժեթղթեր-պարտքային	Մինչև մարման ժամկետը պահվող	Իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող	49,618	-	-	49,618
Ընդամենը առևտրային պահվող և ներդրումային արժեթղթեր			21,704,806	-	-	21,704,806
Պարտքային կորուստների գծով պահուստ			-	-	(166,940)	(166,940)
Պահանջներ բանկերի նկատմամբ	Ամորտիզացված արժեքով	Ամորտիզացված արժեքով	13,036,368	-	(148,819)	13,036,368
Կանխիկ միջոցներ և թղթակցային հաշիվներ	Ամորտիզացված արժեքով	Ամորտիզացված արժեքով	35,824,831	-	(7,479)	35,817,352
Հաճախորդներին տրվող վարկեր	Ամորտիզացված արժեքով	Ամորտիզացված արժեքով	104,216,558	-	(228,176)	103,988,382
Հակադարձ հետգնման պայմանագրեր	Ամորտիզացված արժեքով	Ամորտիզացված արժեքով	-	-	-	-
Այլ ֆինանսական ակտիվներ (առևտրային դեբիտորական պարտքեր)	Վաճառքի համար մատչելի	Իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող	-	-	-	-
Ֆինանսական պարտավորություններ						
Վարկային կորուստների գծով պահուստներ արտահաշվեկշռային ռիսկերի դեպքում			-	-	(103,411)	(103,411)
Ընդամենը ՖՀՄՍ 9 ընդունման ազդեցությունը նախքան հարկումը					(487,885)	(487,885)
Ընդամենը ՖՀՄՍ 9 ընդունման ազդեցությունը հարկումից հետո					(390,308)	(390,308)

Ստորև աղյուսակում ներկայացված է ՖՀՄՍ 9-ի ընդունման ազդեցությունը Բանկի սեփական կապիտալի վրա, մասնավորապես՝ ներդրումների մասով վերագնահատման պահուստի և չբաշխված շահույթի վրա, 2018թ. Հունվարի 1-ի դրությամբ՝

Հազար ՀՀ դրամ	Ներդրում. Վերագնահատման պահուստ	Չբաշխված շահույթ
2017թ. Դեկտեմբերի 31-ի դրությամբ	1,531,277	4,597,371
Բիզնես մոդելների գնահատման արդյունքում ֆինանսական ակտիվների վերաչափում, առանց հարկերի	166,940	(557,248)
2018թ. Հունվարի 1-ի դրությամբ	1,698,217	4,040,123

7 Տոկոսային և նմանատիպ եկամուտներ և ծախսեր

Հազար ՀՀ դրամ	2019	2018
Վարկեր և փոխատվություններ հաճախորդներին	17,868,064	14,754,755
Պահանջներ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ	793,268	423,490
Հակադարձ հետգնման պայմանագրեր	385,058	311,902
Իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող ներդրումային արժեթղթեր	2,148,890	2,149,338
Ամորտիզացված արժեքով չափվող ներդրումային արժեթղթեր	22,035	-
Այլ տոկոսային եկամուտներ	37,593	24,825
Ընդամենը տոկոսային և նմանատիպ եկամուտներ	21,254,908	17,664,310

Ընթացիկ հաշիվներ և ավանդներ հաճախորդներից	4,522,482	3,859,255
Ավանդներ և մնացորդներ բանկերում	3,890,761	2,843,048
Հետգնման պայմանագրեր	1,066,404	982,988
Ստորադաս փոխառություն	84,794	547,408
Վարկեր ՀՀ Կենտրոնական բանկից և ՀՀ կառավարությունից	545,336	423,174
Վարկեր միջազգային ֆինանսական հաստատություններից	405,166	151,417
Թողարկված պարտքային արժեթղթեր	259,020	92,503
Վարձակալության գծով պարտավորություններ	165,625	-
Այլ տոկոսային ծախսեր	6,545	22,486
Ընդամենը տոկոսային և նմանատիպ ծախսեր	10,946,133	8,922,279

8 Տոկոսակիր ֆինանսական ակտիվների գծով արժեզրկումից (կորուստներ)/հակադարձում

Հազար ՀՀ դրամ		2019				2018
	Ծանոթ.	**Փուլ 1**	**Փուլ 2**	**Փուլ 3**	**Ընդամենը 2019թ.**	**Ընդամենը 2018թ.**
Պահանջներ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ	18	108,965	-	-	108,965	(3,203)
Հաճախորդներին տրված վարկեր և փոխատվություններ	20	59,036	(3,291)	(673,183)	(617,438)	(413,212)
Ներդրումային արժեթղթեր	21	171,692	-	-	171,692	(18,811)
Ընդամենը ակտիվների գծով արժեզրկման (կորուստ)/հակադարձում		339,693	(3,291)	(673,183)	(336,781)	(435,226)

9 Կոմիսիոն և այլ վճարների տեսքով եկամուտներ և ծախսեր

Հազար ՀՀ դրամ	2019	2018
Հաշվարկային փոխանցումների վճար	1,443,016	1,679,159
Ինկասացիոն գործառնություններ	293,341	211,079
Վճարային քարտերով գործառնություններ	644,026	125,087
Երաշխիքներ և ակրեդիտիվներ	101,954	109,818
Արտարժույթով և արժեթղթերով գործառնություններ	236	497
Այլ կոմիսիոն եկամուտներ	1,058	122
Ընդամենը կոմիսիոն եկամուտներ	2,483,631	2,125,762
Վճարային քարտերով գործառնություններ	323,977	190,098
Հաշվարկային գործառնությունների վճար	189,084	149,002
Երաշխիքներ և ակրեդիտիվներ	37,540	65,009
Արտարժույթով և արժեթղթերով գործառնություններ	42,279	49,874
Թղթակցային հաշիվների սպասարկման վճար	6,420	4,076
Այլ կոմիսիոն ծախսեր	27,909	31,854
Ընդամենը կոմիսիոն ծախսեր	627,209	489,913

10 Զուտ արտարժութային եկամուտ

Հազար ՀՀ դրամ	2019	2018
Արտարժույթի առք ու վաճառքից զուտ օգուտ	1,105,502	889,683
Արտարժույթի փոխարկումից վնաս	(347,491)	(38,625)
Ընդամենը զուտ արտարժութային եկամուտ	758,011	851,058

11 Այլ ակտիվների արժեզրկումից (կորուստներ)/հակադարձում

Հազար ՀՀ դրամ		2019		2018	
	Ծանոթ.	Փուլ 1	Ընդամենը	Փուլ 1	Ընդամենը
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	16	8,331	8,331	(28,883)	(28,883)
Այլ ֆինանասական ակտիվներ	24	(67,269)	(67,269)	6,332	6,332
Ֆինանսական երաշխավորություններ	31	36,083	36,083	41,520	41,520
Ընդամենը արժեզրկումից (կորուստներ) / հակադարձում		(22,855)	(22,855)	18,969	18,969

12 Այլ եկամուտներ

Հազար ՀՀ դրամ	2019	2018
Ստացված տույժեր և տուգանքներ	187,479	193,009
Թանկարժեք մետաղներով գործառնություններից զուտ օգուտ	23,746	6,281
Այլ եկամուտ	90,930	68,712
Ընդամենը այլ եկամուտներ	302,155	268,002

Այլ եկամուտների մեծ մասը հանդիսանում է հարկային գերավճարների վերադարձ:

13 Այլ ծախսեր

Հազար ՀՀ դրամ	2019	2018
Հիմնական միջոցների վերանորոգման և պահպանման ծախսեր	791,995	1,042,348
Գովազդի և ներկայացուցչական ծախսեր	588,062	729,333
Գործառնական վարձակալության գծով ծախսեր*	-	638,391
Ինկասացիոն ծառայությունների գծով ծախսեր	333,884	345,000
Անվտանգության գծով ծախսեր	316,295	323,474
Հարկեր, (բացառությամբ շահութահարկի) և տուրքեր	369,615	283,249
Պլաստիկ քարտերի գծով կատարված ծախսեր	267,080	210,888
Վճարումներ ավանդների հատուցումը երաշխավորող հիմնադրամին	207,174	203,872
Ապահովագրության գծով ծախսեր	137,065	132,896
Գրասենյակային ծախսեր	127,855	122,919
Կապի և հաղորդակցման միջոցների գծով ծախսեր	106,246	98,112
Գործուղման ծախսեր	59,150	69,146
Խորհրդատվական և մասնագիտական ծառայությունների ծախսեր	64,617	45,714
Հիմնական միջոցների օտարումից վնասներ	-	19,421
Կարճաժամկետ և փոքրարժեք ակտիվների վարձակալության ծախսեր*	13,172	-
Այլ գործառնական ծախսեր	312,357	213,705
Ընդամենը այլ ծախսեր	3,694,567	4,478,468

* Համադրելի տեղեկատվության բացակայությունը պայմանավորված է ՖՀՄՍ 16-ի կիրառմամբ (տես ծանոթագրություն 32):

14 Շահութահարկի գծով ծախս

Հազար ՀՀ դրամ	2019	2018
Ընթացիկ հարկի գծով ծախս	1,007,189	689,992
Նախորդ տարիների շահութահարկի ճշգրտում	128,366	(20,410)
Հետաձգված հարկի գծով ծախս/ (փոխհատուցում)	36,678	(94,892)
Ընդամենը շահութահարկի գծով ծախս	1,172,233	574,690

Հայաստանի Հանրապետությունում շահութահարկի դրույքաչափը կազմում է 20% (2018թ.՝ 20%): ՀՀ հարկային օրենսդրության և ՖՀՄՍ-ի միջև եղած տարբերությունը մի շարք ակտիվների և պարտավորությունների գծով առաջացնում է ժամանակավոր տարբերություններ ֆինանսական հաշվետվությունների կազման նպատակներով դրանց հաշվեկշռային արժեքների և հարկման

բազայի միջև: Հետաձգված շահութահարկի գումարը հաշվարկվում է 20% հիմնական դրույքաչափը կիրառելով:

Ստորև ներկայացվում է շահութահարկի գծով ծախսի և հաշվապահական շահույթի միջև փոխկապակցվածությունը.

Հազար ՀՀ դրամ	2019	Արդյունավետ դրույքաչափ (%)	2018	Արդյունավետ դրույքաչափ (%)
Շահույթ մինչև հարկումը	4,498,276		2,652,716	
Շահութահարկ՝ 20% դրույքաչափով	899,655	20	530,543	20
Չհարկվող եկամուտ այլ համապարփակ եկամուտի միջոցով իրական արժեքով չափվող	(59,908)	(1)	(3,002)	-
Չնվազեցվող ծախսեր	176,696	4	72,368	3
Արտարժույթի բացասական փոխարժեքային տարբերություն	69,498	2	7,725	-
Այլ չհարկվող եկամուտ և արտոնություններ	(3,479)	-	(12,534)	-
Հարկային դրույքաչափի փոփոխություն	(38,595)	(1)	-	-
Նախորդ տարվա ընթացիկ հարկին վերաբերող ճշգրտումներ	128,366	3	(20,410)	(1)
Ընդամենը շահութահարկի գծով ծախս/(փոխհատուցում)	1,172,233	27	574,690	22

2019թ. Հայաստանի Հանրապետությունում ընդունվել է շահութահարկի մասին նոր օրենք: Հետևաբար, 2020թ. Հունվարի 1-ի դրությամբ Հայաստանի Հանրապետությունում շահութահարկի դրույքաչափը կնվազի 20-ից 18% -ի: Այս փոփոխությունը հանգեցրել է 38,595 հազար ՀՀ դրամ շահույթի, որը կապված է 2019 թ. Դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա ընթացքում Բանկի հետաձգված հարկային ակտիվների և պարտավորությունների վերահաշվարկման հետ:

Ժամանակավոր տարբերությունների գծով հետաձգված հարկի հաշվարկ.

Հազար ՀՀ դրամ	2018	Շահույթում կամ վնասում ճանաչված	Այլ համապարփակ ֆինանսական արդյունքում ճանաչված	2019 Զուտ մնացորդ	Հետաձգված հարկային ակտիվ	Հետաձգված հարկային պարտավորություն
Հաշվեգրված ծախսեր և այլ պարտավորություններ	146,060	(68,736)	-	77,324	77,324	-
Հաճախորդներին տրված վարկեր և փոխատվություններ	131,906	(31,935)	-	99,971	99,971	-
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	7,290	(2,227)	-	5,063	5,063	-
Ներդրումային արժեթղթեր	(329,809)	(32,347)	(28,183)	(390,339)	-	(390,339)
Պայմանական պարտավորություններ	(30,621)	13,536	-	(17,085)	-	(17,085)
Պահանջներ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ	(17,398)	(26,067)	-	(43,465)	-	(43,465)
Հիմնական միջոցներ	(757,410)	111,098	(7,602)	(653,914)	-	(653,914)
Հետաձգված հարկային ակտիվ/ (պարտավորություն)	(849,982)	(36,678)	(35,785)	(922,445)	182,358	(1,104,803)

Հազար ՀՀ դրամ	2017	ՖՀՄՍ 9-ի ներդրման ազդեցությունը	Շահույթում կամ վնասում ճանաչված	Այլ համապարփակ ֆինանսական արդյունքում ճանաչված	2018 Զուտ մնացորդ	Հետաձգված հարկային ակտիվ	Հետաձգված հարկային պարտավորություն
Հաշվեգրված ծախսեր և այլ պարտավորություններ	127,876	-	18,184	-	146,060	146,060	-
Հաճախորդներին տրված վարկեր և փոխատվություններ	103,503	45,635	(17,232)	-	131,906	131,906	-
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	-	1,496	5,794	-	7,290	7,290	-
Ներդրումային արժեթղթեր	(410,127)	-	31,069	49,249	(329,809)	-	(329,809)
Պայմանական պարտավորություններ	(10,987)	20,682	(40,316)	-	(30,621)	-	(30,621)
Պահանջներ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ	(16,976)	29,764	(30,186)	-	(17,398)	-	(17,398)
Հիմնական միջոցներ	(889,295)	-	127,579	4,306	(757,410)	-	(757,410)
Հետաձգված հարկային ակտիվ/ (պարտավորություն)	(1,096,006)	97,577	94,892	53,555	(849,982)	285,256	(1,135,238)

15 Մեկ բաժնետոմսին ընկնող շահույթ

Հազար ՀՀ դրամ	2019	2018
Տարվա շահույթ	3,326,043	2,078,026
Հաշվարկված շահաբաժիններ արտոնյալ բաժնետոմսերի գծով	(781,821)	(232,438)
Սովորական բաժնետոմսերի սեփականատերերին վերագրվող զուտ շահույթ	2,544,222	1,845,588
Շրջանառության մեջ գտնվող սովորական բաժնետոմսերի կշռված միջին թիվ (հազար հատ)	1,852,533	1,852,533
Մեկ բաժնետոմսին բաժին ընկնող բազային շահույթը	1.37	1.00

16 Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ

Հազար ՀՀ դրամ	31 դեկտեմբերի 2019թ.	31 դեկտեմբերի 2018թ.
Թղթակցային հաշիվներ բանկերում	4,797,956	2,709,811
Թղթակցային հաշիվներ ՀՀ ԿԲ-ում	17,359,028	24,178,654
Կարճաժամկետ ավանդներ ՀՀ ԿԲ-ում	10,002,191	2,000,986
Կանխիկ դրամական միջոցներ	11,919,061	9,304,956
	44,078,236	38,194,407
Արժեզրկումից պահուստներ	(28,031)	(36,362)
Ընդամենը դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	44,050,205	38,158,045

2019 և 2018 թթ. դեկտեմբերի 31-ի դրությամբ թղթակցային հաշիվները ՀՀ ԿԲ-ում ներառում են նաև ՀՀ ԿԲ-ում տեղաբաշխված պարտադիր նվազագույն պահուստները, որոնք հաշվարկվում են Բանկի կողմից ներգրաված դրամային և արտարժույթով որոշ միջոցների համար՝ Կենտրոնական բանկի կողմից սահմանված կարգի համաձայն: Այդ միջոցները 2019թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ կազմում են 14,546,025 հազար դրամ (2018թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ՝ 12,920,769 հազար դրամ): Այդ միջոցների ելքագրումն արգելված չէ, սակայն պահուստավորման նվազագույն չափը չպահպանելը հանգեցնում է Կենտրոնական բանկի կողմից տույժերի կիրառման: Պարտադիր պահուստավորման միջոցների դիմաց Բանկը տոկոսներ չի ստանում:

2019թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ 3,850,956 հազար դրամ գումարով (81%) թղթակցային հաշիվները կենտրոնացված են երկու բանկերում, ինչն իրենից ներկայացնում է էական կենտրոնացում (2018թ. 2,137,329 հազար դրամ (79%)):

Դրամական միջոցների և դրանց համարժեքների գծով ակնկալվող պարտքային կորուստների փոփոխությունների վերլուծությունը ներկայացված է ստորև.

Հազար ՀՀ դրամ	2019թ.		2018թ.	
	12-ամսյա ակնկալվող պարտքային կորուստներ	Ընդամենը	12-ամսյա ակնկալվող պարտքային կորուստներ	Ընդամենը
Ակնկալվող պարտքային կորուստների պահուստ հունվարի 1-ի դրությամբ	36,362	36,362	7,479	7,479
Կորուստների գծով պահուստների զուտ վերաչափում	(8,331)	(8,331)	28,883	28,883
Մնացորդը դեկտեմբերի 31-ի դրությամբ	28,031	28,031	36,362	36,362

2019թ. Ընթացքում իրականացվել են հետևյալ անկանխիկ գործառնությունները.

- վարկի մարում գրավների տրամադրման միջոցով 83,798 հազար դրամ գումարով (2018թ.՝ 588,923 հազար դրամ) (Ծանոթ. 20):

17 Ածանցյալ ֆինանսական գործիքներ

Բանկը կնքում է գործարքներ տարբեր ածանցյալ ֆինանսական գործիքներով՝հիմնականում առևտրային և հեջավորման նպատակներով: Առկա ածանցյալ ֆինանսական գործիքների համախառն պայմանագրային կամ պայմանական գումարները, համաձայն որոնց գործիքները նպաստավոր են կամ ոչ, կարող են ժամանակ առ ժամանակ նշանակալիորեն տատանվել՝ հանգեցնելով ածանցյալ ֆինանսական ակտիվների և պարտավորությունների համախառն իրական արժեքների տատանման:

Ածանցյալ ֆինանսական գործիքների իրական արժեքները ներկայացված են ստորև.

Հազար ՀՀ դրամ	31 դեկտեմբերի 2019թ.			31 դեկտեմբերի 2018թ.		
	Պայմանական գումար	Ակտիվների իրական արժեք	Պարտավորությունների իրական արժեք	Պայմանական գումար	Ակտիվների իրական արժեք	Պարտավորությունների իրական արժեք
Արտարժույթով պայմանագրեր						
Արտաժութային սվոփ պայմանագրեր	7,860,161	7,522	3,106	11,614,959	16,059	-
Այլ ածանցյալ գործիքներ	180,313	-	6,207	124,089	1,409	-
Ընդամենը ածանցյալ ֆինանսական գործիքներ		7,522	9,313		17,468	-

18 Պահանջներ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ

Հազար ՀՀ դրամ	31 դեկտեմբերի 2019թ.	31 դեկտեմբերի 2018թ.
Բանկերին և ֆինանսական կազմակերպություններին տրամադրված վարկեր	11,272,076	10,052,146
Դեպոնացված միջոցներ քարտերի քլիրինգային գործարքների իրականացման գծով	1,423,933	1,918,970
Վճարային համակարգերով ստացվելիք գումարներ	1,480,236	1,284,666
Բանկերում դեպոնացված այլ գումարներ	60,713	75,992
Ֆինանսական կազմակերպություններից ստացման ենթակա այլ գումարներ	1,640	1,956
	14,238,598	13,333,730
Արժեզրկումից պահուստներ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ պահանջների գծով	(48,815)	(157,780)
Ընդամենը պահանջներ այլ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ	14,189,783	13,175,950

Քարտերի քլիրինգային գործարքների գծով դեպոնացված միջոցները իրենցից ներկայացնում են ԱրՔա, Visa և Mastercard վճարային համակարգերով իրականացվող փոխհաշվարկների երաշխիքային ավանդներ:

2019թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ բանկերին և ֆինանսական կազմակերպություններին տրամադրված միջին արդյունավետ տոկոսադրույքը ՀՀ դրամով վարկերի համար կազմում է 14.6%, ԱՄՆ դոլարով և Եվրոյով վարկերի համար 6.3% (2018թ.՝ 12.2% ՀՀ դրամով վարկերի համար, 7.9% ԱՄՆ դոլարով վարկերի համար):

Ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ պահանջների գծով ակնկալվող պարտքային կորուստների փոփոխությունների վերլուծությունը ներկայացվում է ստորև.

Հազար ՀՀ դրամ	2019թ.		2018թ.	
	12-ամսյա ակնկալվող պարտքային կորուստներ	Ընդամենը	12-ամսյա ակնկալվող պարտքային կորուստներ	Ընդամենը
Ակնկալվող պարտքային կորուստների պահուստ հունվարի 1-ի դրությամբ	157,780	157,780	154,577	154,577
Կորուստների գծով պահուստների զուտ վերաչափում	(108,965)	(108,965)	3,203	3,203
Մնացորդը դեկտեմբերի 31-ի դրությամբ	48,815	48,815	157,780	157,780

19 Հակադարձ հետգնման/հետգնման պայմանագրեր

Բանկն ունի գործարքներ հետգնման և հակադարձ հետգնման համաձայնագրերով: Ռեպո համաձայնագրերով փոխատվություն տրված կամ վաճառված արժեթղթերը փոխանցվում են երրորդ կողմին Բանկի կողմից ստացած կանխիկ դրամի փոխարեն: Այս ֆինանսական ակտիվները կարող են վերագրավադրվել կամ վերավաճառվել գործընկերների կողմից Բանկի կողմից պարտավորությունների չկատարման (դեֆոլտի) բացակայության դեպքում, սակայն գործընկերը պարտավորվում է վերադարձնել արժեթղթերը պայմանագրի ավարտին: Բանկի սահմանմամբ այդ արժեթղթերի գծով բոլոր ռիսկերն ու օգուտները պահպանվել են և այդ իսկ պատճառով դրանք չեն ապաճանաչվել: Այս գործարքներն իրականացվում են այն պայմաններով, որոնք ընդունված են ստանդարտ վարկավորման և արժեթղթերի փոխառության ու վարկային գործունեության ժամանակ, ինչպես նաև այնպիսի փոխանակման գործարքներում, որտեղ Բանկը հանդես է գալիս որպես միջնորդ:

Հակադարձ հետգնման պայմանագրեր

2019թ. Դեկտեմբերի 31-ի դրությամբ Բանկն ունի հակադարձ հետգնման պայմանագրեր

Հազար ՀՀ դրամ	31 դեկտեմբերի 2019թ.	31 դեկտեմբերի 2018թ.
Ֆինանսական կազմակերպությունների հետ կնքված ռեպո համաձայնագրեր	6,222,111	3,882,703
Ֆիզիկական անձանց հետ կնքված ռեպո համաձայնագրեր (տե՛ս ծանոթագրություն 20)	509,519	-
Ընդամենը հակադարձ հետգնման պայմանգրեր	6,731,630	3,882,703

2019թ. Դեկտեմբերի 31-ի դրությամբ այս հակադարձ հետգնման պայմանագրերով որպես գրավ ստացված ակտիվների իրական արժեքը, որոնք իրենցից ներկայացնում են պետական պարտքային արժեթղթեր, կազմել է 6,803,448 հազար ՀՀ դրամ (2018թ.՝ 3,946,554 հազար ՀՀ դրամ): Հակադարձ հետգնման պայմանագրերով տեղաբաշխված միջոցների միջին տոկոսադրույքը կազմում է 6.0% (2018թ.՝ 6.36%):

Հակադարձ հետգնման պայմանագրերով գրավադրված ամորտիզացված արժեքով չափվող ներդրումային արժեթղթերի պարտքային կորուստները մոտ են զրոյական արժեքի, այդ իսկ պատճառով չեն ճանաչվել և չեն բացահայտվել:

Հետգնման պայմանագրեր

Հազար ՀՀ դրամ	31 դեկտեմբերի 2019թ.	31 դեկտեմբերի 2018թ.
Հետգնման պայմանագրերով գրավադրված իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող պարտքային արժեթղթեր		
ՀՀ պետական պարտատոմսեր (սեփական) (Ծանոթ. 21)	20,180,825	17,454,208
ՀՀ պետական պարտատոմսեր (որպես գրավ ստացված) (Ծանոթ. 20)	6,803,448	3,946,554
Ընդամենը հետգնման պայմանագրերով գրավադրված իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող ներդրումային արժեթղթեր	26,984,273	21,400,762
Հետգնման պայմանագրերի հարակից պարտավորությունների հաշվեկշռային արժեք	25,623,028	20,519,048

2019 և 2018թթ. Դեկտեմբերի 31-ի դրությամբ հաշվեկշռային արժեքում ներառված հարակից պարտավորությունները հետգնման պայմանագրերի գծով իրենցից ներկայացնում են ՀՀ կենտրոնական բանկի և այլ ֆինանսական կազմակերպությունների հետ կնքած հետգնման պայմանագրեր, որոնց միջին տոկոսադրույքը կազմում է 5.66% (2018թ.՝ 5.99%):

20 Հաճախորդներին տրված վարկեր և փոխատվություններ

Հազար ՀՀ դրամ	31 դեկտեմբերի 2019թ.			31 դեկտեմբերի 2018թ.		
	Համախառն հաշվեկշռային արժեք	Ակնկալվող պարտքային կորուստների պահուստ	Հաշվեկշռային արժեք	Համախառն հաշվեկշռային արժեք	Արժեզրկման պահուստ	Հաշվեկշռային արժեք
Հիփոթեքային և սպառողական վարկեր						
Հիփոթեքային վարկեր	15,255,992	(55,140)	15,200,852	9,175,875	(41,571)	9,134,304
Սպառողական վարկեր	76,506,105	(747,231)	75,758,874	56,919,932	(359,583)	56,560,349
Առևտրային վարկեր						
Առևտուր	35,017,371	(380,190)	34,637,181	24,010,747	(708,696)	23,302,051
Արտադրություն	30,061,692	(823,350)	29,238,342	19,388,879	(369,185)	19,019,694
Շինարարություն	8,360,246	(38,007)	8,322,239	7,738,895	(703)	7,738,192
Գյուղատնտեսություն	2,441,389	(1,698)	2,439,691	1,132,017	(1,160)	1,130,857
Այլ ոլորտներ	10,550,745	(41,311)	10,509,434	16,771,858	(27,530)	16,744,328
Ընդամենը	178,193,540	(2,086,927)	176,106,613	135,138,203	(1,508,428)	133,629,775

Վերոնշյալ աղյուսակում ակնկալվող պարտքային կորուստների պահուստները ներառում են նաև որոշ վարկային պարտավորվածությունների գծով ակնկալվող պարտքային կորուստները (վճարային քարտեր և օվերդրաֆտներ), քանզի Բանկը չի կարող առանձնացնել վարկային պարտավորվածության բաղադրիչը ֆինանսական գործիքների բաղադրիչից:

2019թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ավարտված տարվա ընթացքում Բանկը ձեռք է բերել հաճախորդներին տրամադրված վարկերի դիմաց ստացած գրավներ, որոնց հաշվեկշռային արժեքը կազմել է 83,798 հազար դրամ (2018թ.՝ 588,923 հազար դրամ): Բանկը մտադիր է վաճառել այս ակտիվները կարճ ժամանակահատվածում: Տե՛ս ծանոթագրություն 16:

2019թ.-ի դեկտեմբերի 31-ի դրությամբ հաճախորդներին տրված վարկերի և փոխատվությունների միջին կշռված արդյունավետ տոկոսադրույքը կազմում է ՀՀ դրամով վարկերի համար 14.2% (2018թ.՝ 13.4%) և ԱՄՆ դոլարով, Եվրոյով վարկերի համար 8.7% (2018թ.՝ 9.0%), Ռուբլով վարկերի համար 16.0% (2018թ.՝ 16.0%):

2019թ. Դեկտեմբերի 31-ի դրությամբ Բանկն ունի էական կենտրոնացում տրամադրված վարկերի գծով 32,748,537 հազար դրամ (համախառն վարկային պորտֆելի 18.4%-ը) ընդհանուր գումարով, տրամադրված թվով 10 վարկառուների և նրանց հետ փոխկապակված անձանց (2018թ.՝ 39,514,638 հազար դրամ կամ 29.2%՝ տրամադրված թվով 10 վարկառուների և նրանց հետ փոխկապակցված անձանց): Նշված վարկերի գծով արժեզրկումից պահուստները կազմում են 383,537 հազար դրամ (2018թ.՝ 441,067 հազար դրամ):

2019թ. Դեկտեմբերի 31-ի դրությամբ սպառողական վարկերի մեջ ներառված են նաև ֆիզիկական անձանց հետ կնքված հակադարձ հետգնման պայմանագրեր ընդհանուր 509,519 հազ. ՀՀ դրամ համախառն գումարով (տես ծանոթագրություն 19-ում):

2019թ. Դեկտեմբերի 31-ի դրությամբ հաճախորդների տրված վարկերը 7,862,381 հազար դրամ համախառն գումարով (2018թ.՝ 4,405,847 հազար դրամ) հանդիսացել են փոխառու միջոցների նկատմամբ իրավունքի փոխանցում (տես ծանոթագրություն 26):

Հիփոթեքային, սպառողական և առևտրային վարկերի գծով ակնկալվող պարտքային կորուստների պահուստներում փոփոխությունների վերլուծությունը ներկայացված է ստորև.

Հազար ՀՀ դրամ	2019	2018
Հիփոթեքային և սպառողական վարկեր		
Ակնկալվող պարտքային կորուստների պահուստ հունվարի 1-ի դրությամբ	401,154	460,500
Կորուստների գծով պահուստների զուտ վերաչափում	570,083	49,442
Վերականգնում	138,715	158,832
Դուրսգրում տարվա ընթացքում	(307,581)	(267,620)
Մնացորդ դեկտեմբերի 31-ի դրությամբ	802,371	401,154

Հազար ՀՀ դրամ	2019	2018
Առևտրային վարկեր		
Ակնկալվող պարտքային կորուստների պահուստ հունվարի 1-ի դրությամբ	1,107,274	1,372,796
Կորուստների գծով պահուստների զուտ վերաչափում	47,355	363,770
Վերականգնում	130,594	101,506
Դուրսգրում տարվա ընթացքում	(667)	(730,798)
Մնացորդ դեկտեմբերի 31-ի դրությամբ	1,284,556	1,107,274

2019թ. և 2018թ. Դեկտեմբերի 31-ի դրությամբ համախառն վարկերի գծով շարժը ըստ փուլերի հետևյալն է՝

Համախառն գումար	Մնացորդը 2019թ. հունվարի 1-ի դրությամբ	Փուլ 1	Փուլ 2	Փուլ 3	Մարված կամ դուրսգրված վարկեր	2019թ. Տրամադրված նոր վարկեր	Մնացորդը 2019թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Փուլ 1	134,854,044	-	(89,618)	(1,745,597)	(67,757,653)	110,980,739	176,241,915
Փուլ 2	112,491	89,618	-	(2,998)	(93,664)	37,790	143,237
Փուլ 3	171,668	1,745,597	2,998	-	(171,137)	59,262	1,808,388
Ընդամենը	135,138,203	1,835,215	(86,620)	(1,748,595)	(68,022,454)	111,077,791	178,193,540

Համախառն գումար	Մնացորդը 2018թ. հունվարի 1-ի դրությամբ	Փուլ 1	Փուլ 2	Փուլ 3	Մարված կամ դուրսգրված վարկեր	2018թ. Տրամադրված նոր վարկեր	Մնացորդը 2018թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Փուլ 1	104,719,081	-	(58,856)	(115,468)	(46,070,805)	76,380,092	134,854,044
Փուլ 2	140,754	58,856	-	(8,035)	(79,087)	3	112,491
Փուլ 3	252,225	115,468	8,035	-	(211,205)	7,145	171,668
Ընդամենը	105,112,060	174,324	(50,821)	(123,503)	(46,361,097)	76,387,240	135,138,203

2019թ. Դեկտեմբերի 31-ի դրությամբ ակնկալվող պարտքային կորուստների գծով շարժը ըստ փուլերի հետևյալն է՝

Ակնկալվող պարտքային կորուստներ	Մնացորդը 2019թ. Հունվարի 1-ի դրությամբ	Փուլ 1	Փուլ 2	Փուլ 3	Մարված կամ դուրսգրված վարկեր	2019թ. Տրամադրված նոր վարկեր	Մնացորդը 2019թ. Դեկտեմբերի 31-ի դրությամբ
Փուլ 1	1,353,074	-	(20,475)	(727,725)	(174,403)	863,567	1,294,038
Փուլ 2	27,822	20,475	-	(1,904)	(25,605)	10,325	31,113
Փուլ 3	127,532	727,725	1,904	-	(127,131)	31,746	761,776
Ընդամենը	1,508,428	748,200	(18,571)	(729,629)	(327,139)	905,638	2,086,927

Վարկային պորտֆելի ակնկալվող պարտքային կորուստների աճը պայմանավորված է եղել համախառն պորտֆելի աճով և պարտքային ռիսկի աճի եւ տնտեսական պայմանների վատթարացման հետևանքով փուլերի միջև շարժով: Տնտեսական գործոնների հետագա վերլուծությունը ներկայացված է 37.1.2 ծանոթագրությունում:

Ինչպես նշված է 34 ծանոթագրությունում, 2019թ. Դեկտեմբերի 31-ի և 2018թ. Դեկտեմբերի 31-ի դրությամբ վարկերի և փոխատվությունների գնահատված իրական արժեքը մոտ է դրանց հաշվեկշռային արժեքին:

Հաճախորդներին տրված վարկերի և փոխատվությունների ժամկետային վերլուծությունը ներկայացված է 36 ծանոթագրությունում:

Հաճախորդներին տրված վարկերի և փոխատվությունների պարտքային, փոխարժեքային և տոկոսադրույքային վերլուծությունը բացահայտված է 37 ծանոթագրությունում: Տեղեկատվությունը կապակցված անձանց հետ գործարքների վերաբերյալ բացահայտված է 33 ծանոթագրությունում:

21 Ներդրումային արժեթղթեր

Հազար ՀՀ դրամ	31 դեկտեմբերի 2019թ.	31 դեկտեմբերի 2018թ.
Ամորտիզացված արժեքով ներդրումային արժեթղթեր		
ՀՀ կորպորատիվ պարտատոմսեր	481,592	-
Արժեզրկման գծով պահուստ	(2,195)	-
Ընդամենը ամորտիզացված արժեքով ներդրումային արժեթղթեր	479,397	-
Իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող պարտքային արժեթղթեր		
ՀՀ պետական պարտատոմսեր	24,337,606	18,627,928
ՀՀ կորպորատիվ պարտատոմսեր	600,091	1,034,529
Բաժնային գործիքներ	89,827	89,769
Ընդամենը իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող ներդրումային արժեթղթեր	25,027,524	19,752,226
Ընդամենը ներդրումային արժեթղթեր	25,506,921	19,752,226

Ամորտիզացված արժեքով չափվող ներդրումային արժեթղթերի գծով ակնկալվող պարտքային կորուստների փոփոխությունների վերլուծությունը ներկայացված է ստորև.

Հազար ՀՀ դրամ	2019թ.		2018թ.	
	Փուլ 1	Ընդամենը	Փուլ 1	Ընդամենը
Ակնկալվող պարտքային կորուստների պահուստ հունվարի 1-ի դրությամբ	-	-	-	-
Կորուստների գծով պահուստների զուտ վերաչափում	2,195	2,195	-	-
Մնացորդը դեկտեմբերի 31-ի դրությամբ	2,195	2,195	-	-

Իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող, ներառյալ հետգնման պայմանագրերով գրավադրված ներդրումային արժեթղթերի գծով ակնկալվող պարտքային կորուստների փոփոխությունների վերլուծությունը ներկայացված է ստորև.

Հազար ՀՀ դրամ	2019թ.		2018թ.	
	Փուլ 1	Ընդամենը	Փուլ 1	Ընդամենը
Ակնկալվող պարտքային կորուստների պահուստ հունվարի 1-ի դրությամբ	227,486	227,486	208,675	208,675
Կորուստների գծով պահուստների զուտ վերաչափում	(173,887)	(173,887)	18,811	18,811
Մնացորդը դեկտեմբերի 31-ի դրությամբ	53,599	53,599	227,486	227,486

Բոլոր պարտքային արժեթղթերն ունեն հաստատուն տոկոսներ:

Բանկը տարվա ընթացքում ամորտիզացված արժեքով չափվող որևէ ֆինանսական ակտիվ չի վերադասակարգել որպես իրական արժեքով չափվող (2018թ. նույնպես):

Ամորտիզացված արժեքով ներդրումային արժեթղթերն ըստ արդյունավետ տոկոսադրույքների և մարմանը մնացած ժամկետների.

Հազար ՀՀ դրամ	31 դեկտեմբերի 2019թ.		31 դեկտեմբերի 2018թ.	
	%	Ժամկետ	%	Ժամկետ
ՀՀ կորպորատիվ պարտատոմսեր	8.5%	2021	-	-

Իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող ներդրումային արժեթղթերն ըստ եկամտաբերության և մարմանը մնացած ժամկետների ներառում են.

Հազար ՀՀ դրամ	31 դեկտեմբերի 2019թ.		31 դեկտեմբերի 2018թ.	
	%	Ժամկետ	%	Ժամկետ
ՀՀ պետական պարտատոմսեր	7.5%-13%	2020-2047	8%-13%	2019-2047
ՀՀ կորպորատիվ պարտատոմսեր	4%-8.3%	2021	5.25%-12%	2019-2021

2019թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող ներդրումային արժեթղթերը 20,180,825,հազար դրամ գումարով (2018թ. 17,454,208 հազար դրամ) գրավադրվել էին այլ բանկից ստացված վարկի դիմաց (Ծանոթ. 19):

22 Հիմնական միջոցներ

	Հող և շենքեր	Փոխադրա-միջոցներ	Համակար-գիչներ	Կապիտալ ներդրումներ վարձակալ-ված հիմնական միջոցներում	Այլ	Օգտագործ-ման իրավունքի ձևով ակտիվներ Հող և շենքեր	Ընդամենը
Սկզբնական արժեք կամ վերագնահատված արժեք							
2018թ. Հունվարի 1-ի դրությամբ	7,524,174	714,558	2,396,798	262,084	1,934,313	-	12,831,927
Ավելացում	898,268	73,370	594,338	115,320	410,032	-	2,091,328
Օտարում	(359,503)	(76,432)	(7,591)	-	-	-	(443,526)
Վերադասակարգում	(1,058)	-	-	-	1,058	-	-
2018թ. Դեկտեմբերի 31-ի դրությամբ	8,061,881	711,496	2,983,545	377,404	2,345,403	-	14,479,729
ՖՀՄՍ 16-ի անցման հետևանքով ճշգրտում	-	-	-	-	-	1,875,205	1,875,205
2019թ. Հունվարի 1-ի դրությամբ	8,061,881	711,496	2,983,545	377,404	2,345,403	1,875,205	16,354,934
Ավելացում	308,847	77,599	566,390	78,012	176,030	69,038	1,275,916
Օտարում	(480,966)	(34,121)	(154,593)	(9,000)	(215,592)	-	(894,272)
Վերագնահատում	485,717	-	-	-	-	-	485,717
Վերագնահատման արդյունքում մաշվածության ճշգրտում	(302,254)	-	-	-	-	-	(302,254)
Վերադասակարգում	-	-	197,543	-	(197,543)	-	-
2019թ. Դեկտեմբերի 31-ի դրությամբ	8,073,225	754,974	3,592,885	446,416	2,108,298	1,944,243	16,920,041
Կուտակված մաշվածություն							

	Հող և շենքեր	Փոխադրա-միջոցներ	Համակար-գիչներ	Կապիտալ ներդրումներ վարձակալ-ված հիմնական միջոցներում	Այլ	Օգտագործ-ման իրավունքի ձևով ակտիվներ Հող և շենքեր	Ընդամենը
2018թ. Հունվարի 1-ի դրությամբ	290,585	218,792	1,672,425	73,459	1,271,969	-	3,527,230
Տարվա ծախս	180,736	86,645	216,985	18,295	163,202	-	665,863
Օտարում	(2,872)	(33,755)	(7,591)	-	-	-	(44,218)
2018թ. Դեկտեմբերի 31-ի դրությամբ	468,449	271,682	1,881,819	91,754	1,435,171	-	4,148,875
Տարվա ծախս	208,273	85,001	267,692	22,990	184,949	584,314	1,353,219
Վերագնահատման արդյունքում մաշվածության ճշգրտում	(302,254)	-	-	-	-	-	(302,254)
Օտարում	(165,626)	(19,427)	(152,092)	(1,156)	(203,744)	-	(542,045)
Վերադասակարգում	-	-	152,337	-	(152,337)	-	-
2019թ. Դեկտեմբերի 31-ի դրությամբ	208,842	337,256	2,149,756	113,588	1,264,039	584,314	4,657,795
Հաշվեկշիռային արժեք							
2018թ. Դեկտեմբերի 31-ի դրությամբ	7,593,432	439,814	1,101,726	285,650	910,232	-	10,330,854
2019թ. Դեկտեմբերի 31-ի դրությամբ	7,864,383	417,718	1,443,129	332,828	844,259	1,359,929	12,262,246

Ակտիվների վերագնահատում

Բանկի հողը և շենքերը, համակարգչային տեխնիկան և կապի միջոցները ներկայացված են վերագնահատված արժեքով: Հողի և շենքերի վերջին վերագնահատումը կատարվել է անկախ գնահատողի կողմից 2019թ. հունվարին՝ կիրառելով համեմատական վաճառքների մեթոդը, որի արդյունքում առաջացել է վերագնահատումից հաշվեկշռային արժեքի զուտ աճ 485,717 հազար դրամ գումարով: Հողի և շենքերի իրական արժեքի գնահատման համար ղեկավարությունը հիմք է ընդունում անկախ գնահատողների կողմից ներկայացված արդյունքները:

Եթե հողը և շենքերը ներկայացվեին սկզբնական արժեքի և կուտակված մաշվածության տարբերությամբ, հաշվեկշռային արժեքը 2019թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ կկազմեր՝ 3,695,514 հազար դրամ (2018թ՝ 3,097,863 հազար դրամ):

Վարձակալված հիմնական միջոցներ

2019թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ վարձակալված մասնաճյուղերի հետ կապված 1,359,929 հազար դրամ գումարով օգտագործման իրավունքի ձևով ակտիվները ներառված են հիմնական միջոցներում (տե՛ս ծանոթագրություն 32):

Ամբողջությամբ մաշված ակտիվներ

2019թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ հիմնական միջոցների ցանկում ներառված ամբողջությամբ մաշված ակտիվների սկբնական արժեքը կազմում է 666,625 հազար դրամ (2018թ. 1,095,294 հազար դրամ):

Հիմնական միջոցների սահմանափակումներ

2019թ-ի դեկտեմբերի 31-ի դրությամբ Բանկը չի տիրապետել պարտավորությունների դիմաց գրավադրված կամ որևէ այլ սահմանափակման ենթակա հիմնական միջոցների (2018թ.՝ նույնպես):

Պայմանագրային պարտավորություններ

2019թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Բանկը չունի պայմանագրային պարտավորություններ հիմնական միջոցներում ներդրումներ կատարելու նպատակով (2018թ.՝ նույնպես):

23 Ոչ նյութական ակտիվներ

Հազար ՀՀ դրամ	Լիցենզիաներ	Համակարգ-չային ծրագրեր	Այլ	Մշակումից առաջացող ոչ նյութական ակտիվ	Ընդամենը
Սկզբնական արժեք					
2018թ. Հունվարի 1-ի դրությամբ	254,870	150,155	75,637	-	480,662
Ավելացում	92,919	142,707	132	-	235,758
Օտարում	(338)	-	-	-	(338)
Վերադասակարգում	44,762	1,056	(45,818)	-	-
2018թ. Դեկտեմբերի 31-ի դրությամբ	392,213	293,918	29,951	-	716,082
Ավելացում	25,002	7,368	599	60,000	92,969
2019թ. Դեկտեմբերի 31-ի դրությամբ	417,215	301,286	30,550	60,000	809,051
Կուտակված ամորտիզացիա					
2018թ. Հունվարի 1-ի դրությամբ	109,791	36,584	13,169	-	159,544
Մասհանումներ	31,091	16,177	3,015	-	50,283
Օտարում	(338)	-	-	-	(338)
Վերադասակարգում	-	1,056	(1,056)	-	-
2018թ. Դեկտեմբերի 31-ի դրությամբ	140,544	53,817	15,128	-	209,489
Մասհանումներ	44,649	26,005	3,080	-	73,734
2019թ. Դեկտեմբերի 31-ի դրությամբ	185,193	79,822	18,208	-	283,223
Հաշվեկշռային արժեք					
2018թ. Դեկտեմբերի 31-ի դրությամբ	251,669	240,101	14,823	-	506,593
2019թ. Դեկտեմբերի 31-ի դրությամբ	232,022	221,464	12,342	60,000	525,828

Պայմանագրային պարտավորություններ

2019թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Բանկը ունի 114,000 հազար դրամի պայմանագրային պարտավորություններ ոչ նյութական ակտիվներում ներդրումների գծով: Սույն պարտավորությունները կապված են մշակման փուլում գտնվող Բանկի մոբայլ հավելվածի մշակման և ներդրման հետ, որի գծով Բանկը 2019թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ճանաչել է 60,000 հազար դրամ ոչ նյութական ակտիվ՝ ելնելով ՀՀՄՍ 38-ի դրույթներից:

2019թ.-ի դեկտեմբերի 31-ի դրությամբ Բանկը չի տիրապետել պարտավորությունների դիմաց գրավադրված կամ որևէ այլ սահմանափակման ենթակա ոչ նյութական ակտիվների:

2019թ-ի դեկտեմբերի 31-ի դրությամբ ոչ նյութական ակտիվների ներառված ամբողջությամբ մաշված ակտիվների սկբնական արժեքը կազմում է 32,216 հազար դրամ (2018թ.՝ 31,560 հազար դրամ):

24 Այլ ակտիվներ

Հազար ՀՀ դրամ	31 դեկտեմբերի 2019թ.	31 դեկտեմբերի 2018թ.
Աշխատակիցներին տրված հատուցումներ	51,324	60,378
Ստացման ենթակա գումարներ	31,919	78,470
Արժեզրկումից պահուստներ այլ ակտիվների գծով	(12,860)	(9,468)
Ընդամենը այլ ֆինանսական ակտիվներ	70,383	129,380
Բռնագանձված ակտիվներ	590,116	802,163
Կանխավճարներ և այլ դեբիտորական պարտքեր	733,754	760,888
Նյութեր	302,344	373,018
Թանկարժեք մետաղներ	51,728	116,058
Այլ ակտիվներ	62,972	62,276
Ընդամենը ոչ ֆինանսական ակտիվներ	1,740,914	2,114,403
Ընդամենը այլ ակտիվներ	1,811,297	2,243,783

Այլ ֆինանսական ակտիվների գծով ակնկալվող պարտքային կորուստներում փոփոխությունների վերլուծությունը ստորև.

Հազար ՀՀ դրամ	2019թ.		2018թ.	
	Փուլ 1	Ընդամենը	Փուլ 1	Ընդամենը
Ակնկալվող պարտքային կորուստների պահուստ հունվարի 1-ի դրությամբ	9,468	9,468	15,800	15,800
Կորուստների գծով պահուստների զուտ վերաչափում	67,269	67,269	(6,332)	(6,332)
Դուրսգրում	(66,835)	(66,835)	-	-
Վերականգնում	2,958	2,958	-	-
Մնացորդը դեկտեմբերի 31-ի դրությամբ	12,860	12,860	9,468	9,468

Տարվա ընթացքում Բանկի կողմից տրամադրված վարկերի ապահովվածություն հանդիսացող գրավների նկատմամբ սեփականության իրավունք ստանալու արդյունքում ձեռք բերված ոչ ֆինանսական ակտիվների մանրամասները ներկայացված են ստորև.

Հազար ՀՀ դրամ	31 դեկտեմբերի 2019թ.	31 դեկտեմբերի 2018թ.
Անշարժ գույք	590,116	802,163
Ընդամենը բռնագանձված ակտիվներ	590,116	802,163

Բռնագանձման ամսաթվի դրությամբ գրավը չափվում է չմարած վարկային պարտավորության հաշվեկշռային արժեքից և գրավի իրացման զուտ արժեքից նվազագույնով:

Բանկի քաղաքականությունն է հետամուտ լինել այդ ակտիվների իրացմանը պատշաճ կերպով և սեղմ ժամկետներում: Բանկը հիմնականում չի օգտագործում ոչ կանխիկ գրավները իր սեփական գործունեության իրականացման համար: Ակտիվները չափվում են հաշվեկշռային արժեքից և իրական արժեքից հանած վաճառքի ծախսումները նվազագույնով:

25 Թողարկված պարտքային արժեթղթեր

Հազար ՀՀ դրամ	31 դեկտեմբերի 2019թ.	31 դեկտեմբերի 2018թ.
Պարտատոմսեր	4,452,356	2,060,960
Ընդամենը թողարկված պարտքային արժեթղթեր	4,452,356	2,060,960

2019թ. Դեկտեմբերի 31-ի դրությամբ Բանկը թողարկել է տոկոսային պարտատոմսեր հետևյալ պայմաններով.

Թողարկման ամսաթիվ	Արժույթ	Արժեքը մեկ պարտատոմսի դիմաց	Քանակ	%	Պարտատոմսի մարման ժամկետ	Ընդամենը անվանական արժեք
25.04.2018	ԱՄՆ դոլար	100	20,000	5.00	25.07.2020	2,000,000
29.01.2019	ԱՄՆ դոլար	100	21,000	5.25	29.01.2022	2,100,000
03.05.2019	ԱՄՆ դոլար	100	30,000	5.50	03.05.2022	3,000,000
03.05.2019	ՀՀ դրամ	10,000	100,000	10.25	03.05.2022	1,000,000,000

Բանկի պարտատոմսերը ցուցակված են «ՆԱՍԴԱՔ ՕԷՄԷՔՍ Արմենիա» ֆոնդային բորսայում:

Տարվա ընթացքում Բանկը հետ չի գնել իր կողմից թողարկված որևէ պարտատոմս (2018թ.: ոչինչ):

Հաշվետու ժամանակաշրջանում Բանկը չի ունեցել մայր գումարի, տոկոսների չվճարումներ կամ այլ խախտումներ (2018թ.՝ ոչինչ):

26 Այլ փոխառու միջոցներ

Հազար ՀՀ դրամ	31 դեկտեմբերի 2019թ.	31 դեկտեմբերի 2018թ.
Վարկեր ՀՀ Կենտրոնական բանկից	9,258,543	6,030,003
Կանխավճարներ ՀՀ Կառավարությունից	47,504	25,314
Ընդամենը վարկեր ՀՀ Կենտրոնական բանկից և կառավարությունից	9,306,047	6,055,317
Վարկեր ֆինանսական կազմակերպություններից	22,670,344	19,938,064
Ավանդներ ֆինանսական կազմակերպություններից	21,796,419	12,942,681
Ֆինանսական կազմակերպությունների ընթացիկ հաշիվներ	1,229,822	1,079,460
Այլ բանկերի թղթակցային հաշիվներ	72,352	8,693
Այլ	140,556	116,893
Ընդամենը պարտավորություններ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ	45,909,493	34,085,791
Վարկեր միջազգային ֆինանսական կազմակերպություններից	36,707,937	24,059,690
Ընդամենը վարկեր միջազգային ֆինանսական կազմակերպություններից	36,707,937	24,059,690
Ընդամենը այլ փոխառու միջոցներ	91,923,477	64,200,798

ՀՀ ԿԲ-ից և ՀՀ Կառավարությունից ստացված վարկերը ներկայացնում են վարկեր ստացված գերմանա-հայկական հիմնադրամի «Փոքր և միջին բիզնեսի վարկային ծրագրի» ֆինանսավորման շրջանակներում, «Վերականգնվող էներգետիկա» և «Բնակարանային ֆինանսավորում» ծրագրերի շրջանակներում ներգրավված միջոցները:
2019թ. Դեկտեմբերի 31-ի դրությամբ ՀՀ Կառավարությունից ստացված ՀՀ դրամով վարկերի միջին կշռված արդյունավետ տոկոսադրույքը կազմում է 7.60%, (2018թ.՝ ՀՀ դրամով վարկերի միջին կշռված արդյունավետ տոկոսադրույքը կազմում է 7.94%):
2019 և 2018 թթ. Դեկտեմբերի 31-ի դրությամբ ֆինանսական կազմակերպություններից ստացված վարկերը և ավանդներն իրենցից ներկայացնում են ռեզիդենտ և ոչ ռեզիդենտ բանկերից ստացված վարկեր և ավանդներ:

2019թ-ի դեկտեմբերի 31-ի դրությամբ ֆինանսական կազմակերպություններից ներգրավված ՀՀ դրամով վարկերի գծով միջին կշռված արդյունավետ տոկոսադրույքը կազմում է 5.64% (2018թ.՝ 7.64%), ԱՄՆ դոլարով, Եվրոյով և այլ ազատ փոխարկելի արտարժույթներով պարտավորությունների համար 2.89% (2018թ.՝ 5%):

2019թ-ի դեկտեմբերի 31-ի դրությամբ ֆինանսական կազմակերպություններից ներգրավված ՀՀ դրամով ավանդների գծով միջին կշռված արդյունավետ տոկոսադրույքը կազմում է 9.77% (2018թ.՝ 10.58%), ԱՄՆ դոլարով, Եվրոյով և այլ ազատ փոխարկելի արտարժույթներով պարտավորությունների համար 4.01% (2018թ.՝ 4.02%):

Բանկերից ներգրավված բոլոր ավանդները ունեն հաստատուն տոկոսադրույքներ: Ֆինանսական կազմակերպություններից ստացված վարկերը ունեն հաստատուն և փոփոխական տոկոսադրույքներ:

2019թ. Դեկտեմբերի 31-ի դրությամբ ֆինանսական կազմակերպություններից ներգրավված փոխառություններն ապահովված են հաճախորդներին տրված 7,862,381 հազար դրամ

համախառն գումարով (2018թ.՝ 4,405,847 հազար դրամ) վարկերի նկատմամբ պահանջի իրավունքով(տես ծանոթագրություն 20):

2019թ. Դեկտեմբերի 31-ին ավարտված ֆինանսական տարվա համար Բանկը չի ունեցել միջազգային ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ պարտավորությունների մայր գումարի կամ տոկոսների չվճարումներ կամ այլ խախտումներ (2018թ.՝ նույնը):

2019 և 2018թթ. Դեկտեմբերի 31-ի դրությամբ միջազգային ֆինանսական կազմակերպություններից ստացված վարկեր, ներառյալ հաշվեգրված տոկոսները, կապիտալի և ֆինանսական որոշակի սահմանված պայմաններ ունեցող վարկերը, ներկայացված են ստորև բերված աղյուսակում:

Հազար ՀՀ դրամ

	Արժույթ	2019թ. Դեկտեմբերի 31			2018թ. Դեկտեմբերի 31		
		Մարման ժամկետ	Անվանական տոկոսադրույք, %	Հաշվեկշռային արժեք	Մարման ժամկետ	Անվանական տոկոսադրույք, %	Հաշվեկշռային արժեք
ՎԶԵԲ	ՀՀ դրամ	4-5 տարի	4%-7.32%	5,814,425	5 տարի	7.28%	962,371
Symbiotics SA	ՀՀ դրամ	4 տարի	8.83%-11.67%	4,941,443	4 տարի	11.67%	2,539,132
ՎԶԵԲ	ԵՎՐՈ	1 տարուց պակաս	2-2.3%	1,261,454	-	-	-
FMO	ԱՄՆ դոլար	4-5 տարի	5.19%-5.67%	9,545,038	-	-	-
DEG	ԱՄՆ դոլար	7 տարի	7.21%	4,926,242	7 տարի	7.52%	4,966,974
INCOFIN CVBA	ԱՄՆ դոլար	4 տարի	5.56%-7.22%	4,684,495	4 տարի	5.56%	4,841,134
BSTDB	ԱՄՆ դոլար	4-5 տարի	5.05%	2,394,446	-	-	-
GII	ԱՄՆ դոլար	4 տարի	5.55%	1,456,626	3-4 տարի	5%-5.55%	3,876,980
EFA	ԱՄՆ դոլար	2-3 տարի	6.67%	1,195,435	2-3 տարի	6.67%	1,201,566
GLS այլընտրանքային ներդրումներ – Mikrofinanzfonds	ԱՄՆ դոլար	3 տարի	6.67%	488,333	3 տարի	6.67%	491,100
ԲյուՕրչարդ Մայքրոֆայնենս հիմնադրամ ՍՊԸ	ԱՄՆ դոլար	-	-	-	3 տարի	8.33%	812,081
Ասիական զարգացման բանկ	ԱՄՆ դոլար	-	-	-	1 տարուց պակաս	4.76%-5.15%	1,462,058
MSME BSA	ԱՄՆ դոլար	-	-	-	2-4 տարի	6.89%	2,422,967
FNSCA	ԱՄՆ դոլար	-	-	-	3 տարի	5%	483,327
Ընդամենը				36,707,937			24,059,690

Բանկը պարտավոր է համապատասխանություն ապահովել վերոնշյալ փոխառու միջոցների գծով առկա ֆինանսական դրույթների հետ: Այդ դրույթները ներառում են սահմանված դրույքաչափերը, վարկ/կապիտալ հարաբերակցությունը և ֆինանսական գործունեությանն առնչվող մի շարք այլ տվյալներ: Բանկի կողմից չի արձանագրվել այս դրույթներից որևէ մեկի խախտում 2019թ. Դեկտեմբերի 31-ի դրությամբ (2018թ.՝ նույնպես): 2018թ. Դեկտեմբերի 31-ի դրությամբ բացառություն են կազմել հետևյալը.

- Մեկ կողմի գծով ռիսկի ենթարկվածության գործակիցը DEG ընկերության և ՎՀԵԲ-ի կողմից ստացված վարկի մասով;
- Բարձր իրացվելի ակտիվներ/ընդհանուր ակտիվներ հարաբերակցությունը ԲլյուՕրչարդ Մայքրոֆայնենս հիմնադրամի կողմից ստացված վարկի մասով:

2018թ. Դեկտեմբերի 31-ի դրությամբ բանկի իրացվելիության վիճակի վերլուծության նպատակով Բանկը միջազգային ֆինանսական հաստատություններից բոլոր փոխառությունները ներառել է ցպահանջ կատեգորիայում, քանի որ այդ հաստատությունների հետ ունեցած պայմանագրերը ներառում են պարտավորությունների փոխադարձ չկատարման մասին դրույթներ (տե՛ս ծանոթագրություն՝ 37.3): Ղեկավարության հաստատուն համոզվածությունն այնպիսին է, որ նշված վարկերն ամբողջությամբ կմարվեն ըստ իրենց պայմանագրով նախատեսված ժամկետների:

2019թ. Ընթացքում Բանկը ստացել է զիջում երեք վարկատուներից երկուսի կողմից պայմանագրային որոշ պահանջների խախտման մասով: Երրորդ վարկատուի կողմից Բանկը ստացել է էլեկտրոնային հաստատում առ այն, որ վարկատուն չի պահանջելու վարկի վաղաժամկետ մարում:

27 Պարտավորություններ հաճախորդների նկատմամբ

Հազար ՀՀ դրամ	31 դեկտեմբերի 2019թ.	31 դեկտեմբերի 2018թ.
Իրավաբանական անձինք		
Ընթացիկ/հաշվարկային հաշիվներ	20,817,396	18,902,627
Ժամկետային ավանդներ	9,067,041	4,508,519
	29,884,437	23,411,146
Ֆիզիկական անձինք		
Ընթացիկ/հաշվարկային հաշիվներ	23,526,027	20,320,693
Ժամկետային ավանդներ	59,956,414	52,096,929
	83,482,441	72,417,622
Ընդամենը պարտավորություններ հաճախորդների նկատմամբ	113,366,878	95,828,768

Ֆիզիկական և իրավաբանական անձանց ավանդներն ունեն հաստատուն տոկոսադրույքներ:

2019թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ իրավաբանական/ֆիզիկական անձանց ընթացիկ (ժամկետային) ավանդներում ներառված են ավանդներ, որոնք հանդիսանում են ապահովածություն տրամադրված վարկերի, ակրեդիտիվների, երաշխիքների և այլ պայմանական պարտավորությունների գծով համապատասխանաբար 4,791,467 հազար դրամ գումարով (2018թ. 1,026,805 հազար դրամ): Այդ ավանդների իրական արժեքը մոտ է դրանց հաշվեկշռային արժեքին:

2019թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Բանկի ամենամեծ տաս հաճախորդների ավանդների ընդհանուր գումարը (ներառյալ փոխկապակցված անձինք, տես ծանոթ. 33) կազմում է 21,815,937 հազար դրամ (2018թ. 21,720,218 հազար դրամ) կամ հաճախորդների ավանդների ընդհանուր գումարի 19%. (2018թ. 23%):

2019թ-ի դեկտեմբերի 31-ի դրությամբ հաճախորդների նկատմամբ ՀՀ դրամով պարտավորությունների գծով միջին կշռված արդյունավետ տոկոսադրույքը կազմում է 9.5% (2018թ.՝ 10.3%), ԱՄՆ դոլարով, Եվրոյով և այլ ազատ փոխարկելի արտարժույթներով պարտավորությունների համար 4.3% (2018թ.՝ 4.6%):

2019թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Բանկը չի ունեցել իր հաճախորդների նկատմամբ պարտավորությունների մայր գումարի, տոկոսների չվճարումներ կամ այլ խախտումներ (2018թ.՝ նույնպես):

28 Ստորադաս փոխառություններ

Հազար ՀՀ դրամ	31 դեկտեմբերի 2019թ.	31 դեկտեմբերի 2018թ.
Ֆիզիկական անձանց կողմից ստացված ստորադաս փոխառություն	719,787	-
Կապակցված կողմից ստացված ստորադաս փոխառություններ	-	3,382,149
Ընդամենը ստորադաս փոխառություն	719,787	3,382,149

Ստորադաս փոխառությունն իրենից ներկայացնում է երկարաժամկետ վարկային համաձայնագիր, որը Բանկի անվճարունակության դեպքում դասվում է երկրորդական Բանկի մնացած պարտավորությունների նկատմամբ՝ ներառյալ ավանդները և այլ պարտքային գործիքները:

Ֆիզիկակական անձանց կողմից ներգրավված ստորադաս փոխառությունների մարման ժամկետ է սահմանված մինչև 2026թ.:

2019թ. Դեկտեմբերի 31-ի դրությամբ ԱՄՆ դոլարով փոխառությունների գծով ստորադաս փոխառությունների գծով տարեկան տոկոսադրույքը կազմում է 6% (2018թ.՝ 9.9%) ՀՀ դրամով առկա չեն (2018թ.՝ 14%),

Հաշվետու ժամանակաշրջանում Բանկը չի ունեցել մայր գումարի, տոկոսների չվճարումներ կամ այլ խախտումներ (2018թ.՝ ոչինչ):

Կապակցված կողմերից ստացված ստորադաս փոխառությունները մարվել են և ուղղվել են Բանկի կապիտալի համալրմանը:

29 Այլ պարտավորություններ

Հազար ՀՀ դրամ	31 դեկտեմբերի 2019թ.	31 դեկտեմբերի 2018թ.
Անհատների նկատմամբ պարտավորություններ	328,302	305,100
Բաժնետոմսերի թողարկման գծով ստացված կանխավճարներ (ծանոթ. 30)	500,500	-
Վճարման ենթակա շահաբաժիններ	385,694	235,498
Վճարվելիք գումարներ	47,974	44,882
Վարձակալության գծով պարտավորություններ (ծանոթ. 32)	1,422,777	-
Ընդամենը այլ ֆինանսական պարտավորություններ	2,685,247	585,480
Աշխատակիցներին վճարվելիք հատուցումներ	817,804	669,236
Վճարման ենթակա հարկեր, բացի շահութահարկից	288,430	251,932
Պահուստներ*	25,808	61,891
Ընդամենը այլ ոչ ֆինանսական պարտավորություններ	1,132,042	983,059
Ընդամենը այլ պարտավորություններ	3,817,289	1,568,539

*Պահուստները ստեղծվել են ֆինանսական երաշխավորությունների և չօգտագործված վարկային գծերի սահմանաչափերի գծով կորուստների մասով: Ֆինանսական երաշխավորությունների և չօգտագործված վարկային գծերի սահմանաչափերի գծով ակնկալվող պարտքային կորուստների փոփոխությունների վերաբերյալ վերլուծությունը տե՛ս ծանոթագրություն 31-ում:

30 Սեփական կապիտալ

2019թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Բանկի հայտարարված և ամբողջությամբ վճարված բաժնետիրական կապիտալը կազմել է 26,135,843 հազար դրամ, որից գրանցված կազմել է 25,635,343 հազար դրամ (տես ծանոթագրություն 29): Համաձայն Բանկի կանոնադրության, վճարված բաժնետիրական կապիտալը կազմված է թվով 1,852,533 սովորական բաժնետոմսերից՝ յուրաքանչյուրը 10,400 դրամ անվանական արժեքով և 424,600 արտոնյալ հաստատագրված բաժնետոմսերից՝ յուրաքանչյուրը 15,000 դրամ անվանական արժեքով:

Բանկի բաժնետերերն.

Հազար ՀՀ դրամ	31 դեկտեմբերի 2019թ.		31 դեկտեմբերի 2018թ.	
	Վճարված բաժնետիրա-կան կապիտալ	Բաժնեմասը վճարված կապիտալում %	Վճարված բաժնետիրա-կան կապիտալ	Բաժնեմասը վճարված կապիտալում %
Սարիբեկ Սուքիասյան	8,135,958	31.74	5,457,078	24.51
Խաչատուր Սուքիասյան	4,638,533	18.09	4,638,533	20.83
Ռոբերտ Սուքիասյան	4,241,337	16.54	3,060,046	13.74
Էդուարդ Սուքիասյան	3,253,158	12.69	3,253,158	14.61
Այլ բաժնետերեր	5,366,357	20.94	5,857,528	26.31
	25,635,343	100	22,266,343	100

2019թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Բանկի կողմից հետ գնված բաժնետոմսեր չեն եղել:

Սովորական բաժնետոմսերի բաժնետերերը ունեն մեկ ձայնի իրավունք Բանկի տարեկան և ընդհանուր ժողովներում և իրավունք ստանալու շահաբաժին:

2019թ. Բանկը համալրել է կանոնադրական կապիտալը՝թողարկելով է 3,369,000 հազար դրամի արտոնյալ բաժնետոմսեր (2018թ. 3,000,000 հազար դրամ):

2018թ. Բանկն իրականացրել է ներքին տեղաշարժեր (չբաշխված շահույթի և այլ պահուստների կապիտալացում) էմիսիոն եկամուտից 33,438 հազար դրամի չափով, գլխավոր պահուստից՝ 3,000,000 հազար դրամի չափով և չբաշխված շահույթից՝ 2,524,160 հազար դրամի չափով դեպի բաժնետիրական կապիտալ՝ մեծացնելով սովորական անվանական բաժնետոմսերի արժեքը:

Բանկի բաժնետիրական կապիտալի ավելացումը իրականացվել է բաժնետերերի կողմից ՀՀ դրամով և նրանք իրավունք ունեն ստանալ շահաբաժին և բաշխել շահույթը ՀՀ դրամով: Արտոնյալ բաժնետոմսերը չունեն ձայնի իրավունք և ունեն երաշխավորված տարեկան շահաբաժին ոչ պակաս, քան իրենց անվանական արժեքի 14% չափով՝ յուրաքանչյուր բաժնետոմսի համար:

Արտոնյալ և սովորական բաժնետոմսերի գծով ֆինանսական հաշվետվություններում 2019թ. հայտարարված և վճարված շահաբաժինների գումարը կազմում է համապատասխանաբար 781,821 հազար դրամ և 277,880 հազար դրամ (2018թ.՝ 232,438 հազար դրամ և 277,880 հազար դրամ):

Բաշխման ենթակա Բանկի պահուստները սահմանափակվում են կուտակված շահույթով՝ հաշվարկված համաձայն ՀՀ օրենսդրության: Բաշխման ոչ ենթակա միջոցները ներկայացված են գլխավոր պահուստով, որը ստեղծված է համաձայն ՀՀ օրենսդրության պահանջների՝ ընդհանուր բանկային ռիսկերը, ներառյալ հնարավոր կորուստները և այլ չնախատեսված ռիսկերը և ծախսերը փոխհատուցելու նպատակով: Պահուստը ստեղծվել է համաձայն Բանկի կանոնադրության, որը նախատեսում է պահուստի ստեղծում այդ նպատակների համար ոչ պակաս քան հաշվապահական հաշվառման հաշիվներում արտացոլված բաժնետիրական կապիտալի 15%-ի չափով:

31 Պայմանական պարտավորություններ

Իրավական և հարկային պարտավորություններ

Հայաստանում հարկային համակարգը համեմատաբար նոր է, և նրան բնորոշ է օրենսդրության, պաշտոնական հայտարարությունների և դատարանի որոշումների հաճախակի փոփոխությունները, որոնք երբեմն անհասկանալի են, հակասական և ենթակա տարբեր մեկնաբանությունների: Հարկերը ենթակա են ստուգման և ուսումնասիրման հարկային մարմինների կողմից, որոնք իրավասու են կիրառել տույժեր և տուգանքներ: Հարկային օրենսդրության խախտման դեպքում, հարկային մարմինների կողմից չի կարող կիրառվել հավելյալ հարկերի պարտադրումներ, տույժեր և տուգանքներ, ավելի քան ստուգման նախորդող հաշվետու 3 տարիների համար:

Այս հանգամանքները Հայաստանում կարող են առաջացնել հարկային ռիսկեր, որոնք ավելի զգալի են քան այլ երկներում: Ղեկավարությունը համոզված է, որ պատշաճ կերպով կատարել է իր հարկային պարտավորությունները, հիմնվելով Հայաստանում կիրառվող հարկային օրենսդրության, պաշտոնական հայտարարությունների և դատարանի որոշումների իր մեկնաբանությունների վրա: Այնուամենայնիվ, համապատասխան մարմինների մեկնաբանությունները կարող են տարբերվել, և եթե ղեկավար մարմիններին հաջողվի հարկադրել իրենց մեկնաբանությունները, ապա այս ֆինանսական հաշվետվությունների վրա ազդեցությունը կարող է էական լինել:

Ղեկավարությունը համոզված է, որ Բանկն իր գործունեությունը ծավալում է օրենսդրությամբ նախատեսված պահանջների շրջանակներում, և ամբողջությամբ կատարել է իր հարկային պարտավորությունները:

Բանկին ներկայացվող դատական հայցերի առումով Բանկի ղեկավարությունը համոզված է, որ դրանց հետևանքով առաջացող պարտավորությունները էական ազդեցություն չեն ունենա Բանկի ֆինանսական վիճակի կամ ապագա գործառնությունների արդյունքների վրա:

Վարկային պարտավորվածություններ և ֆինանսական երաշխավորություններ

Իր գործունեության ընթացքում Բանկը տրամադրում է իր հաճախորդներին հետհաշվեկշռային ռիսկ պարունակող ֆինանսական գործիքներ: Նշված ֆինանսական գործիքները, որոնք ունեն պարտքային ռիսկի տարբեր մակարդակներ, չեն արտացոլվում ֆինանսական վիճակի մասին հաշվետվության մեջ:

Դեկտեմբերի 31-ի դրությամբ անվանական կամ պայմանագրային գումարները հետևյալն են.

Հազար ՀՀ դրամ	31 դեկտեմբերի 2019թ.	31 դեկտեմբերի 2018թ.
Չօգտագործված վարկային գծեր	6,092,716	17,900,458
Երաշխիքներ	5,979,486	3,599,016
Ընդամենը պարտքային ռիսկ պարունակող պարտավորություններ	12,072,202	21,499,474

Վարկային պարտավորվածությունների գծով ակնկալվող պարտքային կորուստները ներառված են հաճախորդներին տրված վարկերի և փոխատվությունների պահուստներում (տես՝ ծանոթագրություն 20-ում):

Ֆինանսական երաշխիքների գծով ակնկալվող պարտքային կորուստների փոփոխությունների վերլուծությունը ներկայացվում է ստորև՝

Հազար ՀՀ դրամ	2019թ.		2018թ.	
	Փուլ 1	Ընդամենը	Փուլ 1	Ընդամենը
Ակնկալվող պարտքային կորուստների պահուստ հունվարի 1-ի դրությամբ	61,891	61,891	103,411	103,411
Կորուստների գծով պահուստների զուտ վերաչափում	(36,083)	(36,083)	(41,520)	(41,520)
Մնացորդը դեկտեմբերի 31-ի դրությամբ	25,808	25,808	61,891	61,891

Պարտավորություններ գործառնական վարձակալության գծով – Բանկը որպես վարձակալ (Մինչև 2019թ. հունվարի 1-ը կիրառվող քաղաքականություն)

Բանկն իր գործունեությունն ապահովելու նպատակով կնքում է առևտրային վարձակալության պայմանագրեր շենք և տարածքներ վարձակալելու նպատակով:

Չեղյալ չհայտարարվող գործառնական վարձակալության գծով վճարվելիք ապագա ընդհանուր նվազագույն վարձավճարների կառուցվածքը հետևյալն է.

Հազար ՀՀ դրամ	31 դեկտեմբերի 2018թ.
Մինչև 1 տարի	663,159
1-5 տարի	2,177,613
5 տարուց ավելի	33,179
Ընդամենը պարտավորություններ գործառնական վարձակալության գծով	2,873,951

Կապիտալ բնույթի պարտավորությունների վերաբերյալ տեղեկատվությունը բացահայտված է 22 և 23 ծանոթագրություններում:

Ապահովագրություն

Հայաստանում ապահովագրության ոլորտը գտնվում է զարգացման փուլում, և այլ երկրներին հատուկ բազմաթիվ ապահովագրության ձևաչափեր հիմնականում դեռևս կիրառելի չեն: Բանկը նախատեսում է իր գործունեության դադարեցմանը, ինչպես նաև իր գույքի կամ գործունեության հետ կապված ապահովագրական դեպքերի ժամանակ առաջացող գույքի և շրջակա միջավայրի վնասի՝ երրորդ կողմի նկատմամբ պարտավորությանը վերաբերող մասնակի ապահովագրություն: Քանի դեռ Բանկը չի նախատեսել ամբողջական ապահովագրություն, առկա է ռիսկ, որ որոշակի ակտիվների կորուստը կամ ոչնչացումը կարող է ունենալ բացասական ազդեցություն Բանկի գործունեության և ֆինանսական վիճակի վրա:

Այնուամենայնիվ, 2019թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ, Բանկին սեփականության իրավունքով պատկանող գլխամասային շենքը և փոխադրամիջոցներն ապահովագրված են: Բանկն ունի նաև ապահովագրություն բանկային ընդհանուր պարտավորվածությունների, էլեկտրոնային, համակարգչային հանցագործությունների և մասնագիտական պատասխանատվության համար: Քանի դեռ Բանկը չի նախատեսել ամբողջական ապահովագրություն, առկա է ռիսկ, որ որոշակի ակտիվների կորուստը կամ ոչնչացումը կարող է ունենալ նշանակալի բացասական ազդեցություն Բանկի գործունեության և ֆինանսական վիճակի վրա:

32 Վարձակալություններ

Բանկը վարձակալության պայմանագրեր է կնքել մասնաճյուղերի համար: Բացառությամբ կարճաժամկետ վարձակալությունների և հիմքում ընկած փոքրարժեք ակտիվների վարձակալությունների՝ յուրաքանչյուր վարձակալություն արտացոլվել է ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում որպես օգտագործման իրավունքի ձևով ակտիվ և վարձակալության գծով պարտավորություն: Բանկը դասակարգում է իր օգտագործման իրավունքի ձևով ակտիվները սեփական հիմնական միջոցների դասակարգմանը համահունչ (տես ծանոթագրություն 22):

Ընդհանուր առմամբ յուրաքանչյուր վարձակալություն պարունակում է սահմանափակում, ըստ որի օգտագործման իրավունքի ձևով ակտիվը կարող է օգտագործել միայն Բանկը, քանի դեռ առկա չէ ակտիվը այլ կողմի տրամադրելու պայմանագրային իրավունք: Վարձակալությունները կամ չեղյալ չհայտարարվող են, կամ կարող են չեղյալ հայտարարվել՝ միայն առաջացնելով նշանակալի դադարեցման վճար: Որոշ վարձակալություններ պարունակում են հիմքում ընկած ակտիվը անմիջապես վարձակալության ժամկետի ավարտին ձեռք բերելու կամ վարձակալության ժամկետը երկարացնելու հնարավորություն: Բանկին արգելված է վաճառել կամ գրավադրել վարձակալված հիմքում ընկած ակտիվները: Բանկը պետք է այդ գույքերը

պահպանի բարեկարգ վիճակում (վերանորոգված) և վարձակալության ավարտին գույքը վերադարձնի իր սկզբնական վիճակով:

Օգտագործման իրավունքի ձևով ակտիվներ

Ստորև աղյուսակում նկարագրված են Բանկի վարձակալական գործառույթները ըստ ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում ճանաչված օգտագործման իրավունքի ձևով ակտիվների տիպերի՝

Վարձակալված օգտագործման իրավունքի ձևով ակտիվներ	Վարձակալված օգտագործման իրավունքի ձևով ակտիվների քանակ	Մնացորդային ժամկետ	Միջին մնացորդային վարձակալական ժամկետ	Երկարացման հնարավորությամբ վարձակալությունների քանակ
Մասնաճյուղեր	26	3 ամսից-9 տարի	3 տարի	26
Արխիվացման տարածք	6	1.5-4 տարի	3 տարի	6

Ստորև ներկայացված է օգտագործման իրավունքի ձևով ակտիվի վերաբերյալ լրացուցիչ տեղեկատվություն ըստ դասերի.

Հազար ՀՀ դրամ	Մնացորդը 2019թ. հունվարի 1-ի դրությամբ	Ավելացում	Մաշվածություն	Մնացորդը 2019թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Մասնաճյուղեր	1,121,996	69,038	(411,036)	779,998
Արխիվացման տարածք	753,209	-	(173,278)	579,931
Ընդամենը	1,875,205	69,038	(584,314)	1,359,929

Վարձակալության գծով պարտավորություններ

Վարձակալության գծով պարտավորությունները ներկայացված են ֆինանսական վիճակի մասին հաշվետվության այլ պարտավորություններ տողում (տես՝ ծանոթագրություն 29):

Ստորև ներկայացված է հաշվետու ժամանակաշրջանում վարձակալության գծով պարտավորությունների շարժը.

Հազար ՀՀ դրամ	31 դեկտեմբերի 2019թ.
ՖՀՄՍ 16-ի կիրառման ազդեցությունը (հունվարի 1-ի դրությամբ)	1,875,205
Ավելացում	69,038
Տոկոսի կուտակում	165,625
Վճարումներ	(687,091)
Ընդամենը վարձակալության գծով պարտավորություններ դեկտեմբերի 31-ի դրությամբ	1,422,777

2019թ. ՖՀՄՍ 16-ի համաձայն ճանաչված վարձակալության գծով պարտավորությունների նկատմամբ կիրառված միջին կշռված տոկոսադրույքը կազմում է 10.25% (2018թ.՝ չի կիրառվել):

Վարձակալության գծով պարտավորությունները ապահովագրված են համապատասխան հիմքում ընկած ակտիվներով: 2019թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ վարձակալության գծով պարտավորությունների ժամկետային վերլուծությունը արտացոլված է ծանոթագրություն 36-ում:

2018թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Բանկի գործառնական վարձակալաության գծով պարտավորվածությունները տես՝ ծանոթագրություն 31:

Վարձակալության գծով վճարներ, որոնք չեն ճանաչվում որպես պարտավորություն

Բանկն ընտրել է կարճաժամկետ վարձակալությունների (12 ամիս կամ ավելի պակաս ակնկալվող ժամկետով) և փոքրարժեք ակտիվների վարձակալությունների հաշվառման համար չճանաչել վարձակալության գծով պարտավորություն: Նման վարձակալությունների համար կատարված վճարները ծախսագրվում են գծային հիմունքով:

2019թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Բանկն ունի կարճաժամկետ վարձակալությունների գծով ապագա պարտավորվածություններ, և այդ պարտավորվածությունների ընդհանուր գումարը կազմում է 13,172 հազար դրամ:

33 Գործարքներ կապակցված կողմերի հետ

Համաձայն ՀՀՄՍ 24 «Կապակցված կողմերի բացահայտում» կողմերը համարվում են կապակցված, եթե նրանցից մեկը կարող է վերահսկել մյուսին կամ նշանակալի ազդեցություն ունենալ մյուսի վրա՝ ֆինանսական և գործառնական որոշումներ կայացնելիս: Ներկայացվող հաշվետվությունների առումով Բանկի կապակցված կողմերն են՝ նրա բաժնետերերը, ղեկավար անձնակազմի անդամները, ինչպես նաև նրանց հետ կապակցված անձիք և նրանց կողմից վերահսկվող կազմակերպությունները:

2019 և 2018թթ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Բանկի գրանցված և ամբողջությամբ վճարված բաժնետիրական կապիտալի 79.07% (2018թ.՝ 73.71%) պատկանում է Սուքիասյաններին, որոնք հանդիսանում են Բանկի վերջնական վերահսկող:

Բանկն իր գործունեության ընթացքում ներգրավված է լինում կապակցված կողմերի հետ մի շարք գործարքներում: Այդ գործարքները ներառում են վարկերը, ավանդները և այլն: Նշված գործարքները իրականացվել են՝ շուկայում գործող պայմաններից և տոկոսադրույքներից ելնելով:

Գործարքների ծավալները, մնացորդները տարվա վերջի դրությամբ և տարվա եկամուտ և ծախսերը հետևյալն են.

Հազար ՀՀ դրամ	2019		2018	
	Բաժնետերեր և կապակցված կողմեր	**Ղեկավար անձնակազմը և կապակցված կողմեր**	**Բաժնետերեր և կապակցված կողմեր**	**Ղեկավար անձնակազմը և կապակցված կողմեր**
Ֆինանսական վիճակի մասին հաշվետվություն				
Հաճախորդներին տրված վարկեր և փոխատվություններ				
Վարկի մնացորդը 1 հունվարի դրությամբ, համախառն	2,664,389	138,134	1,031,923	153,058
Տարվա ընթացքում տրամադրված վարկեր	1,320,925	339,909	2,215,008	283,837
Տարվա ընթացքում մարված վարկեր	(1,013,869)	(350,524)	(582,542)	(298,761)
Վարկի մնացորդը դեկտեմբերի 31 դրությամբ, համախառն	2,971,445	127,519	2,664,389	138,134
Արժեզրկումից պահուստ	(36,592)	(2,023)	(85,521)	(2,666)
Մնացորդը դեկտեմբերի 31-ի դրությամբ	2,934,853	125,496	2,578,868	135,468
Պահանջներ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ				
Հունվարի 1-ի դրությամբ	67,482	-	100,656	-
Տարվա ընթացքում տրամադրված	200,000	-	67,000	-
Տարվա ընթացքում մարված	(217,330)	-	(100,174)	-
Դեկտեմբերի 31-ի դրությամբ	50,152	-	67,482	-
Արժեզրկումից պահուստ	(134)	-	(7)	-
Մնացորդը դեկտեմբերի 31-ի դրությամբ	50,018	-	67,475	-
Պարտավորություններ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ				
Հունվարի 1-ի դրությամբ	177,455	-	186,479	-
Տարվա ընթացքում ստացված	10,267,089	-	9,533,713	-
Տարվա ընթացքում վճարված	(10,253,603)	-	(9,542,737)	-
Դեկտեմբերի 31-ի դրությամբ	190,941	-	177,455	-
Պարտավորություններ հաճախորդների նկատմամբ				
Հունվարի 1-ի դրությամբ	677,395	446,312	845,554	369,357
Տարվա ընթացքում ստացված ավանդներ	11,110,044	1,102,431	15,987,550	1,041,325
Տարվա ընթացքում վճարված ավանդներ	(10,976,600)	(737,252)	(16,155,709)	(964,370)
Դեկտեմբերի 31-ի դրությամբ	810,839	811,491	677,395	446,312

Ստորադաս փոխառություններ				
Հունվարի 1-ի դրությամբ	3,382,149	-	6,409,601	-
Տարվա ընթացքում ստացված փոխառություններ	-	-	-	-
Տարվա ընթացքում վճարված փոխառություններ	(3,382,149)	-	(3,027,452)	-
Դեկտեմբերի 31-ի դրությամբ	-	-	3,382,149	-
Արտոնյալ բաժնետոմսերի թողարկում	3,369,000	-	3,000,000	-
Տրամադրված երաշխիքներ	32,928	-	83,791	-
Շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվություն				
Տոկոսային և նմանատիպ եկամուտներ	146,103	14,731	280,678	17,799
Տոկոսային և նմանատիպ ծախսեր	3,458	3,864	572,562	25,006
Վարկային կորուստների (ծախս)/հակադարձում	48,802	643	(33,642)	(1,041)
Հիմնական միջոցների ձեռքբերում	-	-	36,627	-
Կոմիսիոն ծախսեր	1,101	278	478	-
Գովազդային ծախսեր	53,400	-	41,593	-
Ապահովագրության գծով վճարներ	137,603	-	132,896	-
Գործառնական վարձակալության գծով ծախսեր	-	-	413,568	-
Ֆինանսական վարձակալության գծով ծախսեր	421,129	-	-	-
Գործուղման ծախսեր	39,216		40,465	-
Այլ ծախսեր	99,452	-	-	-

Բանկի հետ կապված անձանց տարվա ընթացքում տրամադրված վարկերը վճարման են ենթակա 1-ից 20 տարիների ընթացքում և դրանց տոկոսադրույքը կազմում է 5-19%:

Ղեկավար անձնակազմի գծով կատարված փոխհատուցումները հետևյալն են.

Հազար ՀՀ դրամ	2019	2018
Աշխատավարձ և պարգևատրումներ	696,874	548,354
Ընդամենը ղեկավար անձնակազմի գծով կատարված փոխհատուցումներ	696,874	548,354

34 Իրական արժեքի չափումը

Ֆինանսական և ոչ ֆինանսական ակտիվներն ու պարտավորությունները ներկայացվում են համաձայն իրական արժեքի հիերարխիայի: Այս հիերարխիան բաժանում է ֆինանսական և ոչ ֆինանսական ակտիվներն ու պարտավորությունները երեք մակարդակների՝ հիմք ընդունելով դրանց իրական արժեքի չափման ժամանակ օգտագործված գործիքների նշանակալիությունը: Իրական արժեքի հիերարխիան ունի հետևյալ երեք մակարդակները՝

Մակարդակ 1 - նույն ակտիվների և պարտավորությունների գծով ակտիվ շուկաներում գնանշվող գները (չճշգրտված).

Մակարդակ 2- Մակարդակ 1-ում ներառված գնանշվող գներից տարբեր այլ ելակետային տվյալներ, որոնք ակտիվի և պարտավորության համար դիտարկելի են ուղղակիորեն (այսինքն՝ որպես գներ) և թե՝ անուղղակիորեն (այսինքն՝ գների հիման վրա ստացվող):

Մակարդակ 3 - ակտիվի կամ պարտավորության գծով ելակետային տվյալներ, որոնք հիմնված չեն դիտարկվող շուկայական տվյալների վրա (ոչ դիտարկելի ելակետային տվյալներ):

34.1 Իրական արժեքով չչափվող ֆինանսական գործիքներ

Ստորև բերված աղյուսակը ներկայացնում է ֆինանսական ակտիվների և պարտավորությունների իրական արժեքը, որոնք ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում չեն չափվել իրենց իրական արժեքով և ըստ մակարդակի վերլուծում է դրանք իրական արժեքի հիերարխիայում, թե իրական արժեքի չափումը որ դասում է դասակարգված:

Հազար ՀՀ դրամ

	31 դեկտեմբերի 2019թ.				
	Մակարդակ 1	Մակարդակ 2	Մակարդակ 3	Ընդամենը իրական արժեք	Ընդամենը հաշվեկշռային արժեք
Ֆինանսական ակտիվներ					
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	-	44,050,205	-	44,050,205	44,050,205
Պահանջներ ֆինանսական կազմեկեպությունների նկատմամբ	-	14,189,783	-	14,189,783	14,189,783
Հաճախորդներին տրված վարկեր և փոխատվություններ	-	178,965,542	-	178,965,542	176,106,613
Ամորտիզացված արժեքով չափվող ներդրումային արժեթղթեր	-	484,701	-	484,701	479,397
Հակադարձ հետգնման պայմանագրեր	-	6,363,858	-	6,363,858	6,222,111
Այլ ֆինանսական ակտիվներ	-	70,383	-	70,383	70,383
Ֆինանսական պարտավորություններ					
Թողարկված պարտքային արժեթղթեր	-	4,442,633	-	4,442,633	4,452,356
Հետգնման պայմանագրեր	-	25,623,028	-	25,623,028	25,623,028
Պարտավորություններ հաճախորդների նկատմամբ	-	112,578,902	-	112,578,902	113,366,878
Այլ փոխառու միջոցներ	-	89,329,836	-	89,329,836	91,923,477
Ստորադաս փոխառություններ	-	659,045	-	659,045	719,787
Այլ ֆինանսական պարտավորություններ	-	2,685,247	-	2,685,247	2,685,247

Հազար ՀՀ դրամ				31 դեկտեմբերի 2018թ.	
	Մակարդակ 1	Մակարդակ 2	Մակարդակ 3	Ընդամենը իրական արժեք	Ընդամենը հաշվեկշռային արժեք
Ֆինանսական ակտիվներ					
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	-	38,158,045	-	38,158,045	38,158,045
Պահանջներ ֆինանսական կազմեկեպությունների նկատմամբ	-	13,175,950	-	13,175,950	13,175,950
Հաճախորդներին տրված վարկեր և փոխատվություններ	-	136,837,816	-	136,837,816	133,629,775
Հակադարձ հետգնման պայմանագրեր	-	3,946,554	-	3,946,554	3,882,703
Այլ ֆինանսական ակտիվներ	-	129,380	-	129,380	129,380
Ֆինանսական պարտավորություններ					
Թողարկված պարտքային արժեթղթեր	-	2,054,185	-	2,054,185	2,060,960
Հետգնման պայմանագրեր	-	20,519,048	-	20,519,048	20,519,048
Պարտավորություններ հաճախորդների նկատմամբ	-	95,054,600	-	95,054,600	95,828,768
Այլ փոխառու միջոցներ	-	63,054,857	-	63,054,857	64,200,798
Ստորադաս փոխառություններ	-	3,701,500	-	3,701,500	3,382,149
Այլ ֆինանսական պարտավորություններ	-	585,480	-	585,480	585,480

Պահանջներ և պարտավորություններ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ

Մեկ ամիս մարման ժամկետ ունեցող ակտիվների և պարտավորությունների համար, հաշվեկշռային արժեքը մոտավոր արտացոլում է իրական արժեքը, քանի որ այս ֆինանսական գործիքների մարման ժամկետները բավականին կարճ են: Մեկ ամսից ավելի մարման ժամկետ ունեցող ակտիվների և պարտավորությունների իրական արժեքը սահմանվում է ակնկալվող ապագա դրամական միջոցների հոսքերի հաշվարկից ելնելով և զեղչվում է տարվա վերջի դրությամբ գործող համապատասխան տոկոսադրույքներով, որոնք հիմնականում համընկնում են գործող տոկոսադրույքներին:

Հաճախորդներին տրված վարկեր և փոխատվություններ

Փոփոխվող դրույքաչափերով գործիքների իրական արժեքը հավասար է նրանց հաշվեկշռային արժեքին: Այն միջոցների գնահատված իրական արժեքները, որոնք ունեն ֆիքսված տոկոսադրույք, սահմանվում են ելնելով ակնկալվող ապագա դրամական միջոցների հոսքերի հաշվարկից, որոնք զեղչվում են նման պարտքային ռիսկ և մարման ժամկետ ունեցող գործիքների ընթացիկ տոկոսադրույքներով: Կիրառվելիք տոկոսադրույքերը կախված են վարկառուի պարտքային ռիսկից և տատանվում են 5% մինչև 24% տարեկան (2018թ. 5% մինչև 24% տարեկան):

Արժեզրկված վարկերի իրական արժեքը հաշվարկվում է գրավի առարկայի վաճառքից ակնկալվող դրամական միջոցների հոսքերի հիման վրա: Գրավի առարկայի արժեքը հիմնված է

անկախ, մասնագիտական որակավորում ունեցող գույքի գնահատողի իրականացրած գնահատումների վրա:

Ամորտիզացված արժեքով չափվող ներդրումային արժեթղթեր

Ամորտիզացված արժեքով չափվող ներդրումային արժեթղթերի իրական արժեքը հիմնված է շուկայում գործող տոկոսադրույքների վրա: Այն արժեթղթերի իրական արժեքը, որոնց վերաբերյալ բացակայում են գնանշումները, հիմնված են ակնկալվող ապագա դրամական միջոցների հոսքերի հաշվարկի վրա, որոնք զեղչվում են տարվա վերջին շուկայում գործող տոկոսադրույքներով, որոնք հիմնականում համընկնում են գործող տոկոսադրույքերին:

Պարտավորություններ հաճախորդների նկատմամբ

Ֆինանսական կազմակերպությունների և հաճախորդների ավանդների իրական արժեքը գնահատվում է օգտագործելով զեղչված դրամական միջոցների հոսքերի մեթոդը, կիրառելով նմանատիպ մարման ժամկետ ունեցող ավանդների համար առաջարկվող դրույքաչափերը: Ցպահանջ վճարվելիք ավանդների իրական արժեքը հաշվետու ամսաթվին վճարվելիք գումարն է:

Այլ փոխառություններ

Ֆիքսված և չգնանշվող տոկոսադրույքներով փոխառությունների գնահատված իրական արժեքը սահմանվում է, ելնելով ակնկալվող ապագա դրամական հոսքերի հաշվարկից, որոնք զեղչվում են նմանատիպ մարման ժամկետ ունեցող նոր պարտքային գործիքների տոկոսադրույքներով:

Թողարկված պարտքային արժեթղթեր

Թողարկված պարտքային արժեթղթերի գնահատված իրական արժեքը սահմանվում է, ելնելով ակնկալվող ապագա դրամական միջոցների հոսքերի հաշվարկից, որոնք զեղչվում են տարվա վերջի դրությամբ գործող համապատասխան տոկոսադրույքներով, որոնք հիմնականում համընկնում են գործող տոկոսադրույքներին:

34.2 Իրական արժեքով չափվող ֆինանսական գործիքներ

Հազար ՀՀ դրամ				31 դեկտեմբերի 2019թ.
	Մակարդակ 1	Մակարդակ 2	Մակարդակ 3	Ընդամենը
Ֆինանսական ակտիվներ				
Իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքների միջոցով չափվող ներդրումային արժեթղթեր	-	25,027,524	-	25,027,524
Աճանցյալ ֆինանսական ակտիվներ	-	7,522	-	7,522
Ընդամենը	-	25,035,046	-	25,035,046
Ֆինանսական պարտավորություններ				
Աճանցյալ ֆինանսական պարտավորություններ	-	9,313	-	9,313
Ընդամենը	-	9,313	-	9,313
Զուտ իրական արժեք	-	25,025,733	-	25,025,733

Հազար ՀՀ դրամ				31 դեկտեմբերի 2018թ.
	Մակարդակ 1	Մակարդակ 2	Մակարդակ 3	Ընդամենը
Ֆինանսական ակտիվներ				
Իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքների միջոցով չափվող ներդրումային արժեթղթեր	-	19,752,226	-	19,752,226
Ածանցյալ ֆինանսական ակտիվներ	-	17,468	-	17,468
Ընդամենը	-	19,769,694	-	19,769,694
Զուտ իրական արժեք	-	19,769,694	-	19,769,694

Իրական արժեքի չափման մեթոդները և գնահատման մեխանիզմը չեն փոփոխվել նախորդ հաշվետու ժամանակաշրջանի համեմատությամբ:

Չգնանշվող պարտքային արժեթղթեր

Իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող չգնանշվող պարտքային արժեթղթերի իրական արժեքը չափվում է գնահատման մեթոդների միջոցով՝ կիրառելով տվյալ պահին գործող շուկայական տոկոսադրույքները ֆինանսական գործիքների ապագա դրամական հոսքերը զեղչելու նպատակով:

Չգնանշվող բաժնային գործիքներ

Բանկը չգնանշվող բաժնային գործիքների իրական արժեքը որոշելու համար օգտագործում է շուկայական և եկամտային մոտեցումների համադրությունը: Շուկայական և եկամտային մոտեցումները ոչ հրապարակային բաժնային գործիքների գնահատմանը բնորոշ մեթոդներ են: Շուկայական մոտեցման համաձայն՝ Բանկն օգտագործում է գները և նույնական կամ համադրելի արժեթղթերով շուկայական գործարքներից հավաքված այլ համապատասխան տեղեկատվություն: Եկամտային մոտեցման ներքո ապագա գումարները վերափոխվում են մեկ ներկա գումարի (օրինակ՝ զեղչված դրամական հոսքերի մոդել): Շուկայական մոտեցումը համարվում է նախընտրելի, քանի որ հիմնական օգտագործվող տեղեկատվությունը, արպես կանոն, դիտարկելի է:

Ածանցյալներ

Երբ ածանցյալները շրջանառվում են կա՛մ բորսայում, կա՛մ բորսայից դուրս, Բանկը օգտագործում է հաշվետու ամսաթվի դրությամբ փակման գինը: Այս պայմանագրերի իրական արժեքները գնահատվում են՝ օգտագործելով այն գնահատման մեխանիզմը, որը առավելագույնս մեծացնում է դիտարկելի շուկայի գործիքների օգտագործումը: Բանկի կողմից ներդրվող ածանցյալների մեծամասնությունը ներառված է 2-րդ մակարդակում և բաղկացած է արտարժութային սվոպ պայմանագրերից:

34.3 Ոչ ֆինանսական ակտիվների իրական արժեքի չափումը

Հազար ՀՀ դրամ				31 դեկտեմբերի 2019թ.
	Մակարդակ 1	Մակարդակ 2	Մակարդակ 3	Ընդամենը
Ոչ ֆինանսական ակտիվներ				
Հիմնական միջոցներ				
Հող և շենքեր	-	-	8,073,225	8,073,225
Ընդամենը	-	-	8,073,225	8,073,225
Զուտ իրական արժեք	-	-	8,073,225	8,073,225

Հազար ՀՀ դրամ	31 դեկտեմբերի 2018թ.			
	Մակարդակ 1	Մակարդակ 2	Մակարդակ 3	Ընդամենը
Ոչ ֆինանսական ակտիվներ				
Հիմնական միջոցներ				
Հող և շենքեր	-	-	8,061,881	8,061,881
Ընդամենը	-	-	8,061,881	8,061,881
Զուտ իրական արժեք	-	-	8,061,881	8,061,881

Իրական արժեքի չափումը Մակարդակ 3-ում

3-ում մակարդակում դասակարգված Բանկի ոչ ֆինանսական ակտիվների գնահատման մեխանիզմների օգտագործումը հիմնված է այն ելակետային տվյալների վրա, որոնք հիմնված չեն դիտարկվող շուկայի տվյալների վրա: Այս մակարդակում ոչ ֆինանսական ակտիվների շարժը ներկայացվում է ստորև.

Հազար ՀՀ դրամ	2019	2018
Ոչ ֆինանսական ակտիվներ		
Հունվարի 1-ի դրությամբ	8,061,881	7,524,174
Ավելացում	308,847	898,268
Օտարում	(480,966)	(359,503)
Վերագնահատում	485,717	-
Վերագնահատման արդյունքում մաշվածության ճշգրտում	(302,254)	-
Վերադասակարգում	-	(1,058)
2019թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	8,073,225	8,061,881
Զուտ իրական արժեք	8,073,225	8,061,881

35 Ֆինանսական ակտիվների և ֆինանսական պարտավորությունների հաշվանցում

Իր գործունեության ընթացքում Բանկը ֆինանսական գործիքների հետ իրականացնում է տարբեր գործառնություններ, որոնք կարող են ներկայացվել զուտ արժեքով, եթե գոյություն ունի օրենսդրորեն հաստատված իրավունք իրականացնելու հաշվառված գումարների հաշվանցում, ինչպես նաև մտադրություն իրականացնելու հաշվանցում կամ միաժամանակ իրացնելու ակտիվը և մարելու պարտավորությունը:

Ստորև բերված աղյուսակը ներկայացնում է ֆինանսական ակտիվներն ու ֆինանսական պարտավորությունները, որոնք հաշվանցված են ֆինանսական վիճակի մասին հաշվետվության մեջ, կամ ենթակա են կատարման համաձայն հաշվանցման գլխավոր համաձայնագրի կամ համանման պայմանագրերի, որը ներառում է նմանատիպ ֆինանսական գործիքները, անկախ այն բանից, դրանք հաշվանցվել են ֆինանսական վիճակի մասին հաշվետության մեջ թե ոչ:

Հազար ՀՀ դրամ

				31 դեկտեմբերի 2019թ.		
				Կապակցված գումարներ, որոնց գծով ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում հաշվանցում չի իրականացվել		
	Ճանաչված ֆինանսական ակտիվների/ Պարտավորությունների համախառն գումար	Ճանաչված ֆինանսական ակտիվների/ Պարտավորությունների համախառն գումար՝ հաշվանցված ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում	Ֆինանսական ակտիվների/ պարտավորությունների զուտ գումար՝ ներկայացված ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում	Ֆինանսական գործիքներ	Ստացված դրամական ապահովում	Զուտ
Ֆինանսական ակտիվներ						
Հակադարձ հետգնման պայմանագրեր (Ծանոթ. 19)	6,222,111	-	6,222,111	6,222,111	-	-
Ընդամենը	6,222,111	-	6,222,111	6,222,111	-	-
Ֆինանսական պարտավորություններ						
Հետգնման պայմանագրեր (Ծանոթ. 19)	(25,623,028)	-	(25,623,028)	20,180,825	-	(5,442,203)
Ընդամենը	(25,623,028)	-	(25,623,028)	20,180,825	-	(5,442,203)

Հազար ՀՀ դրամ

				31 դեկտեմբերի 2018թ.		
				Կապակցված գումարներ, որոնց գծով ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում հաշվանցում չի իրականացվել		
	Ճանաչված ֆինանսական ակտիվների/ Պարտավորությունների համախառն գումար	Ճանաչված ֆինանսական ակտիվների/ Պարտավորությունների համախառն գումար՝ հաշվանցված ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում	Ֆինանսական ակտիվների/ պարտավորությունների զուտ գումար՝ ներկայացված ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում	Ֆինանսական գործիքներ	Ստացված դրամական ապահովում	Զուտ
Ֆինանսական ակտիվներ						
Հակադարձ հետգնման պայմանագրեր (Ծանոթ. 19)	3,882,703	-	3,882,703	3,882,703	-	-
Ընդամենը	3,882,703	-	3,882,703	3,882,703	-	-
Ֆինանսական պարտավորություններ						
Հետգնման պայմանագրեր (Ծանոթ. 19)	(20,519,048)	-	(20,519,048)	17,454,208	-	(3,064,840)
Ընդամենը	(20,519,048)	-	(20,519,048)	17,454,208	-	(3,064,840)

36 Ակտիվների և պարտավորությունների ժամկետային վերլուծություն

Հետևյալ աղյուսակը ներկայացնում է ֆինանսական ակտիվները և պարտավորություններն ըստ սպասվելիք մարման ժամկետների: Բանկի չզեղչված պայմանագրային պարտավորությունների մասին տեղեկատվությունը ներկայացված է ծանոթագրություն 37.3-ում:

Հազար ՀՀ դրամ

	31 դեկտեմբերի 2019թ.						
	Ցպահանջ և մինչև 1 ամիս	1-ից մինչև 12 ամիս	Մինչև 12 ամիս, ենթահան-րագումար	1-ից 5 տարի	5 տարուց ավելի	12 ամսից ավելի, ենթահան-րագումար	Ընդամենը
Ակտիվներ							
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	44,050,205	-	44,050,205	-	-	-	44,050,205
Աճանցյալ ֆինանսական ակտիվներ	7,522	-	7,522	-	-	-	7,522
Պահանջներ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ	2,518,585	9,283,586	11,802,171	963,679	1,423,933	2,387,612	14,189,783
Հաճախորդներին տրված վարկեր և փոխատվություններ	7,985,447	47,174,971	55,160,418	90,526,444	30,419,751	120,946,195	176,106,613
Ներդրումային արժեթղթեր							
- Իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող ներդրումային արժեթղթեր	20,180,825	7,451	20,188,276	1,582,933	3,256,315	4,839,248	25,027,524
- Ամորտիզացված արժեքով չափվող ներդրումային արժեթղթեր	-	684	684	478,713	-	478,713	479,397
Հետգնման պայմանագրերով գրավադրված արժեթղթեր	6,013,000	209,111	6,222,111	-	-	-	6,222,111
Այլ ֆինանսական ակտիվներ	70,383	-	70,383	-	-	-	70,383
	80,825,967	56,675,803	137,501,770	93,551,769	35,099,999	128,651,768	266,153,538

Հազար ՀՀ դրամ

	Ցպահանջ և մինչև 1 ամիս	1-ից մինչև 12 ամիս	Մինչև 12 ամիս, ենթահան-րագումար	1-ից 5 տարի	5 տարուց ավելի	12 ամսից ավելի, ենթահան-րագումար	Ընդամենը
							31 դեկտեմբերի 2019թ.
Պարտավորություններ							
Ածանցյալ ֆինանսական պարտավորություններ	9,313	-	9,313	-	-	-	9,313
Թողարկված պարտքային արժեթղթեր	18,064	988,172	1,006,236	3,446,120	-	3,446,120	4,452,356
Հետգնման պայմանագրեր	25,623,028	-	25,623,028	-	-	-	25,623,028
Այլ փոխառու միջոցներ	6,381,096	22,195,116	28,576,212	57,563,683	5,783,582	63,347,265	91,923,477
Պարտավորություններ հաճախորդների նկատմամբ	49,913,854	46,844,992	96,758,846	16,041,238	566,794	16,608,032	113,366,878
Ստորադաս փոխառություններ	237	-	237	-	719,550	719,550	719,787
Այլ ֆինանսական պարտավորություններ	872,908	887,162	1,760,070	866,395	58,782	925,177	2,685,247
	82,818,500	70,915,442	153,733,942	77,917,436	7,128,708	85,046,144	238,780,086
Զուտ Դիրք	(1,992,533)	(14,239,639)	(16,232,172)	15,634,333	27,971,291	43,605,624	27,373,452
Կուտակված ճեղքվածք	(1,992,533)	(16,232,172)		(597,839)	27,373,452		

Հազար ՀՀ դրամ

	Ցպահանջ և մինչև 1 ամիս	1-ից 12 ամիս	Մինչև 12 ամիս, ենթահան-րագումար	1-ից 5 տարի	5 տարուց ավելի	12 ամսից ավելի, ենթահան-րագումար	Ընդամենը
							31 դեկտեմբերի 2018թ.
Ակտիվներ							
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	38,158,045	-	38,158,045	-	-	-	38,158,045
Ածանցյալ ֆինանսական ակտիվներ	17,468	-	17,468	-	-	-	17,468
Պահանջներ այլ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ	6,834,632	1,649,555	8,484,187	2,721,169	1,970,594	4,691,763	13,175,950
Հակադարձ հետգնման պայմանագրեր	3,882,703	-	3,882,703	-	-	-	3,882,703
Հաճախորդներին տրված վարկեր և փոխատվություններ	4,108,005	43,959,089	48,067,094	61,368,037	24,194,644	85,562,681	133,629,775
Ներդրումային արժեթղթեր							
- Իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող ներդրումային արժեթղթեր	17,454,208	493,938	17,948,146	1,173,278	630,802	1,804,080	19,752,226
Այլ ֆինանսական ակտիվներ	121,308	7,372	128,680	217	483	700	129,380
	70,576,369	46,109,954	116,686,323	65,262,701	26,796,523	92,059,224	208,745,547

Հազար ՀՀ դրամ

	Ցպահանջ և մինչև 1 ամիս	1-ից 12 ամիս	Մինչև 12 ամիս, ենթահան-րագումար	1-ից 5 տարի	5 տարուց ավելի	12 ամսից ավելի, ենթահան-րագումար	Ընդամենը
							31 դեկտեմբերի 2018թ.
Պարտավորություններ							
Թողարկված պարտքային արժեթղթեր	-	1,093,380	1,093,380	967,580	-	967,580	2,060,960
Հետգնման պայմանագրեր	20,519,048	-	20,519,048	-	-	-	20,519,048
Այլ փոխառու միջոցներ	27,374,010	20,589,923	47,963,933	14,128,118	2,108,747	16,236,865	64,200,798
Պարտավորություններ հաճախորդների նկատմամբ	43,321,959	38,548,118	81,870,077	11,830,458	2,128,233	13,958,691	95,828,768
Ստորադաս փոխառություններ	21,725	-	21,725	3,360,424	-	3,360,424	3,382,149
Այլ ֆինանսական պարտավորություններ	344,409	241,071	585,480	-	-	-	585,480
	91,581,151	60,472,492	152,053,643	30,286,580	4,236,980	34,523,560	186,577,203
Զուտ Դիրք	(21,004,782)	(14,362,538)	(35,367,320)	34,976,121	22,559,543	57,535,664	22,168,344
Կուտակված ճեղքվածք	(21,004,782)	(35,367,320)		(391,199)	22,168,344		

37 Ռիսկի կառավարում

Բանկային գործունեությանը բնորոշ է ֆինանսական ռիսկերի բազմազանություն և այդ գործունեությունը ենթադրում է ռիսկերի որոշակի աստիճանի և համադրությունների վերլուծություն, գնահատում, ընդունում և կառավարում:

Ռիսկերի կառավարումը Բանկն իրականացնում է բացահայտման, գնահատման և մոնիթորինգի մշտական գործընթացների, ինչպես նաև ռիսկերի սահմանաչափերի հաստատման և ներքին վերահսկողության այլ միջոցառումների միջոցով: Ռիսկերի կառավարման գործընթացը էական նշանակություն ունի Բանկի շահութաբերության կայունության ապահովման գործում, և Բանկի յուրաքանչյուր աշխատակից պատասխանատվություն է կրում իր պարտականությունների հետ կապված ռիսկերի առաջացման համար: Բանկի գործունեությունը ենթարկվում է պարտքային, իրացվելիության ռիսկերի և շուկայական ռիսկի, որն իր հերթին բաժանվում է առևտրային և ոչ առևտրային գործառնությունների հետ կապված շուկայական ռիսկի: Բանկը նաև ենթարկվում է գործառնական ռիսկերի:

Ռիսկերի անկախ կառավարման գործընթացը չի ներառում գործարար ռիսկերը, ինչպիսիք են միջավայրի փոփոխությունները, տեխնոլոգիաների կամ արդյունաբերության փոփոխությունները: Դրանք կառավարվում են Բանկի կողմից ռազմավարական պլանավորման գործընթացում:

Ռիսկերի կառավարման կառուցվածք

Ռիսկերի բացահայտման և վերահսկմանն ուղղված ամբողջ պատասխանատվությունը կրում է Տնօրինության խորհուրդը, սակայն, գոյություն ունեն ռիսկերի կառավարման և վերահսկման համար պատասխանատու առանձին անկախ մարմիններ:

Բանկի Խորհուրդ

Խորհուրդը պատասխանատու է ռիսկերի կառավարման ընդհանուր վերահսկողության, ռազմավարության հաստատման և ռիսկերի կառավարման սկզբունքների հաստատման համար: Խորհուրդը տրամադրում է սկզբունքներ ռիսկի ամբողջական կառավարման համար, ինչպես նաև քաղաքականություն՝ հատուկ բնագավառների վերաբերյալ, ինչպիսիք են փոխարժեքային (արտարժութային) ռիսկը, տոկոսադրույքի ռիսկը, վարկային ռիսկը, ածանցյալ և ոչ ածանցյալ ֆինանսական գործիքների կիրառումը:

Վարչություն

Վարչությունը պատասխանատու է ռիսկերի կառավարման գործընթացի անխափան իրականացման և վերահսկման համար: Վարչությունն ընդհանուր պատասխանատվություն է կրում ռիսկերի կառավարման ռազմավարության, սկզբունքների, հայեցակարգերի, քաղաքականության և սահմանների մշակման ու կիրառման համար: Այն պատասխանատու է ռիսկերի կառավարման խնդիրների լուծման համար և վերահսկում է դրանց նկատմամբ ընդունած համապատասխան որոշումների կատարումը:

Ռիսկերի կառավարման ստորաբաժանում

Ռիսկերի կառավարումն իրականացվում է «Ռազմավարության և ռիսկերի կառավարման վարչության» (ՌՌԿՎ) կողմից՝ ըստ Տնօրենների խորհրդի հաստատած քաղաքականության: ՌՌԿՎ կողմից գնահատվում, բացահայտվում, վերլուծվում և հեջավորվում են ռիսկերը՝ գործառնական ստորաբաժանումների հետ սերտ համագործակցության միջոցով: Ռիսկերի կառավարման ստորաբաժանումը պատասխանատու է ռիսկերի կառավարման սկզբունքների վերահսկման, քաղաքականության և Բանկի ռիսկի սահմանաչափերի համար, ինչպես նաև ռիսկերի կառավարման հետ կապված գործընթացների ներդրման և իրականացման համար:

Ներքին աուդիտ

Ներքին աուդիտը պատասխանատու է ռիսկերի կառավարման անկախ գնահատման և հսկողության ընդհանուր միջավայրի համար: Բանկի կողմից իրականացվող ռիսկերի կառավարման գործընթացը յուրաքանչյուր տարի ստուգման է ենթարկվում ներքին աուդիտի կողմից, որը ստուգում է ինչպես ընթացակարգերի ամբողջականությունը, այնպես էլ Բանկի գործունեության համապատասխանությունը ընթացակարգերին: Ներքին աուդիտը անցկացված ստուգումների արդյունքները քննարկում է ղեկավարության հետ և իր եզրակացություններն ու առաջարկները ներկայացնում կառավարման համապատասխան մարմիններին:

Ռիսկի գնահատման և ռիսկերի ներկայացման համակարգեր

Բանկի ռիսկերի գնահատման մեթոդով հաշվի է առնվում ինչպես սպասվող կորուստը, որն իրենից ներկայացնում է գործունեության ընթացքում կորուստների հնարավոր միջին մակարդակ, այնպես էլ հնարավոր անսպասելի կորուստները, որոնք իրենցից ներկայացնում են սպասվող միջին մակարդակը գերազանցող կորուստներ: Բանկը նաև մոդելավորում է քիչ հավանական, սակայն պոտենցիալ էական ազդեցություն ունեցող «վատթարագույն դեպքերը»:

Ռիսկերի մոնիթորինգը և կառավարումը հիմնականում հիմնված է Բանկի կողմից սահմանված ռիսկերի սահմանաչափերի վրա: Այս սահմանաչափերն արտացոլում են Բանկի գործարար ռազմավարությունը և շուկայական պայմանները, որոնցում գործում է Բանկը, ինչպես նաև Բանկի համար ընդունելի ռիսկի մակարդակը, ընդ որում հատուկ ուշադրություն է դարձվում առանձին ոլորտների վրա:

Գործունեության առանձին տեսակների գծով ստացվող տեղեկատվությունն ուսումնասիրվում և մշակվում է ռիսկերի վերլուծության, վերահսկողության և գնահատման նպատակով: Տվյալ տեղեկատվության հիման վրա կազմված հաշվետվությունները պարունակում են տեղեկություններ վարկային ռիսկի չափի, վարկային ցուցանիշների կանխատեսվող

մակարդակի, ռիսկի սահմանված սահմանաչափերի, դրանցից բացառությունների, VaR գնահատականի, իրացվելիության ցուցանիշների և ընդհանուր ռիսկի մակարդակի փոփոխության վերաբերյալ: Բանկի վարչությունը յուրաքանչյուր ամիս ստանում է ռիսկերի վերաբերյալ մանրամասն հաշվետվություն ըստ ոլորտների, հաճախորդների և աշխարհագրական շրջանների, որը պարունակում է ամբողջ անհրաժեշտ տեղեկատվությունը Բանկի ռիսկերի գնահատման և համապատասխան որոշումների կայացման համար: Յուրաքանչյուր օր անց է կացվում ղեկավարության կարճատև խորհրդակցություն, անհրաժեշտության դեպքում Բանկի այլ աշխատակիցների մասնակցությամբ, որտեղ քննարկվում են սահմանված սահմանաչափերի պահպանումը, վերլուծվում է ռիսկի մակարդակը, ներդրումները, իրացվելիությունը և ռիսկերին վերաբերող այլ ընթացիկ հարցեր:

Ռիսկի նվազեցում

Ռիսկերի նվազեցման գործընթացն իրենից ներկայացնում է ռիսկերի առաջացման հնարավորությունը, կամ դրա ազդեցությունը նվազեցնելու, կամ այդ երկու գործոնների մեղմման ուղղությամբ ձեռնարկվող լրացուցիչ միջոցառումների իրականացում: Իր ընդհանուր ռիսկերի կառավարման գործընթացի շրջանակներում Բանկն օգտագործում է ածանցյալ և այլ գործիքներ: Բանկն ակտիվորեն օգտագործում է գրավի միջոցները՝ վարկային ռիսկը նվազեցնելու ուղղությամբ (ավելի մանրամասն՝ տես ստորև):

Ռիսկի չափազանց կենտրոնացումներ

Ռիսկի կենտրոնացումները առաջանում են, երբ մի շարք գործընկերներ իրականացնում են նմանատիպ գործունեություն, կամ գործունեությունը կատարվում է միևնույն շրջանում, կամ նրանք ունեն համանման տնտեսական հատկանիշներ, և տնտեսական, քաղաքական կամ այլ պայմաններում փոփոխության արդյունքում ցուցաբերում են նմանատիպ ազդեցություն այդ գործընկերների պայմանագրային պարտավորությունների կատարման ունակության վրա: Ռիսկի կենտրոնացումները արտացոլում են Բանկի գործունեության արդյունքների հարաբերական զգայունությունը պայմանների փոփոխություններին, որոնք ազդեցություն են ունենում կոնկրետ բնագավառի կամ աշխարհագրական շրջանի վրա:

Ռիսկի չափազանց կենտրոնացումներից խուսափելու համար, Բանկի քաղաքականությունը և գործընթացները ներառում են հատուկ սկզբունքներ, ուղղված բազմաբնույթ պորտֆելի պահպանմանը: Իրականացվում է կառավարում ռիսկի սահմանված կենտրոնացումներով:

37.1 Պարտքային ռիսկ

Բանկի գործունեությունը ենթարկվում է պարտքային ռիսկի՝ կապված վարկառուի կողմից պարտավորության չկատարելու հետ, որը Բանկին կորուստներ կարող է պատճառել: Պարտքային ռիսկը Բանկի կարևորագույն ռիսկն է, այդ պատճառով էլ Բանկն այն առանձնակի ուշադրությամբ է վերահսկում: Պարտքային ռիսկը կապված է հիմնականում վարկային գործառնությունների հետ, որոնք հանգեցնում են վարկերի և փոխատվությունների տրամադրմանը և ներդրումային գործունեության հետ, որոնք Բանկի ակտիվների պորտֆելի մեջ ավելացնում են պարտքային արժեթղթեր և այլ պարտքային գործիքներ: Ռիսկն առկա է նաև արտահաշվեկշռային ֆինանսական գործիքներում, ինչպիսիք են վարկային պարտավորությունները: Պարտքային ռիսկի կառավարումը և վերահսկողությունը իրականացվում է Բանկի ՌԿՎ պարտքային ռիսկի կառավարման խմբի կողմից և հաշվետվությունները պարբերաբար ներկայացվում են Բանկի Խորհրդին և Վարչությանը:

37.1.1 Վարկային որակի վերլուծություն

Հետևյալ աղյուսակը ներկայացնում է պարտքային ռիսկին ֆինանսական գործիքների ենթարկվածության վերլուծությունը, որոնց գծով ակնկալվող պարտքային կորուստների պահուստ է ճանաչվում: Ստորև բերված ֆինանսական ակտիվների համախառն հաշվեկշռային

արժեքը ներկայացնում է Բանկի՝ այդ ակտիվների գծով պարտքային ռիսկի առավելագույն ենթարկվածությունը՝ հաշվի չառնելով որևէ ապահովվածություն կամ այլ բարելավումներ: Ստանձնված պարտավորվածությունների կամ երաշխիքների գումարները ներկայացնում են վարկային պարտավորվածությունների և ֆինանսական երաշխավորության պայմանագրերի գումարները:

Ներքին վկանիշների վերաբերյալ տեղեկատվությունը բացահայտված է ծանոթագրություն 37.1.2-ում:

Հազար ՀՀ դրամ				31 դեկտեմբերի 2019թ.
Ներքին վարկանիշեր	Փուլ 1	Փուլ 2	Փուլ 3	Ընդամենը
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ				
Բարձր	11,919,061	-	-	11,919,061
Ստանդարտ	32,159,175	-	-	32,159,175
Համախառն հաշվեկշռային արժեք	44,078,236	-	-	44,078,236
Արժեզրկումից պահուստ	(28,031)	-	-	(28,031)
Զուտ հաշվեկշռային արժեք	44,050,205	-	-	44,050,205
Պահանջներ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ				
Ստանդարտ	14,238,598	-	-	14,238,598
Համախառն հաշվեկշռային արժեք	14,238,598	-	-	14,238,598
Արժեզրկումից պահուստ	(48,815)	-	-	(48,815)
Զուտ հաշվեկշռային արժեք	14,189,783	-	-	14,189,783
Հիփոթեքային և սպառողական վարկեր				
Բարձր	91,195,330	-	-	91,195,330
Ստանդարտ	151,566	908	-	152,474
Ցածր	-	141,341	-	141,341
Չաշխատող	-	-	272,952	272,952
Համախառն հաշվեկշռային արժեք	91,346,896	142,249	272,952	91,762,097
Արժեզրկումից պահուստ	(620,006)	(30,502)	(151,863)	(802,371)
Զուտ հաշվեկշռային արժեք	90,726,890	111,747	121,089	90,959,726
Առևտրային վարկեր				
Բարձր	84,889,166	-	-	84,889,166
Ստանդարտ	2,945	-	-	2,945
Ցածր	-	1,917	-	1,917
Չաշխատող	-	-	1,537,415	1,537,415
Համախառն հաշվեկշռային արժեք	84,892,111	1,917	1,537,415	86,431,443
Արժեզրկումից պահուստ	(674,032)	(611)	(609,913)	(1,284,556)
Զուտ հաշվեկշռային արժեք	84,218,079	1,306	927,502	85,146,887

Հազար ՀՀ դրամ				31 դեկտեմբերի 2019թ.
Ներքին վարկանիշեր	Փուլ 1	Փուլ 2	Փուլ 3	Ընդամենը
Ամորտիզացված արժեքով չափվող պարտքային գործիքներ				
Ստանդարտ	481,592	-	-	481,592
Համախառն հաշվեկշռային արժեք	481,592	-	-	481,592
Արժեզրկումից պահուստ	(2,195)	-	-	(2,195)
Զուտ հաշվեկշռային արժեք	479,397	-	-	479,397
Իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող պարտքային գործիքներ՝ ներառյալ գրավադրվածները				
Ստանդարտ վարկանիշ	25,027,524	-	-	25,027,524
Հաշվեկշռային արժեք (իրական արժեք)	25,027,524	-	-	25,027,524
Արժեզրկումից պահուստ *	(53,599)	-	-	(53,599)
Այլ ֆինանսական ակտիվներ				
Ստանդարտ	83,243	-	-	83,243
Համախառն հաշվեկշռային արժեք	83,243	-	-	83,243
Արժեզրկումից պահուստ	(12,860)	-	-	(12,860)
Զուտ հաշվեկշռային արժեք	70,383	-	-	70,383
Վարկային պարտավորվածություններ և ֆինանսական երաշխավորություններ				
Ստանդարտ	12,072,202	-	-	12,072,202
	12,072,202	-	-	12,072,202
Արժեզրկումից պահուստ	(25,808)	-	-	(25,808)

Հազար ՀՀ դրամ — 31 դեկտեմբերի 2018թ.

Ներքին վարկանիշեր	Փուլ 1	Փուլ 2	Փուլ 3	Ընդամենը
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ				
Բարձր	9,304,956	-	-	9,304,956
Ստանդարտ	28,889,451	-	-	28,889,451
Համախառն հաշվեկշռային արժեք	38,194,407	-	-	38,194,407
Արժեզրկումից պահուստ	(36,362)	-	-	(36,362)
Զուտ հաշվեկշռային արժեք	38,158,045	-	-	38,158,045
Պահանջներ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ				
Ստանդարտ	13,333,730	-	-	13,333,730
Համախառն հաշվեկշռային արժեք	13,333,730	-	-	13,333,730
Արժեզրկումից պահուստ	(157,780)	-	-	(157,780)
Զուտ հաշվեկշռային արժեք	13,175,950	-	-	13,175,950
Հիփոթեքային և սպառողական վարկեր				
Բարձր	65,628,546	-	-	65,628,546
Ստանդարտ	184,955	-	-	184,955
Ցածր	-	112,235	-	112,235
Չաշխատող	-	-	170,071	170,071
Համախառն հաշվեկշռային արժեք	65,813,501	112,235	170,071	66,095,807
Արժեզրկումից պահուստ	(246,960)	(27,691)	(126,503)	(401,154)
Զուտ հաշվեկշռային արժեք	65,566,541	84,544	43,568	65,694,653
Առևտրային վարկեր				
Բարձր	69,035,913	-	-	69,035,913
Ստանդարտ	4,630	-	-	4,630
Ցածր	-	256	-	256
Չաշխատող	-	-	1,597	1,597
Համախառն հաշվեկշռային արժեք	69,040,543	256	1,597	69,042,396
Արժեզրկումից պահուստ	(1,106,114)	(131)	(1,029)	(1,107,274)
Զուտ հաշվեկշռային արժեք	67,934,429	125	568	67,935,122
Իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող պարտքային գործիքներ՝ ներառյալ գրավադրվածները				
Ստանդարտ վարկանիշ	19,752,226	-	-	19,752,226
Հաշվեկշռային արժեք (իրական արժեք)	19,752,226	-	-	19,752,226
Արժեզրկումից պահուստ	(185,751)	-	-	-

Հազար ՀՀ դրամ				31 դեկտեմբերի 2018թ.
Ներքին վարկանիշեր	Փուլ 1	Փուլ 2	Փուլ 3	Ընդամենը
Այլ ֆինանսական ակտիվներ				
Ստանդարտ	138,848	-	-	138,848
Համախառն հաշվեկշռային արժեք	138,848	-	-	138,848
Արժեզրկումից պահուստ	(9,468)	-	-	(9,468)
Զուտ հաշվեկշռային արժեք	129,380	-	-	129,380
Վարկային պարտավորվածություններ և ֆինանսական երաշխավորություններ				
Բարձր	21,499,474	-	-	21,499,474
	21,499,474	-	-	21,499,474
Արժեզրկումից պահուստ	(61,891)	-	-	(61,891)

* Ներառում է միայն ֆինանսական երաշխիքների գծով պահուստը:

37.1.2 Արժեզրկման գնահատում

Ստորև բերված հղումները ցույց են տալիս, թե տվյալ հաշվետվության որ ծանոթագրություններում են բացահայտվում Բանկի՝ արժեզրկման գնահատման և չափման մոտեցումները: Այն պետք է ընթերցվի հաշվապահական հաշվառման քաղաքականության հետ միասին (տես 4.4.6 ծանոթագրությունը):

Ռիսկերի կառավարման նպատակներով վարկային ռիսկերի գնահատումը բարդ է և պահանջում է մոդելների կիրառում, քանի որ շուկայական պայմաններով, ակնկալվող դրամական հոսքերով և ժամանակային փոփոխություններով պայմանավորված վարկային ռիսկը կարող է տարբերվել: Ակտիվների պորտֆելի վարկային ռիսկի գնահատումը պահանջում է հետագա գնահատումներ կատարել՝ կապված դեֆոլտի, դրանից բխող կորուստների գործակիցների և գործընկերների միջև դեֆոլտի կորելացիաների հավանականության հետ: Բանկը վարկային ռիսկը գնահատում է դեֆոլտի հավանականության (PD), վնաս դեֆոլտի ժամանակ (LGD) և դեֆոլտի դեպքում ռիսկի տակ գտնվող գումար (EAD): Սա մոտ է ECL-ի չափման նպատակով կիրառված մոտեցմանը՝ համաձայն ՖՀՄՍ 9-ի:

ՖՀՄՍ 9-ի համաձայն՝ Բանկն օգտագործում է արժեզրկման «եռափուլ» մոդել՝ վարկի սկզբնական ճանաչումից հետո որակի փոփոխությունների հիման վրա, որն ամփոփված է ստորև.

- Սկզբնական ճանաչման պահին վարկային տեսանկյունից չարժեզրկված ֆինանսական գործիքը դասակարգվում է «փուլ 1-ում», որի վարկային ռիսկը շարունակաբար վերահսկվում է Բանկի կողմից:
- Եթե սկզբնական ճանաչումից հետո հայտնաբերվում է վարկային ռիսկի զգալի աճը (SICR), ապա ֆինանսական գործիքը տեղափոխվում է «փուլ 2», սակայն դեռևս չի համարվում վարկային տեսանկյունից արժեզրկված:
- Եթե ֆինանսական գործիքը վարկային տեսանկյունից արժեզրկված է, ապա այն տեղափոխվում է «փուլ 3»:
- Փուլ 1-ում ֆինանսական գործիքների ECL-ը չափվում է առաջիկա 12 ամիսների ընթացքում ակնկալվող պարտքային կորուստների տվյալ մասին համարժեք գումարով,

որոնք առաջանում են առաջիկա 12 ամիսների ընթացքում հնարավոր դեֆոլտի իրադարձությունների հետեւանքով: 2-րդ կամ 3-րդ փուլերում գործիքների ECL-ն չափվում է՝ հիմնվելով գործողության ողջ ընթացքում ակնկալվող պարտքային կորուստների վրա:

- ՖՀՄՍ 9-ի համաձայն, ECL-ի չափման համապարփակ հայեցակարգը պետք է հաշվի առնի նաև կանխատեսումներ:
- Ձեռք բերված կամ սկզբնապես վարկային տեսանկյունից արժեզրկված ֆինանսական ակտիվներն այն ակտիվներն են, որոնք արժեզրկված են սկզբնական ճանաչման ժամանակ: Դրանց ECL-ն մշտապես չափվում է գործողության ողջ ընթացքի համար (փուլ 3):

ECL-ները կարող են չափվել կորուստների գծով պահուստների միջոցով՝ ստորև նշվածների համարժեք գումարի չափով՝

- Վարկի գործողության ողջ ընթացքում ECL, որոնք արդյունք են ֆինանսական գործիքի արժեզրկման իրադարձությունների, և որոնք կարող են տեղի ունենալ հաշվետու ժամանակաշրջանին հաջորդող 12 ամիսների ընթացքում (ինչպես նշված է փուլ 1-ում), կամ
- Վարկի գործողության ողջ ընթացքում ECL, այսինքն՝ ECL, որն արդյունք է ֆինանսական գործիքի գործողության ընթացքում հնարավոր դեֆոլտային իրադարձությունների (ինչպես նշված է փուլ 2-ում և 3-ում):

Լիարժեք ECL-ի դեպքում ֆինանսական գործիքի համար պահանջվում է կորուստների գծով պահուստներ, եթե այդ ֆինանսական գործիքի վարկային ռիսկը զգալիորեն ավելացել է սկզբնական ճանաչումից հետո: Մնացած բոլոր այլ ֆինանսական գործիքների դեպքում ECL-ները չափվում են 12-ամսյա ECL-ին համարժեք գումարի չափով:

Չօգտագործված վարկային գծերի և ֆինանսական երաշխիքի պայմանագրերի դեպքում ECL-ն չափվում է՝ հիմնվելով 100% «վարկային ռիսկի փոխարկման գործոնների» (Credit Conversion Factor) վրա:

Ֆինանսական հաստատություններից, միջբանկային ավանդներից և թղթակցային հաշիվներից ստացվան ենթակա գումարները, պարտքային գործիքներում ներդրումները ենթակա են արժեզրկման՝ հիմնվելով 12-ամսյա ECL-ի վրա: Հաճախորդների մասով դեֆոլտի հավանականության և LGD-ի հաշվարկները ստացվում են միջազգային վարկանիշային գործակալությունների (Moody's, Fitch, S & P) տրամադրած վարկային վարկանիշի վերաբերյալ տեղեկատվությունից:

Այլ դեբիտորական պարտքերի գծով ակնկալվող պարտքային կորուստների համար նախատեսված պահուստը հաշվարկվում է անհատական հիմունքով՝ կիրառելով հաճախորդի վարկային կորստի պահուստի դրույքաչափը: Եթե հաճախորդը բանկում վարկային ռիսկ չի ունենում, ապա օգտագործվում են հաճախորդի վարկային վարկանիշը և համապատասխան դեֆոլտի հավանականությունն ու LGD-ն: Բացի այդ, գնահատվում է նաև դեբիտորական պարտքի ակնկալվող ռիսկը: Եվ վերջապես, PD-ները, LGD-ները և ակնկալվող ժամանակահատվածը բազմապատկվում են՝ վարկային ակնկալվող պահուստը դեբիտորական պարտքերի համար հաշվարկելու համար:

Հաճախորդներին տրված վարկեր

Վարկառուների վարկային ռիսկերի գնահատման նպատակով Բանկը մշակել է ՖՀՄՍ 9-ի պահանջների վրա հիմնված մեթոդաբանությունը:

Ակնկալվող պարտքային կորուստները Բանկը չափում է անհատական, իսկ վարկային պորտֆելների դեպքում՝ հավաքական հիմունքով, որոնք համանման վարկային ռիսկի հատկանիշներ ունեն:

Անհատապես նշանակալի վարկային ռիսկը համարվում է այն վարկառուների կամ փոխկապակցված վարկառուների խումբը, որոնք ռիսկը գերազանցում է կանոնադրական կապիտալի 1 տոկոսը: Բացի այն, նրանց պետք է վարկային ռիսկի զգալի աճի հատկանիշներ դրսևորեն, ինչպիսիք են ժամկետանց օրերի ավելացումը կամ զգալի ֆինանսական դժվարությունները:

Վարկային ռիսկի զգալի աճը, կամ արժեզրկումից կորստի բացահայտման նպատակով Ռիսկերի կառավարման վարչությունը վերլուծում է վարկառուների իրացվելիության, վճարունակության, բիզնես գործունեության և ֆինանսական ռիսկերի առկայության, ժամկետանց, վերակազմակերպման, վարկային վարկանիշների և գրավադրումների իրական արժեքների մասին տեղեկատվությունը:

Անհատապես նշանակալի ռիսկերի ECL-ն, որոնք վարկային ռիսկի գալի աճի հատկանիշների են դրսևորում, չափվում է անհատական հիմունքով: Անհատապես նշանակալի ռիսկերի ECL-ն, որոնք վարկային ռիսկի գալի աճի հատկանիշներ չեն դրսևորում, չափվում են հավաքական հիմունքով:

Անհատական հիմունքով ECL-ի չափումը

Անհատապես գնահատված վարկերի համար ECL-ները չափվում են որպես պայմանագրով Բանկին տրվելիք դրամական միջոցների հոսքերի և բազմաթիվ ապագա տնտեսական սցենարների վերլուծման արդյունքում Բանկի կողմից ակնկալվող դրամական միջոցների հոսքերի տարբերության ներկա արժեք, որը զեղչվում է արդյունավետ տոկոսադրույքի մեթոդով: Բացի այդ, հաշվի են առնվում նաև վարկի գծով գրավադրված ցանկացած ակտիվների մարումը և իրացումը:

Բանկը, որպես կանոն, գնահատում է գրավի իրացման արժեքը՝ հիմք ընդունելով 2 տարին որպես հավաքագրման և գնահատման՝ 25 տոկոսով կրճատում կատարելու ժամկետ: Ընդհանուր մոտեցումը փոփոխվում է կախված առանձին դեպքերից, եթե այլ հանգամանքները ցույց են տալիս, որ հավաքագրման և գնահատման կրճատում կատարելու ընդհանուր ժամկետը ողջամիտ չեն:

Հավաքական հիմունքով ECL-ի չափումը

ECL-ի չափման հիմնական ելակետային տվյալները հետևյալ փոփոխականների ժամկետային կառուցվածքն է՝

- Դեֆոլտի հավանականություն (PD),
- Վնաս դեֆոլտի ժամանակ (LGD),
- Դեֆոլտի դեպքում ռիսկի տակ գտնվող գումար (EAD)

Այս պարամետրերը հիմնականում ստացվում են ներքին օգտագործման վիճակագրական մոդելներից և այլ պատմական տվյալներից: Դրանք կարգավորվում են կանխատեսումների արտացոլման նպատակով:

Հավաքական գնահատումն իրականացվում է վարկառուի մակարդակով, այլ ոչ թե պայմանագրի մակարդակով:

Սեգմենտավորում

Հավաքական հիմունքով գնահատված վարկերը խմբավորված են ըստ իրենց վարկային ռիսկի հատկանիշների: Նման հատկանիշները ներառում են.

- Սեգմենտը/հատվածը
- Ժամկետանց օրերը
- Վերակազմակերպում
- Ապահովվածություն

ECL-ի՝ հավաքական հիմունքով գնահատման ենթակա պորտֆելները բաժանվում են 5 սեգմենտների կամ հատվածների. սպառողական, հիփոթեք, արտադրություն, գյուղատնտեսություն, այլ:

Դեֆոլտի սահմանումը

ECL-ի սահմանման համար կարևոր է սահմանել դեֆոլտը: Վերջինիս սահմանումն իրենից ներկայացնում է ECL-ի չափի գնահատումը: Ստորև նշվածները Բանկը համարում է դեֆոլտի իրադարձություն.

- Վարկառուն ունի ավելի քան 90 օր ժամկետանց որևէ նյութական վարկային պարտավորություն Բանկին՝ հավաքական հիմունքով գնահատվող վարկերի պարագայում,
- Վարկառուի վարկը մեկից ավելի անգամ վերակազմակերպվել է,

Վարկառուի՝ իր վարկային պարտավորությունների չկատարման հավանականության գնահատման ժամանակ Բանկը հաշվի է առնում որակական և քանակական ցուցանիշները: Դեֆոլտի գնահատման համար Բանկն օգտվում է տեղեկատվության բազմաթիվ աղբյուրներից, որոնք պատրաստվում են կազմակերպության ներսում, կամ ստացվում արտաքին աղբյուրներից:

Գնահատվող տեղեկությունը կախված է նաև բացահայտման կարևորությունից: Որակական ցուցանիշները, ինչպիսիք են վարկառուի ֆինանսական վիճակի հնարավոր վատթարացման մասին արտաքին աղբյուրից ստացված տեղեկությունները ծառայում են որպես վերլուծության կարևոր տվյալներ և օգտագործվում ECL-ի անհատական հիմունքով գնահատման համար վարկերի բացահայտման նպատակով, եթե վարկառուի ներկայացրած ռիսկը էականորեն զգալի շեմից ավելի բարձր է:

Վարկային ռիսկի նշանակալի աճ

Բանկը վերահսկում է արժեզրկման պահանջներին ենթակա բոլոր ֆինանսական ակտիվները՝ գնահատելու դրանց սկզբնական ճանաչումից ի վեր վարկային ռիսկի նշանակալի աճը: Վարկային ռիսկի նշանակալի աճի դեպքում Բանկը կչափի կորուստների գծով պահուստները՝ հիմնվելով գործողության ողջ ընթացքում, այլ ոչ 12-ամսյա, ECL-ի վրա:

Ֆինանսական գործիքի՝ դրանց սկզբնական ճանաչումից ի վեր վարկային ռիսկի նշանակալի աճի գնահատման ժամանակը Բանկը հաշվի է առնում որակական և քանակական տեղեկությունները, որոնք ողջամիտ են և հիմնավորված: Վարկառու վարկային վարկանիշի զգալի վատթարացումը, գրավի արժեքի զգալի նվազումը կարող են համարվել վարկային ռիսկերի զգալի չափով ավելացման որակական ցուցանիշեր, որոնք օգտագործվում են ECL-ի անհատական հիմունքով գնահատման համար նախատեսված վարկերի բացահայտման համար, եթե վարկառուի ներկայացրած ռիսկը զգալիորեն բարձր է էականորեն նշանակալի շեմից:

Երբ ակտիվը դառնում է 30 օր ժամկետանց, Բանկը համարում է, որ վարկային ռիսկի զգալի աճ է տեղի ունեցել և ակտիվը գտնվում է արժեզրկման մոդելի 2-րդ փուլում, այսինքն՝ կորուստների գծով պահուստները գնահատվում են գործողության ողջ ընթացքի ECL-ով:

Վերանայված վարկեր և կանխավճարներ

Վարկերը և կանխավճարները, ընդհանուր առմամբ, վերանայվում են հաճախորդների հետ շարունակական փոխհարաբերությունների շրջանակներում, կամ վարկառուի դրության անբարենպաստ փոփոխության արդյունքում: Վերջինի դեպքում, վերանայումը կարող է հանգեցնել մարման ժամկետի կամ մարման ժամանակացույցի երկարաձգման, համաձայն որի, Բանկն իրապես անբարենպաստ վիճակում գտնվող վարկառուներին առաջարկում է զեղչային տոկոսադրույքներ: Արդյունքում՝ տվյալ ակտիվը շարունակում է մնալ ժամկետանց և անհատապես արժեզրկված, ընդ որում՝ տոկոսի և մայր գումարի վճարումը թույլ չի տալիս վերականգնել ակտիվի սկզբնական հաշվեկշռային արժեքը: Այլ դեպքերում, վերանայումը կհանգեցնի նոր պայմանագրի ստորագրման, որն ըստ էության կդիտվի որպես նոր վարկ:

2019 և 2018թթ. դեկտեմբերի 31-ի դրությամբ հաճախորդներին տրված՝ վերանայված վարկերի հաշվեկշռային արժեքը կազմել է 1,248,803 հազար ՀՀ դրամ և 1,907,172 հազար ՀՀ դրամ, համապատասխանաբար:

Դեֆոլտի հավանականություն (PD)

Յուրաքանչյուր խմբի համար PD-ի չափը որոշելու համար Բանկն օգտագործում է միգրացիայի մատրիցների մեթոդաբանություն, որը կիրառում է պատմական տվյալների, պարտավորությունների չկատարման և դեֆոլտի փորձի վիճակագրական վերլուծությունները վարկերի գումարը հուսալիորեն գնահատելու համար, որոնք, ի վերջո, կարժեզրկվեն՝ մինչև հաշվեկշռային ամսաթիվը տեղի ունեցած իրադարձությունների արդյունքում: Համանման խմբի դիտարկման համար ընտրվել է ութ տարվա ժամկետ՝ 2012 թվականի հունվարից մինչև 2019 թվականի դեկտեմբերը: Դիտարկվող ժամանակահատվածում պատրաստվեցին մեկամսյա միգրացիայի մատրիցները:

Միգրացիայի մատրիցներն օգտագործվում են հավաքական հիմունքով գնահատման յուրաքանչյուր խմբի դեֆոլտի 12-ամսյա հավանականությունը հաշվարկելու համար: Դրանից ելնելով, հաշվարկվում են հետագա տարիների սահմանային PD-ները, մինչև սպառվի պորտֆելի մարման ժամկետը: PD-ի հաշվարկներ համար դեֆոլտ է սահմանվել 90 օր ժամկետանց դեպքը: Դիտարկվող ժամանակահատվածում առնվազն մեկ անգամ արժեզրկված վարկառուն համարվում է արժեզրկված դիտարման ողջ մնացած ժամանակահատվածում:

Ժամկետային (Point in Time PDs) PD-ները հաշվարկելու համար Բանկը տարբեր մակրո սցենարների ներքո կիրառում է նաև կանխատեսումներ:

Վնաս դեֆոլտի ժամանակ (LGD)

Արժեզրկման մոդելի բաղադրիչներից մեկը դեֆոլտի դեպքում կորստի չափն է, այսինքն՝ հաշվարկվում է դեֆոլտի դեպքում կորուստը: Այն չափելու համար ըստ սեգմենտների արժեզրկված ռիսկերը նվազեցվում են գրավադրված դեպոզիտների և գրավադրված գույքի զեղչված իրացվելիության արժեքի չափով՝ կիրառելով հավաքագրման 2 տարվա ժամկետը և գնահատման 25 տոկոս կրճատումը: Չապահովված ակտիվների LGD մոդելներում հաշվի են առնվում արժեզրկված ակտիվների մարման դրույքաչափերը: LGD-ները չափվում են սեգմենտի, այլ ոչ թե առանձին վարկառուի մակարդակով:

Դեֆոլտի դեպքում ռիսկի տակ գտնվող գումար (EAD)

EAD-ն դեֆոլտի դեպքում ակնկալվող ռիսկն է: Բանկը EAD-ն ստանում է կոնտրագենտի համար ներկայացրած ընթացիկ/ներկա ռիսկից և ընթացիկ գումարի հնարավոր փոփոխություններից, որոնք նախատեսված են ամորտիզացիա ներառող պայմանագրով:

Կանխատեսվող տեղեկատվություն

ECL-ի չափման ժամանակ Բանկն կանխատեսված տեղեկություններ է օգտագործում: Այդ տեղեկությունները ներառում են դրամավարկային քաղաքականություն սահմանող մարմինների կողմից հրապարակված տնտեսական տվյալները և կանխատեսվող տնտեսական ցուցանիշները: Դեֆոլտի հավանականության որոշմանը մասնակցում են հետևյալ մակրոտնտեսական փոփոխականները. սպառողական գների համաթիվը, ԱՄՆ դոլար-ՀՀ դրամ փոխարժեքը և ՌԴ ռուբլի-ՀՀ դրամ փոխարժեքը: Դրանք հանգեցնում են դեֆոլտի տարբեր հավանականությունների: Այս տարբեր փոփոխականների համակողմանի վերլուծումը կամ կշռումը դեֆոլտի միջին կշռված հավանականության հիմքն է կազմում, որն օգտագործվում է ECL-ի հաշվարկների համար: 12ամսյա ECL-ն (փուլ 1-ի վարկեր) չափվում է միայն 12 ամսվա PD-ով: Գործողության ամբողջ ընթացքի ECL-ն (փուլ 2-ի և 3-ի վարկեր) չափվում է բոլոր տարեկան սահմանային PD-ներով՝ մինչև վարկի մարման ժամկետի ավարտը:

Մակրոտնտեսական ցուցանիշների կանխատեսումներն իրենց տարբեր սցենարների և կշիռների հետ միասին հրապարակվում են ՀՀ ազգային վիճակագրական ծառայության կողմից:

ECL-ի հաշվարկ

Յուրաքանչյուր խմբի/սեգմենտի համար սահմանային PD-ն և LGD-ն որոշելուց հետո վարկային կորուստների գծով պահուստների վերջնական հաշվարկ է կատարվում: Այն կախված է խմբերի ռիսկի հատկանիշներից. փուլ 1-ի խմբերի համար (31-ից պակաս ժամկետանց օր) հաշվարկվում է 12-ամսյա ECL-ն, իսկ փուլեր 2-ի և 3-ի խմբերի համար (ավելի քան 90 օր ժամկետանց կամ վերակազմակերպված վարկեր) հաշվարկվում է ամբողջական ECL-ն: Վարկային պորտֆելի ECL-ի հաշվարկման արդյունքները հնարավորություն են տալիս տանալ հավաքական հիմունքով գնահատման 9 խմբերից յուրաքանչյուրի արժեզրկման միջին դրույքաչափը: Այս դրույքաչափերը կիրառվում են մինչև ամբողջ մոդելի հաջորդ հերթական վերահաշվարկ կատարելը վարկային կորուստների գծով պահուստներ ձևավորելու համար: Արժեզրկման մոդելի վերահաշվարկը մեկ անգամ կատարվել է 2019 թվականին, իսկ վերջինը կատարվել է 2019 թվականի դեկտեմբերին՝ վերջին հասանելի տվյալների հիման վրա:

37.1.3 Պարտքային ռիսկի առավելագույն չափի կենտրոնացումներ

Աշխարհագրական սեգմենտներ

Հետևյալ աղյուսակը ցույց է տալիս դեկտեմբերի 31-ի դրությամբ Բանկի՝ պարտքային ռիսկերի կենտրոնացումները հաշվեկշռային արժեքներով՝ դասակարգված ըստ աշխարհագրական սեգմենտների:

Հազար ՀՀ դրամ

	ՀՀ	Ոչ ՏՀԶԿ երկրներ	ՏՀԶԿ	Ընդամենը
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	39,712,575	3,409,043	928,587	44,050,205
Ածանցյալ ֆինանսական ակտիվներ	-	7,522	-	7,522
Պահանջներ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ	13,656,692	175,824	357,267	14,189,783
Հաճախորդներին տրված վարկեր և փոխատվություններ	176,073,905	5,373	27,335	176,106,613
Ներդրումային արժեթղթեր				
- Իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող ներդրումային արժեթղթեր	25,021,668	-	5,856	25,027,524
- Ամորտիզացված արժեքով չափվող ներդրումային արժեթղթեր	479,397	-	-	479,397
Հակադարձ հետգնման պայմանագրեր	6,222,111	-	-	6,222,111
Այլ ֆինանսական ակտիվներ	69,288	-	1,095	70,383
Վարկային պարտավորվածություններ և ֆինանսական երաշխավորություններ	10,618,594	-	1,453,608	12,072,202
2019թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	271,854,230	3,597,762	2,773,748	278,225,740
2018թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	225,037,073	3,846,271	1,361,677	230,245,021

Ակտիվները դասակարգվում են՝ հիմք ընդունելով այն երկիրը, որտեղ գործընկեր կողմը գրանցված է:

Արդյունաբերության ճյուղեր

2019 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ Բանկի պարտքային ռիսկերը դասակարգված ըստ տնտեսության ճյուղերի կենտրոնացած են ֆինանսական հատվածում, բացառությամբ վարկերի: Արդյունաբերության ճյուղայնության բաշխումը վարկերի համար տե՛ս ծանոթագրություն 20-ը:

37.1.4 Գրավ և վարկային ապահովման այլ միջոցներ

Պահանջվող գրավի գումարը և տեսակը կախված են փոխառուի պարտքային ռիսկի գնահատումից: Գոյություն ունեն գրավադրման յուրաքանչյուր տեսակի ընդունելիության և գնահատման վերաբերյալ ուղեցույցեր:

Ստացված գրավի հիմնական տեսակները հետևալն են.

- արժեթղթերի փոխառության և հակադարձ հետգնման գործարքների դեպքում՝, դրամական միջոցներ կամ արժեթղթեր,
- առևտրային վարկերի դեպքում՝ անշարժ և շարժական գույք, սարքավորումներ, պաշարներ և առևտրային դեբիտորական պարտքեր, իսկ հատուկ հանգամանքներում՝ պետական երաշխիքներ,
- գրավադրմամբ սպառողական վարկերի դեպքում՝ անշարժ գույք
- հիփոթեքային վարկերի դեպքում՝ անշարժ գույք:

Կորպորատիվ կազմակերպությունների երկարաժամկետ ֆինանսավորումը և վարկավորումը հիմնականում ապահովվում են գրավով, ֆիզիկական անձանց գծով վերականգնվող վարկային գծերը հիմնականում ապահովված չեն: Ի լրումն, վարկային կորուստը նվազագույնի հասցնելու համար Բանկը վարկառուից լրացուցիչ երաշխիքներ է պահանջում, հենց որ համապատասխան անհատական վարկերի և փոխատվությունների արժեզրկման հատկանիշներ են նկատվում:

Վարկեր և փոխատվություններից տարբեր ֆինանսական ակտիվներ ապահովող գրավները որոշվում են ֆինանսական գործիքի բնույթով: Հիմնականում ֆինանսական հաստատություններին, հատկապես բանկերին, վարկեր և կանխավճարներ տրամադրելու համար գրավներ չեն պահանջվում: Բացառություն են կազմում այն գրավները, որոնք ձեռք են բերվել ըստ հետգնման պայմանագրերի և արժեթղթերի փոխառության գործարքներից: Պարտատոմսերը և այլ պարտքային արժեթղթերը հիմնականում չեն ապահովվում:

Համախառն վարկային պորտֆելի վերլուծությունն ըստ ապահովվածության.

Հազար ՀՀ դրամ	31 դեկտեմբերի 2019թ.	31 դեկտեմբերի 2018թ.
Անշարժ գույք	64,325,869	52,110,663
Երաշխիք	64,398,317	40,268,615
Ոսկյա զարդեր և ոսկյա այլ իրեր	12,532,032	9,417,962
Փոխադրամիջոցներ (մեքենաներ)	1,973,902	1,660,810
Դրամական միջոցներ	1,928,527	556,889
Պաշարներ	3,853,768	1,181,078
Սարքավորումներ	2,610,794	1,663,811
Ոսկու ստանդարտացված ձուլակտորներ	-	7,029
Այլ արժեթղթեր	267,710	287,512
Այլ գրավ	11,503,009	15,780,613
Չապահովված վարկեր	14,799,612	12,203,221
Ընդամենը վարկեր և փոխատվություններ (համախառն)	178,193,540	135,138,203

Վերը նշված աղյուսակում ներկայացված արժեքները վարկերի հաշվեկշռային արժեքներն են, և պարտադիր չէ ներկայացնեն գրավների իրական արժեքը: Գրավների շուկայական արժեքների գնահատումները հիմնված են գրավի գնահատման վրա ըստ տրամադրված վարկերի ամսաթվի: Հիմնականում դրանք չեն թարմացվում մինչև վարկերը չգնահատվեն, որպես անհատապես արժեզրկված:

37.2 Շուկայական ռիսկ

Շուկայական ռիսկն այն ռիսկն է, որ ֆինանսական գործիքների ապագա դրամական միջոցների հոսքերը կամ իրական արժեքը կտատանվի այնպիսի շուկայական փոփոխականների պատճառով, ինչպիսիք են տոկոսադրույքները և արտարժույթի փոխարժեքները: Բանկը տարանջատում է շուկայական ռիսկերը առևտրային և ոչ առևտրային պորտֆելների: Ոչ առևտրային պորտֆելը կառավարվում և վերահսկվում է զգայունության վերլուծությունների օգնությամբ:

37.2.1 Շուկայական ռիսկ – Ոչ առևտրային

Տոկոսադրույքի ռիսկը ծագում է այն հավանականությունից, որ տոկոսադրույքների փոփոխություններն ուղղակիորեն կազդեն Բանկի ֆինանսական գործիքների հետ կապված դրամական միջոցների հոսքի և նրանց իրական արժեքի վրա: Բանկի Խորհուրդը սահմանել է որոշված ժամկետների համար տոկոսադրույքների ճեղքվածքների չափ: Դիրքերը վերահսկվում են օրական կտրվածքով, և հեջավորման ռազմավարություն է օգտագործվում դրանք սահմանված շրջանակներում պահելու համար:

Հետևյալ աղյուսակը ցույց է տալիս Բանկի ֆինանսական արդյունքների զգայունությունը տոկոսադրույքների հնարավոր փոփոխությունների նկատմամբ՝ այլ փոփոխականները հաստատուն մնալու պայմանով:

Ֆինանսական արդյունքների զգայունությունը տոկոսադրույքներում ենթադրվող փոփոխությունների ազդեցությունն է մեկ տարվա զուտ տոկոսային եկամուտի վրա՝ 2019թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ հաշվեկշռում հաշվառվող տատանվող տոկոսադրույքով ոչ առևտրային ֆինանսական ակտիվների և պարտավորությունների գծով՝ ներառյալ հեջավորման գործիքների ազդեցությունը: Կապիտալի զգայունությունը հաշվարկվում է վերագնահատելով վաճառքի համար մատչելի հաստատուն տոկոսադրույքով ակտիվները, ներառյալ հեջերի և որպես դրամական միջոցների հոսքերի հեջ բնորոշված սվոպերի ազդեցությունները, 2019թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ՝ հիմք ընդունելով տոկոսադրույքների ենթադրվող փոփոխությունները:

Կապիտալի զգայունությունը վերլուծվում է ըստ ակտիվի կամ սվոպի իրացման ժամկետների: Կապիտալ ընդհանուր զգայունությունը հիմնված է այն ենթադրության վրա, որ եկամտաբերության կորում կան զուգահեռ փոփոխություններ, մինչդեռ ըստ ժամկետների վերլուծությունը ցույց է տալիս զգայունությունը ոչ զուգահեռ փոփոխությունների նկատմամբ:

Հազար ՀՀ դրամ — 2019

			Կապիտալի զգայունություն				
Արտարժույթ	**Փոփոխություններ հիմնական տոկոսադրույքներում**	**Զուտ տոկոսային եկամտի զգայունություն**	**Մինչև 6 ամիս**	**6 ամսից 1 տարի**	**1-ից 5 տարի**	**5 տարուց ավելի**	**Ընդամենը**
Այլ փոխառու միջոցներ	Libor6+2.25% - 7.52%		18,766,457	36,860	-	-	18,803,317

Հազար ՀՀ դրամ							2018
			Կապիտալի զգայունություն				
Արտարժույթ	Փոփոխություններ հիմնական տոկոսադրույքներում	Զուտ տոկոսային եկամտի զգայունություն	Մինչև 6 ամիս	6 ամսից 1 տարի	1-ից 5 տարի	5 տարուց ավելի	Ընդամենը
Այլ փոխառու միջոցներ	Libor6+2.25% - 7.52%		14,333,652	101,104	-	-	14,434,756

Արտարժույթի ռիսկ

Արտարժույթի ռիսկն այն ռիսկն է, որ ֆինանսական գործիքների արժեքը կտատանվի արտարժույթի փոխարժեքեներում փոփոխությունների հետևանքով: Տնօրենների Խորհուրդը սահմանել է սահմանաչափեր արտարժութային դիրքերի համար: *Դիրքերը վերահսկվում են օրական կտրվածքով, և հեջավորման ռազամվարություն է օգտագործվում դիրքերը սահմանված շրջանակներում պահելու համար:*

Հետևյալ աղյուսակը ցույց է տալիս այն արտարժույթները, որոնք կարող են ազդել 2019թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Բանկի ոչ առևտրային դրամային ակտիվների և պարտավորությունների և դրանց կանխատեսված դրամական միջոցների հոսքերի վրա: Վերլուծությունը հաշվարկում է արտարժույթի ՀՀ դրամի նկատմամբ հնարավոր տատանումների ազդեցությունը, այլ փոփոխականները հաստատուն մնալու պայմանով, ֆինանսական արդյունքի մասին հաշվետվության վրա (կապված արտարժույթի նկատմամբ զգայուն ոչ առևտրային դրամային ակտիվների և պարտավորությունների իրական արժեքի փոփոխմամբ) և կապիտալի վրա (կապված արտարժութային սվոպերի և որպես դրամական միջոցների հոսքերի հեջ օգտագործված արտարժույթի ֆորվարդների պայմանագրերի իրական արժեքի փոփոխմամբ և կապիտալի գործիքների հետ): Աղյուսակում հանդիպող բացասական արժեքը արտացոլում է ֆինանսական արդյունքի մասին հաշվետվությունում կամ կապիտալում պոտենցիալ զուտ նվազում, մինչդեռ դրական արժեքը ցույց է տալիս պոտենցիալ զուտ աճ:

Հազար ՀՀ դրամ	31 դեկտեմբերի 2019թ.			31 դեկտեմբերի 2018թ.		
Արտարժույթ	Փոփոխություն արտարժույթի փոխարժեքում, տոկոս	Ազդեցությունը շահույթի վրա մինչև հարկումը	Ազդեցությունը կապիտալի վրա	Փոփոխություն արտարժույթի փոխարժեքում, տոկոս	Ազդեցությունը շահույթի վրա մինչև հարկումը	Ազդեցությունը կապիտալի վրա
ԱՄՆ դոլար	10%	(618,623)	(618,623)	10%	(84,607)	84,607
Եվրո	10%	667,038	667,038	10%	(19,496)	19,496

Բանկի արտարժույթի ռիսկի վերլուծությունն ունի հետևյալ տեսքը.

Հազար ՀՀ դրամ	31 դեկտեմբերի 2019թ.			
	ՀՀ դրամ	Ազատ փոխարկելի արժույթ	Ոչ փոխարկելի արժույթ	Ընդամենը
Ակտիվներ				
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	26,162,041	16,308,893	1,579,271	44,050,205
Պահանջներ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ	2,283,747	11,636,762	269,274	14,189,783
Հաճախորդներին տրված վարկեր և փոխատվություններ	100,493,840	75,557,433	55,340	176,106,613
Ներդրումային արժեթղթեր				
- իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող ներդրումային արժեթղթեր	24,526,738	500,786	-	25,027,524
- ամորտիզացված արժեքով չափվող ներդրումային արժեթղթեր	-	479,397	-	479,397
Հակադարձ հետգնման պայմանագրեր	5,775,586	446,525	-	6,222,111
Այլ ֆինանսական ակտիվներ	30,843	39,491	49	70,383
	159,272,795	104,969,287	1,903,934	266,146,016
Պարտավորություններ				
Թողարկված պարտքային արժեթղթեր	1,016,771	3,435,585	-	4,452,356
Հետգնման պայմանագրեր	25,431,006	192,022	-	25,623,028
Այլ փոխառու միջոցներ	40,306,296	51,322,734	294,447	91,923,477
Պարտավորություններ հաճախորդների նկատմամբ	63,840,402	47,961,443	1,565,033	113,366,878
Ստորադաս փոխառություններ	-	719,787	-	719,787
Այլ ֆինանսական պարտավորություններ	2,312,271	287,510	85,466	2,685,247
Ընդամենը	132,906,746	103,919,081	1,944,946	238,770,773
Ընդամենը ածանցյալ ֆինանսական գործիքների ազդեցությունը	56,172	(59,340)	1,377	(1,791)
Զուտ դիրք 2019թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	26,422,221	990,866	(39,635)	27,373,452
Պարտքային ռիսկ պարունակող պարտավորություններ 2019թ. դեկտեմբերի 31-ին	4,939,035	7,037,552	95,615	12,072,202

Հազար ՀՀ դրամ				31 դեկտեմբերի 2019թ.
	ՀՀ դրամ	Ազատ փոխարկելի արժույթ	Ոչ փոխարկելի արժույթ	Ընդամենը
Ընդամենը ֆինանսական ակտիվներ	115,959,892	90,936,165	1,832,022	208,728,079
Ընդամենը ֆինանսական պարտավորություններ	90,841,890	94,012,548	1,722,765	186,577,203
Ընդամենը ածանցյալ ֆինանսական գործիքների ազդեցությունը	(2,040,328)	2,035,356	22,440	17,468
Զուտ դիրք 2018թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	23,077,674	(1,041,027)	131,697	22,168,344
Պարտքային ռիսկ պարունակող պարտավորություններ 2018թ. դեկտեմբերի 31-ին	7,388,572	14,079,947	30,955	21,499,474

Ազատ փոխարկելի արտարժույթը հիմնականում ներկայացնում է ԱՄՆ դոլարը, բայց ներառում է նաև ՏՀԶԿ-ի երկրների արժույթները: Ոչ փոխարկելի գումարները վերաբերվում են ԱՊՀ երկրների արժույթներին, բացառությամբ Հայաստանի Հանրապետությանը:

37.3 Իրացվելիության ռիսկ

Իրացվելիության ռիսկը կապված է Բանկի ֆինանսական պարտավորությունները ժամանակին մարելու կարողությամբ նորմալ և սթրեսային իրավիճակներում: Այս ռիսկի զսպման նպատակով Բանկը ներգրավում է լրացուցիչ ֆինանսական միջոցներ, ի լրումն իր հիմնական ավանդային բազայի, կառավարում է ակտիվները հաշվի առնելով իրացվելիության ռիսկը և վերլուծում է ապագա դրամական միջոցների հոսքերը և իրացվելիությունը օրական կտրվածքով: Սա ներառում է նաև սպասվելիք դրամական միջոցների հոսքերի գնահատումները և բարձր իրացվելի ապահովվածության հասանելիությունը, որն անհրաժեշտության դեպքում կարող է օգտագործվել լրացուցիչ ֆինանսավորում ստանալու նպատակով:

Բանկը պահում է բարձր իրացվելի և ապակենտրոնացված ակտիվների պորտֆել, որը կարող է հեշտությամբ կանխիկացվել դրամական միջոցների հոսքերի չկանխատեսված ընդհատման դեպքում: Բանկն ունի նաև ապահով վարկային գծեր, որ նա կարող է օգտագործել իրացվելիության կարիքները բավարարելու համար: Իրացվելիության դիրքը գնահատվում և կառավարվում է տարբեր սցենարների դեպքում, հաշվի առնելով սթրես գործոնները կապված շուկայի հետ ընդհանրապես և Բանկի հետ մասնավորապես:

Բանկի իրացվելիության կառավարումը պահանջում է հաշվի առնել իրացվելի ակտիվների այն մակարդակը, որն անհրաժեշտ է պարտավորությունները մարելու համար ըստ ժամկետների, ապահովել ֆինանսավորման տարբեր աղբյուրների հնարավորությունը, ֆինանսավորման արտակարգ պլանի առկայությունը և վերահսկել հաշվեկշռային իրացվելիության նորմատիվները կանոնակարգային պահանջներին համապատասխան: Բանկը հաշվարկում է իրացվելիության ցուցանիշները ՀՀ կենտրոնական բանկի պահանջներին համապատասխան:

Դեկտեմբերի 31-ի դրությամբ ցուցանիշները հետևյալն են.

	Աուդիտ չարված	
	2019, %	2018, %
Ն21- Ընդհանուր իրացվելիություն (Բարձր իրացվելի ակտիվներ/ Ընդհանուր ակտիվներ)	21.27	19.05
Ն22- Ընթացիկ իրացվելիություն (Բարձր իրացվելի ակտիվներ/ցպահանջ պարտավորություններ)	112.48	94.92

Ֆինանսական պարտավորությունների վերլուծությունը՝ ըստ մինչև մարումը մնացած ժամկետների

Ստորև ներկայացվում է 2019թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Բանկի չզեղչված ֆինանսական պարտավորությունների բաշխումը՝ հաշվեկշռի ամսաթվից մինչև պայմանագրերում նշված մարմանը մնացած ժամկետների համաձայն: Տե՛ս ծանոթագրություն 36-ը այս պարտավորությունների մարման սպասվելիք ժամկետների համար: Ցպահանջ վճարումները դասակարգված են այն ենթադրությամբ, որ վճարումը կպահանջվի անմիջապես: Սակայն Բանկի ղեկավարությունը կարծում է, որ շատ հաճախորդներ անմիջապես վճարում չեն պահանջի, և աղյուսակը չի արտացոլում սպասվող դրամական միջոցների հոսքերը, ինչպես նշված է Բանկի կողմից ավանդների պահպանման պատմության մեջ:

Հազար ՀՀ դրամ

	31 դեկտեմբերի 2019թ.					
	Ցպահանջ կամ մեկ ամսից քիչ	1 - 12 ամիս	1-5 տարի	5 տարուց ավելի	Ընդամենը համախառն արտահոսք	Հաշվեկշռային արժեք
Ոչ ածանցյալ ֆինանսական պարտավորություններ						
Թողարկված պարտքային արժեթղթեր	41,281	1,226,696	3,746,716	-	5,014,693	4,452,356
Հետգնման պայմանագրեր	25,668,669	1,301	-	-	25,669,970	25,623,028
Այլ փոխառու միջոցներ	7,028,555	26,930,074	69,096,583	8,006,695	111,061,907	91,923,477
Պարտավորություններ հաճախորդների նկատմամբ	52,608,353	49,810,728	18,439,210	756,091	121,614,382	113,366,878
Ստորադաս փոխառություններ	3,548	39,625	892,478	86,464	1,022,115	719,787
Այլ ֆինանսական պարտավորություններ	886,330	1,066,481	998,703	69,762	3,021,276	2,685,247
Ընդամենը չզեղչված ոչ ածանցյալ ֆինանսական պարտավորություններ	86,236,736	79,074,905	93,173,690	8,919,012	267,404,343	238,770,773
Ածանցյալ ֆինանսական պարտավորություններ						
Ածանցյալ գործիքներ						
Ներհոսք	180,313	-	-	-	180,313	180,313
Արտահոսք	(186,520)	-	-	-	(186,520)	(186,520)

Հազար ՀՀ դրամ

	Ցպահանջ կամ մեկ ամսից քիչ	1 - 12 ամիս	1-5 տարի	5 տարուց ավելի	Ընդամենը համախառն արտահոսք	Հաշվեկշռային արժեք
						31 դեկտեմբերի 2019թ.
Արտարժույթի սվոպ պայմանագրեր						
Ներհոսք	7,860,161	-	-	-	7,860,161	7,860,161
Արտահոսք	(7,855,745)	-	-	-	(7,855,745)	(7,855,745)
Պարտքային ռիսկ պարունակող պարտավորություններ	99,582	3,360,630	7,275,143	1,336,847	12,072,202	12,072,202

Հազար ՀՀ դրամ

	Ցպահանջ կամ մեկ ամսից քիչ	1 - 12 ամիս	1-5 տարի	5 տարուց ավելի	Ընդամենը համախառն արտահոսք	Հաշվեկշռային արժեք
						31 դեկտեմբերի 2018թ.
Ոչ ածանցյալ ֆինանսական պարտավորություններ						
Թողարկված պարտքային արժեթղթեր	18,473	123,583	2,061,973	-	2,204,029	2,060,960
Հետգնման պայմանագրեր	20,209,441	15,776	-	-	20,225,217	20,519,048
Այլ փոխառու միջոցներ	28,259,502	22,409,794	17,616,430	2,880,990	71,166,716	64,200,798
Պարտավորություններ հաճախորդների նկատմամբ	45,892,659	40,339,083	13,535,828	2,433,801	102,201,371	95,828,768
Ստորադաս փոխառություններ	51,349	330,810	1,441,737	4,120,129	5,944,025	3,382,149
Այլ ֆինանսական պարտավորություններ	585,480	-	-	-	585,480	585,480
Ընդամենը չզեղչված ոչ ածանցյալ ֆինանսական պարտավորություններ	95,016,904	63,219,046	34,655,968	9,434,920	202,326,838	186,577,203
Ածանցյալ ֆինանսական պարտավորություններ						
Ածանցյալ գործիքներ						
Ներհոսք	124,089	-	-	-	-	124,089
Արտահոսք	(122,680)	-	-	-	-	(122,680)
Արտարժույթի սվոպ պայմանագրեր						
Ներհոսք	11,739,048	-	-	-	11,739,048	11,739,048
Արտահոսք	(11,721,580)	-	-	-	(11,721,580)	(11,721,580)
Պարտքային ռիսկ պարունակող պարտավորություններ	81,114	12,830,287	6,842,354	1,725,710	21,482,006	21,480,597

Հաշվի առնելով 2018թ. Բանկի կողմից պայմանագրային պահանջների խախտումները փոխառու միջոցների մասով (տես ծանոթագրություն՝ 26), Բանկը համապատասխան փոխառու միջոցները, ինպես նաև մնացած փոխառու միջոցների մնացորդները 2018թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ, ընդամենը 24,059,690 հազար ՀՀ դրամ գումարի, դասակարգել է որպես ցպահանջ (պայմանագրային պարտավորությունների փոխադարձ կատարման դրույթների շնորհիվ):

2018 թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ և մինչև ապրիլի 25-ն ընկած ժամանակահատվածում միջազգային ֆինանսական կազմակերպություններից ստացված պայմանագրային պահանջների խախտումով բոլոր վարկերը մարվել են համաձայնագրերում սահմանված ժամանակացույցի համաձայն, առանց ուշացումների՝ 252,010,616 ՀՀ դրամի չափով: Ինչպես նաև Բանկը ստացել է զիջում երեք վարկատուներից երկուսի կողմից պայմանագրային որոշ պահանջների խախտման մասով: Երրորդ վարկատուի կողմից Բանկը ստացել է էլեկտրոնային հաստատում առ այն, որ վարկատուն չի պահանջելու վարկի վաղաժամկետ մարում:

37.4 Գործառնական ռիսկ

Գործառնական ռիսկը ուղղակի կամ անուղղակի կորստի ռիսկն է, որն առաջանում է պատճառների լայն բազմազանությունից՝ կապված Բանկի ֆինանսական գործիքների մեջ ներգրավվածության, գործընթացների, անձնակազմի, տեխնոլոգիաների և ենթակառուցվածքների հետ, և արտաքին գործոններից՝ բացառությամբ վարկային, շուկայական և իրացվելիության ռիսկերի, ինչպիսիք են իրավական և կարգավորիչ պահանջները և կորպորատիվ վարքագծի ընդհանուր ընդունված չափանիշները:

Բանկի նպատակն է կառավարել գործառնական ռիսկը՝ ֆինանսական վնասներից և հեղինակության կորստից խուսափումը հավասարակշռելով ռիսկի կառավարման ծախսային արդյունավետության հետ:

Գործառնական ռիսկի կառավարմանն ուղղված վերահսկողության մշակման և իրականացման հիմնական պատասխանատվությունը կրում է Բանկի գործադիր մարմինը: Այս պատասխանատվությունը ուղեկցվում է գործառնական ռիսկի կառավարման համար համընդհանուր չափանիշների մշակմամբ հետևյալ ոլորտներում՝

- պարտականությունների համապատասխան տարանջատման պահանջներ, այդ թվում գործարքների անկախ հաստատում,
- գործարքների համաձայնեցման և մոնիթորինգի պահանջներ,
- կարգավորիչ և այլ իրավական պահանջների համապատասխանեցում, ներառյալ ՀՀ ԿԲ ներքին վերահսկողության համակարգի վերաբերյալ նվազագույն պահանջները,
- վերահսկողական մեխանիզմների և ընթացակարգերի փաստաթղթավորում,
- առաջացած գործառնական ռիսկերի պարբերաբար գնահատման պահանջներ, ինչպես նաև ռիսկերի կառավարմանն ուղղված ընթացակարգերի համապատասխանություն,
- գործառնական կորուստների զեկուցման պահանջներ և առաջարկվող մեղմացուցիչ գործողություններ,
- արտակարգ իրավիճակների ծրագրերի մշակում,
- վերապատրաստում և մասնագիտական զարգացում,
- էթիկայի և գործարար չափանիշներ,
- ռիսկերի մեղմացում:

Բանկի ստանդարտների համապատասխանությունը ուղեկցվում է ներքին աուդիտի կողմից իրականացվող պարբերական դիտարկումներով: Ներքին աուդիտի դիտարկումների արդյունքերը քննարկվում են Բանկի ղեկավարության այն ներկայացուցչի հետ, որին դրանք վերաբերում են: Դիտարկումների ամփոփագրերը ներկայացվում են Խորհրդին:

38 Ֆինանսավորման գործունեությունից դրամական միջոցների հոսքերի համադրում

Բանկի պարտավորություններում ֆինանսավորման գործունեությունից առաջացող փոփոխությունները կարող են դասակարգվել հետևյալ կերպ.

Հազար ՀՀ դրամ						2019
	Արտոնյալ բաժնետոմսերի թողարկում	Թողարկված պարտքային արժեթղթեր	Ստորադաս փոխառություններ	Այլ փոխառու միջոցներ	Վճարված շահաբաժիններ	Ընդամենը
2018թ. հունվարի 1-ի դրությամբ	3,000,000	2,060,960	3,382,149	64,200,798	235,498	72,879,405
Դրամային հոսքերից	*3,369,000*	*2,433,015*	*(2,655,419)*	*27,765,238*	*(909,505)*	*30,002,329*
Վճարումներ	-	(1,594,443)	(3,375,206)	(7,151,820,956)	(909,505)	(7,157,700,110)
Ստացված գումար	3,369,000	4,027,458	719,787	7,179,586,194	-	7,187,702,439
Ոչ դրամային հոսքերից	-	*(41,619)*	*(6,943)*	*(42,559)*	*1,059,701*	*968,580*
Փոխարժեքային տարբերությունից օգուտ/վնաս	-	(27,145)	(21,488)	(157,928)	-	(206,561)
Հաշվեգրված տոկոսաներ	-	(14,474)	14,545	115,369	-	115,440
Վերադասակարգում	-	-	-	-	1,059,701	1,059,701
2018թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	6,369,000	4,452,356	719,787	91,923,477	385,694	103,850,314

Հազար ՀՀ դրամ						2018
	Արտոնյալ բաժնետոմսերի թողարկում	Թողարկված պարտքային արժեթղթեր	Ստորադաս փոխառություններ	Այլ փոխառու միջոցներ	Վճարված շահաբաժիններ	Ընդամենը
2018թ. հունվարի 1-ի դրությամբ	-	1,068,764	6,409,601	39,531,118	104,911	47,114,394
Դրամային հոսքերից	*3,000,000*	*999,557*	*(3,000,701)*	*24,307,678*	*(379,731)*	*24,926,803*
Վճարումներ		(1,228,479)	(3,550,117)	(12,513,319)	(379,731)	(17,671,646)
Ստացված գումար	3,000,000	2,228,036	549,416	36,820,997	-	42,598,449
Ոչ դրամային հոսքերից	-	*(7,804)*	*(25,326)*	*546,489*	*510,318*	*1,023,677*
Հաշվեգրված տոկոսաներ	-	(7,804)	(25,326)	546,489	-	513,359
Վերադասակարգում	-	-	-	-	510,318	510,318
2018թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	3,000,000	2,060,960	3,382,149	64,200,798	235,498	72,879,405

39 Կապիտալի համարժեքություն

Բանկը պահպանում է ակտիվ կառավարվող կապիտալի կառուցվածք բանկային գործունեությանը բնորոշ ռիսկերը ծածկելու համար: Բանկի կապիտալի համարժեքությունն այլ միջոցների հետ մեկտեղ վերահսկվում է նաև օգտագործելով Բանկային Վերահսկողություն Բազելյան Հանձնաժողովի, ինչպես նաև ՀՀ կենտրոնական բանկի կողմից հաստատված կանոնները և նորմատիվները:

Բանկի կապիտալի կառավարման առաջնային նպատակներն են համոզվել, որ Բանկի կապիտալը համապատասխանում է հաստատված պահանջներին, և որ Բանկը պահպանում է ամուր վարկային վարկանիշ և առողջ կապիտալի ցուցանիշներ՝ իր գործունեությունը ամրապնդելու և բաժնետերերի շահույթը առավելագույնի հասցնելու համար:

Բանկը կառավարում է իր կապիտալի կառուցվածքը և իրականացնում համապատասխան ճշգրտումները տնտեսական պայմանների և իր գործունեության ռիսկերի փոփոխությանը համապատասխան: Կապիտալի կառուցվածքը պահպանելու կամ փոփոխելու համար Բանկը կարող է փոփոխել բաժնետերերին վճարվող շահաբաժինների գումարը, կապիտալը վերադարձնել բաժնետերերին կամ բաժնետոմսեր թողարկել: Նախորդ տարիների համեմատ նպատակներում, քաղաքականությունում և գործընթացներում փոփոխություններ չեն եղել:

ՀՀ կենտրոնական բանկի կողմից ընդհանուր կապիտալի և ռիսկով կշռված ակտիվների միջև նվազագույն հարաբերակցությունը սահմանվում է 12%:

Ընդհանուր կապիտալը կազմված է հիմնական կապիտալից, որը ներառում է բաժնետիրական կապիտալը, էմիսիոն եկամուտը, չբաշխված շահույթը, այդ թվում ընթացիկ տարվա շահույթը, գլխավոր պահուստը: Կապիտալի մեկ այլ բաղադրիչ է լրացուցիչ կապիտալը, որը ընդգրկում է վերագնահատման պահուստները և ստորադաս փոխառությունը:

Ռիսկով կշռված ակտիվները չափվում են ըստ ռիսկերի կշիռների՝ դասակարգված համաձայն վարկային, շուկայական և գործառնական ռիսկերի գնահատման:

2019 և 2018թթ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ընդհանուր կապիտալի, ռիսկով կշռված ակտիվների և կապիտալի համարժեքության նորմատիվի չափերը՝ հաշվարկված համաձայն ՀՀ կենտրոնական բանկի պահանջների, ներկայացված է ստորև.

	Աուդիտ չարված	
Հազար ՀՀ դրամ	**31 դեկտեմբերի** 2019թ.	**31 դեկտեմբերի** 2018թ.
Հիմնական կապիտալ	30,883,065	26,735,335
Լրացուցիչ կապիտալ	6,025,603	6,758,956
Ընդամենը՝ ընդհանուր կապիտալ	36,908,668	33,494,291
Ռիսկով կշռված ակտիվներ	259,937,920	217,367,488
Կապիտալի համարժեքության նորմատիվ	14.20%	15.41%

Ժամանակաշրջանի ընթացքում Բանկը պահպանել է կապիտալի համարժեքության նկատմամբ բոլոր պահանջները:

Նպատակ ունենալով խթանել բանկային համակարգի գործունեության արդյունավետության բարձրացմանը, բանկային համակարգի կայունության ու տնտեսական տարբեր իրավիճակներում շոկերին դիմակայելու ունակության ամրապնդմանը, ինչպես նաև նպաստել բանկային համակարգի կողմից առավել արդյունավետ և մատչելի բանկային ծառայությունների մատուցմանը, Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհուրդը 2018թ.

որոշում է կայացրել 2019 թվականի հունվարի 1-ի դրությամբ և դրանից հետո բանկերի համար ընդհանուր նորմատիվային կապիտալի նվազագույն չափը սահմանել 30.000.000 հազար Հայաստանի Հանրապետության դրամ:

40 Վերլուծություն ըստ սեգմենտների

Բանկի գործառնությունները բավականին ինտեգրացված են և կազմում են մեկ գործարար սեգմենտ ըստ ՖՀՄՍ 8 'Գործառնական սեգմենտներ' ստանդարտի պահանջների:

Արտաքին հաճախորդներից ստացվող եկամտի մեծ մասը վերաբերում է Հայաստանի Հանրապետության ռեզիդենտներին: Բանկը չունի առանձին հաճախորդ, որից ստանում է իր հասույթի 10%-ը կամ ավելին:

Բանկի ոչ ընթացիկ ակտիվները հիմնականում գտնվում են Հայաստանի Հանրապետությունում:

41 Հաշվետու ժամանակաշրջանից հետո տեղի ունեցած իրադարձություններ

2020թ. մարտ ամսին Առողջապահության համաշխարհային կազմակերպությունը 2019թ. դեկտեմբեր ամսին Չինաստանում բռնկված կորոնավիրուսը (COVID-19) դասակարգեց որպես համաճարակ: Կորոնավիրուսի բռնկման վերջնական ազդեցությունն այս պահին անհայտ է, սակայն այն արդեն իսկ էական ազդեցություն է ունեցել համաշխարհային տնտեսության և խոշոր ֆինանսական շուկաների վրա: COVID-19-ի հետ կապված զարգացող իրավիճակը կարող է որոշակի ազդեցություն ունենալ Բանկի գործառնությունների ծավալի վրա: Այն կարող է արտահայտվել ինչպես ֆիզիկական անձ, այնպես էլ իրավաբանական անձ հանդիսացող վարկառուների կողմից վարկային հարաբերությունների արդյունքում ստանձնած իրենց պարտավորությունները կատարելու անկարողությամբ և այլ հանգամանքներով:

2020թ. մարտի 16-ին Հայաստանի Հանրապետության կառավարությունը հայտարարել է երկրում արտակարգ իրավիճակ, որը կտևի մինչև 2020թ. հունիսի 13-ը: Տվյալ ֆինանսական հաշվետվությունները չեն արտացոլում վերը նկարագրվածի հնարավոր ազդեցությունը: